



# Զիաց մեր հանապազորդ

ՀՈԿՏԵՄԲԵՐ | ՆՈՅԵՄԲԵՐ | ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023

ԼԴ ՏԱՐԻ

Դ ԵՌԱՄՍՑԱԿ

Մեր խորին շնորհակալությունն ենք Հայտնում Radio Bible Class ընկերությանը, որի թույլտվությամբ Our Daily Bread գրքույկից թարգմանել ենք Հաջորդ էջերի խորհրդաժումները:

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
AMAA

31 West Century Road  
Paramus, New Jersey 07652, USA  
E-mail: amaa@amaa.org, Website: [www.amaa.org](http://www.amaa.org)

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության  
Հայաստանի մասնաճյուղ  
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78  
Էլփոստ՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am)  
Կայքէջ՝ [www.amaa.am](http://www.amaa.am)

Եվ Աստված ասաց.« Թոչուններ թոշեն երկրի վրա, երկնքի հաստատության միջով»: (Ծն. 1. 20)

## ՆՐԲԱԳԵԴԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ

**Մ**իջազգային հետազոտական մի խումբ ստեղծել է անօդաչու թոչող սարք, որն ընդորինակում է թոչունի թռիչքը: Սրբնթաց թոչունները կարողանում են ժամում մինչև 90 մղոն արագություն զարգացնել, սավառնել, վար խոյանալ ու կտրուկ կանգնել: Ուղղաթե անօդաչուն, սակայն, թոչունին չի հասնում: Հետազոտողներից մեկը գրել է. «Թոչուններն ունեն բազում մկաններ, որոնք թույլ են տալիս արագ թոչել, թևերը ծալել, ոլորել, փետուրները բանալ և ուժը խնայել»: Նա ընդունել էր, որ խմբի ջանքերը ցույց են տվել «կենսաբանական թոչունի թռիչքի տասը տոկոսը միայն»:

Աստված մեր աշխարհի արարածներին տվել է տարատեսակ զարմանալի կարողություններ: Դրանց դիտարկումն ու ուսումնասիրությունը կարող են իմացության աղբյուր դառնալ մեզ համար: Օրինակ մրջյունները սովորեցնում են ամռանը ապրուստի միջոց հավաքել, ճագարները՝ ապահով ապաստանի կարևորությունը, իսկ մորեխները՝ որ քանսկի մեջ է ուժը (Առ. 30. 25-27): Աստվածաշունչն ասում է, որ «Աստված իր զորությամբ կերտեց երկիրը» (Եր. 10.12), և արարչագործության յուրաքանչյուր քայլի վերջում հաստատեց, որ իր արածը «բարի է» (Ծն. 1. 4, 10, 12, 18, 21, 25, 31): Նույն Աստվածը, որ ստեղծել է թոչուններին, որպեսզի «թոչեն երկրի վրա, երկնքի հաստատության միջով» (Հմ. 20), մեզ հնարավորություն է տվել իր իմաստությունը միացնել մեր սեփական դատողություններին: Այսօր մտածենք, թե ինչպես կարող ենք սովորել բնությունից, նրա նրբագեղ ձեւավորումներից:

**Աղոթք - ՍիրելիՇայր, բաց աչքերս թո իմաստնության հանդեպ, երբ նայում եմ թո ստեղծագործությանը: Անեն:**

**Ասծոն սիամէելի ստեղծագործության ո՞ր մասն է հիացնում ենք:  
Թող այդ մեկն էլ աղացուցի Նրա իմաստնությունը:**

Աստվածածունք ՄԵԿ ՏԱՐՈՒՄ | Եսայի 11-13 և Եփեսացի 4

Քանզի նրա ստեղծագործությունն ենք՝ Քրիստոս Յիսուսով հաստատված բարի գործերի համար: (Եփ. 2.10)

## ԳԼՈՒԽԳՈՐԾՈՅՑԸ՝ ՆԵՐՍԻՑ

**Ա**մերիկացի գրող Արթուր Բրուքսը «Ատլանտիկան» ստեղծագործության մեջ պատմում է Թայվանի ազգային պալատի թանգարան կատարած իր այցելության մասին: Այդ թանգարանում է գտնվում չինական արվեստի աշխարհի խոչընկավառագործություններից մեկը: Երբ թանգարանի ուղեկցորդը նրան հարցը է: «Ինչպե՞ս կպատկերացնեք դեռ չսկսված արվեստի գործը», Բրուքսը պատասխանել է: «Կարծում եմ՝ դատարկ կտավի տեսքով»: Ուղեկցորդն ասել է: «Դիտարկման մեկ այլ տարբերակ էլ կա. արվեստն արդեն գոյություն ունի, և արվեստագետների գործը պարզապես այն բացահայտելն է»:

Եփեսացիներին 2.10-ում նշված «ստեղծագործություն» բառը, որ երբեմն թարգմանվում է որպես «մշակում», «ճարտարություն» կամ «գլուխգործոց», զունարեն րօւմա-ն է, որից էլ ստանում ենք poetry՝ «բանաստեղծություն» բառը:

Աստված մեզ ստեղծել է որպես արվեստի գործեր, կենդանի բանաստեղծություններ: Բայց մեր արվեստը մթագնած է: «գուք մեռած էիք հանցանքների ու մեղքերի պատճառով» (Հմ.1): Թանգարանի աշխատակիցի խոսքերը վերափոխելով՝ ասենք «Մեր արվեստն արդեն իսկ կա, և աստվածային արվեստագետի գործն է բացահայտել այն»: Իսկապես, Աստված վերականգնում է մեզ՝ իր գլուխգործոցները. «Աստված, որ հարուստ է ողորմությամբ,...մեզ կյանք տվեց» (Հմ.4-5): Դժվարությունների ու մարտահրավերների միջով անցնելով՝ միմիթարվենք, որ երկնային արվեստագետն աշխատում է՝ բացահայտելու իր գլուխգործոցը. «Որովհետև Աստված է, որ ձեր մեջ ներգործում է կամենալն ու կատարելն ըստ իր բարեհաճ ծրագրի» (Փիլ. 3.13):

**Աղոթք** - Արարիչ Աստված, շնորհակալ եմ, որ ինձ դարձրել ես Ձո գլուխգործոցներից մեկը: Անեն:

**Որո՞նց են այն ուղիները, որոնցով անցնելիս դու, որդես Աստծո ստեղծագործություն, մթագնում ես: Բայց վսահ եղի՛ր, որ Նա գործում է ո՞ո կյանքում:**

Այժմ, երբ նայում ենք հայելու մեջ, հստակ չենք տեսնում, իսկ այն ժամանակ կտեսնենք դեմ առ դեմ: (Ա. Կորնթ. 13. 12)

## ԵՍ ԿԱՐՈՂ ԵՍ ՏԵՍՆԵԼ ՔԵզ

Ճ մուտ ակնաբույժն օգնեց, որ երեքամյա Անդրեասն սկսի օգտագործել իր առաջին ակնոցը: Նա երեխային ասաց: «Նայի՛ր հայելու մեջ»: Անդրեասը նայեց իր արտացոլանքին և ուրախ դարձավ դեպի հայրը: Վերջինը, մեղմորեն մաքրելով մանկան արցունքները, հարցրեց, թե ինչ պատահեց: Անդրեասը գրկեց հորն ու ասաց. «Ես կարող եմ տեսնել քեզ»: Ապա թեքելով հայացքը՝ կրկնեց նույն բանը:

Երբ աղոթքով ուսումնասիրում ենք Աստվածաշունչը, Սուրբ Հոգին մեզ աչքեր է տալիս՝ տեսնելու Հիսուսի՝ «աներեւույթ Աստծո պատկերը» (Կող. 1.15): Սակայն նույնիսկ Սուրբ Գրքի միջոցով գիտելիքներ ամբարելիս կարող ենք տեսնել Աստծո անչափելի անսահմանության մեկ նշույլը՝ հավիտենականության այս կողմը: Երբ երկրի վրա եղած մեր ժամանակն ավարտվի, կամ երբ Հիսուսը կատարի վերադառնալու իր խոստումը, մենք հստակ «կտեսնենք նրան դեմ առ դեմ» (Ա.Կորնթ. 13.12):

Քրիստոսին երես առ երես տեսնելու ուրախառիթ պահին մենք հատուկ ակնոցի կարիք չունենք և կճանաչենք նրան այնպես, ինչպես գիտենք յուրաքանչյուրս՝ Քրիստոսի եկեղեցու սիրելի անդամներս: Սուրբ Հոգին մեզ կներչնչի այն հավատքը, հույսն ու սերը, որոնց կարիքն ունենք, որպեսզի ամուր մնանք, միշտ որ նայենք մեզ սիրող Փրկչին և ասենք. «Ես կարող եմ տեսնել Քեզ, Հիսուս: Ես կարող եմ տեսնել Քեզ»:

**Աղոթք - Տե՛ր Յիսուս, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ Քեզ ավելի պարզ տեսնեմ ու ճանաչեմ, երբ հավատարմորեն քայլում են Քեզ հետ հիմա և մինչև այն օրը, երբ Դու ինձ կկանչես կամ նորից կգաս: Ամեն:**

**Երբ կարդում ենք Ասվածաշունչը, Սուրբ Յոգին մեզ հայտնում է ծմբարտություններ, որոնց միջոցով մենք փոխվում ենք և Ասծոն գիտությամբ ածում:**

Ամեն ոք, ով հավատում է, որ Յիսուսն է Քրիստոսը, Աստծուց է ծնված: (Ա.Հովհ. 5.1)

## ԿՅԱՆՔ ԳՏՆԵԼ

**Բ**րետափի համար բնական էր քրիստոնեական քոլեջ հաճախելն ու Աստվածաշումն սերտելը: Նա ամբողջ կյանքում եղել էր մարդկանց կողքին, ովքեր Հիսուսին ճանաչում էին տանը, գպրոցում և եկեղեցում: Եվ նույնիսկ իր քոլեջական ուսումն էր համարում քրիստոնեական աշխատանքի մի մաս:

Սակայն քսանմեկ տարեկանում, մի փոքրիկ գյուղական եկեղեցում լսելով տեղի հովվի քարոզը Հովհաննեսի Անամակից, նա ապշեցուցիչ բացահայտում արեց: Իմացավ, որ ինքը կախված էր գիտելիքներից ու կրոնական թակարդներից և որ Հիսուսով իսկական փրկություն գեռ չի ստացել: Բրետափի հասկացավ, որ այդ օրը Քրիստոսը թակում էր իր սիրաը սթափեցուցիչ պատգամով. «Դու ինձ չես ճանաչում»: Հովհաննես առաքյալի պատգամը պարզ է. «Ամեն ոք, ով հավատում է, որ Հիսուսն է Քրիստոսը, Աստծուց է ծնված» (Ա.Հովհ. 5.1): Մենք կարող ենք «Հաղթել աշխարհին» միայն Հիսուսին հավատալով (Հմ.4), -ասում է Հովհաննեսը: Կարևորը ոչ թե գիտելիքն է Նրա մասին, այլ խոր ու անկեղծ հավատը այն բանի հանդեպ, ինչ նա արեց խաչի վրա մեզ համար: Այդ օրը Բրետափի հաստատեց իր հավատը Հիսուսի հանդեպ:

Այսօր Բրետափի խոր սերը Հիսուսի և Նրա տված փրկության հանդեպ գաղտիք չէ: Ավելին, այն պարզ ու բարձր հնչում է յուրաքանչյուր անգամ, երբ նա կանգնում է ամբիոնի մոտ և քարոզում՝ որպես Հովիվ:

«Աստված մեզ հավիտենական կյանք տվեց, և այս կյանքը նրա Որդու մեջ է: Ով Որդուն ունի, նա կյանք ունի» (Հմ. 11-12): Ի՞նչ միախարիչ հիշեցում է սա:

**Աղոթք** - Տե՛ր Յիսուս, շնորհակալ են փրկության պարգևի և այն մարդկանց համար, ովքեր ինձ ուղղություն են տվել, որ հավատամ քեզ: Ամեն:

**Մեր հավատի ուսմության մեջ ի՞նչն է ստիմել, որ ընդունենք,**  
**թե Յիսուսի կարիքն ունեն:**

Երկուսն էլ ինձ ձգում են. հեռանալ այս կյանքից և քրիստոսի հետ լինել....բայց մարմնի մեջ իմ մնալը ծեզ ավելի է հարկավոր: (Փիլ.1. 23-24)

## ՊԱՏՐԱՍ ԳՆԱԼՈՒ

**Պ**ատաժահրի համավարակի ժամանակ շատերը կորցրին իրենց սիրելիներին: 2020 թ. նոյեմբերի 27-ին մեր ընտանիքում էլ 95 տարեկան տատս մահացավ, թեև ոչ այդ վարակից: Ինչպես շատ այլ ընտանիքներ, մենք ևս չկարողացանք հավաքվել սգալու, մեր հարգանքն ու վիշտն արտահայտելու, միմյանց քաջալերելու: Փոխարենը այլ միջոցներ օգտագործեցինք մեր հարազատի ազդեցությունը մեզ վրա նշելու համար և միսիթարվեցինք տատիկիս այն պնդումով, թե ինքը պատրաստ է, նույնիսկ ցանկանում է գնալ Աստծո տուն: Մեր այդ հանգստությունը գալիս էր նաև նրանից, թե ինչպես էր նա դիմագրավում մահվանը:

Հնարավոր մահվանն սպասելիս Պողոսը գրել է. «Որովհետեւ ինձ համար կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ:....չգիտեմ, թե որն ընտրեմ: Երկուսն էլ ինձ ձգում են. հեռանալ այս կյանքից և Քրիստոսի հետ լինել, որ շատ ավելի լավ է. բայց մարմնի մեջ իմ մնալը ձեզ ավելի է հարկավոր» (Փիլ.1. 23-24): Նույնիսկ մնալու և ուրիշներին օգնելու օրինական ցանկությամբ Պողոսը ավելի մեծ ձգտում ուներ, դեպի Քրիստոսն ու երկնային տաճք նրա հետ լինելը:

Այսպիսի վստահությունը փոխում է մի կյանքից մյուսն անցնելու պահը: Մեր հույսը կարող է միսիթարել մարդկանց կորսույան ժամանակ: Թեև մենք ցավում ենք մեր սիրեցյալների կորստի համար, Հիսուսին հավատացողները չեն տիրում, ինչպես նրանք, ովքեր «Հույս չունեն» (Ա. Թես. 4.13): Իրական հույսը նրան ճանաչողների սեփականությունն է:

**Աղոթք - Ամենայն հույսի Աստված, Խնդրում եմ իիշեցրու ինձ  
Հիսուսի մահվան հաղթանակի մասին: Անեն:**

**Աւխարհը սղառնում է անհուսության իրողությամբ, սակայն  
Տեր Հիսուսի սկած հույսը փոխում է մեր հայացը կյանքի  
դայլարի վերաբերյալ:**

Որովհետև հենց դրա համար ենք տքնում և պայքարում, որովհետև հույս ենք դրել կենդանի Աստծո վրա: (Ա.Տիմ. 4.10)

## ԻՆՉԸ ԿԱՐՈՂ Է ԱՎԵԼԻ ԼԱՎ ԼԻՆԵԼ

**Ե**րիկը քսան տարեկանից անց էր, երբ լսեց իր նկատմամբ Հիսուսի սիրո մասին: Նա սկսեց եկեղեցի հաճախել, որտեղ հանդիպեց մեկին, որն օգնեց ավելի լավ ճանաչել Քրիստոսին: Շատ չանցած՝ նրա վերահսկիչն իրեն հանձնարարեց ուսուցանել եկեղեցու տղաների խմբին: Տարիների ընթացքում Աստված էրիկի սիրտը մղեց օգնելու վտանգավոր ճանապարհի վրա հայտնված իր համաքաղաքացի երիտասարդներին, տարեցներին, իր գրացիներին ու բոլոր կարիքավորներին: Հիմա արդեն հիսունամյա էրիկը շատ երախտապարտ է, որ իրեն շուտ են սովորեցրել ծառայել Աստծո փառքի համար: «Իմ սիրտը լցված է բաժնեկցելու հույսով, որ ես գտա Հիսուսի մեջ: Ի՞նչը կարող է ավելի լավ լինել, քան Աստծուն ծառայելը», - ասում է նա: Տիմոթեոսը մանուկ էր, երբ նրա մայրն ու տատը մեծ ազդեցություն ունեցան հավատի առումով (Բ.Տիմ. 1.5): Եվ արդեն չափահաս երիտասարդ էր, երբ հանդիպեց Պողոս առաքյալին, որը, նրա մեջ տեսնելով Աստծուն ծառայելու ներուժը, հրավիրեց միանալ իր ճամփորդությանը (Գործք 16.1-3): Պողոսը դարձավ Տիմոթեոսի դաստիարակը ծառայության մեջ ու կյանքում: Խրախուսեց ուսումնասիրել, լինել խիզախ և օգտագործել իր տաղանդները Աստծուն ծառայելու համար (Ա. Տիմ. 4. 6-16): Ինչո՞ւ էր Պողոսն ուզում, որ Տիմոթեոսը հավատարիմ լիներ ծառայության մեջ: Նա գրել է. «Որովհետև հենց գրա համար ենք տքնում և պայքարում, որովհետև հույս ենք գրել կենդանի Աստծո վրա, որ բոլոր մարդկանց, մանավանդ հավատացյալների Փրկիչն է» (Ա.Տիմ. 4.10): Հիսուսը մեր հույսն է և աշխարհի Փրկիչը: Ի՞նչը կարող է ավելի լավ լինել, քան նրան ծառայելը:

**Աղոթք** - Սիրելի Յայր, խնդրում եմ ինձ տուր սիրտ, որպեսզի քո հույսը բերեմ իմ շրջապատին: Ամեն:

**Քրիստոսի մասին մեր սովորածները բաժնեկցենք ուրիշների հետ, որոնք օգնության կարիք ունեն:**

Զեր առջև դրեցի կյանքն ու մահը, օրինությունն ու անեծքը: Ուրեմն ընտրի՞ր կյանքը, որ ապրես: (Բ Օր. 30.19)

## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

**Ս**իրելի ընկերոջս մահից մի քանի շաբաթ անց խոսեցի նրա մոր հետ: Չէի կարող հարցնել՝ ինչպես է, որովհետև որդու մահը սգացողին այդպիսի հարց տալն անտեղի եմ համարում: Եվ ես հարցրի, թե ինչպես է դիմանում այդ ցավին: Նա պատասխանեց. «Ես ընտրում եմ ուրախությունը»:

Նրա այդ խոսքերն ինձ ծառայեցին, երբ ինքս էի պայքարում կյանքի որոշ տհաճությունների դեմ, նաև հիշեցրին Մովսեսի հրամանը իսրայելցիներին՝ խոստացված երկիր մտնելուց առաջ: Աստված ուզում էր՝ նրանք իմանային, որ ունեն ընտրություն: Մովսեսն ասաց. «Զեր առջև դրեցի կյանքն ու մահը, օրհնությունն ու անեծքը: Ուրեմն ընտրի՛ր կյանքը, որ ապրես» (Բ Օր. 30.19): Նրանք կարող էին հետևել Աստծո օրենքներին ու լավ ապրել, կամ հեռանալ Նրանից և ապրել «մահվան ու չարի» հետևանքներով (Հմ.15):

Մենք նույնպես պետք է ապրելու ընտրություն կատարենք: Կարող ենք ընտրել ուրախությունը՝ հավատալով ու վստահելով Աստծո խոստումներին: Կամ կարող ենք կենտրոնանալ մեր ճանապարհի դժվարությունների ու ժխտական մասերի վրա՝ թույլ տալով, որ դրանք խլեն մեր ուրախությունը: Թեև ուրախություն ունենալու համար պահանջվում է փորձառություն և Սուրբ Հոգու օգնությունը, բայց մենք կարող ենք ընտրել ուրախությունը՝ իմանալով, որ «ամեն ինչ գործակից է լինում նրանց բարիքի համար, ովքեր սիրում են Աստծուն» (Հռոմ. 8.28):

**Աղոթք** - Ուրախություն տվող սիրելի Յայր, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ այսօր ընտրեմ Քեզ հետևելու և հավատամ ու վստահեն Քեզ: Ամեն:

**Յակառակ մեր այսօրվա հանգամանմերից՝ կարելի է ընտել ուրախությունն ու օրինությունը: Ուստի ընտե՛ն լավն ու բարին:**

Անհրավների ճանապարհը խավարի նման է. նրանք չգիտեն, թե ինչով են գայթակղում: (Առ. 4. 19)

## ՄԵԶ ԱՆՇՐԱԺԵՇ ԻՍԱՍՏՆՈՒԹՅՈՒՆԸ

«Մ եծ գրիպը» կոթողային գրքում ամերիկացի գրող Ջոն Բարրին պատմում է 1918 թ. գրիպի համաճարակի մասին և բացահայտում, թե ինչպես առողջապահության պատասխանատուները փոխանակ զգուշանալու՝ ակնկալում էին զանգվածային բռնկում: Նրանք վախենում էին, որ Առաջին համաշխարհային պատերազմի պատճառով նոր հիվանդություններ կարող են տարածվել: Բայց այդ իմացությունը ոչ մի օգուտ չէր տալիս: Հզոր առաջնորդները նույնպես, ահազանգ հնչեցնելով հանգերձ, գնում էին գեպի բռնություն: Եվ մասնագետների հաշվումներով՝ այդ համաճարակի հետևանքով մահացել է հիսուն միլիոն մարդ՝ այդ թիվն ավելացնելով պատերազմի պատճառով սպանված քսան միլիոնին:

Եվ կրկին ապացուցվում է, որ մարդկային գիտելիքը երբեք բավարար չէ մեզ չարից փրկելու համար (Առ. 4. 14-16): Թեև մենք հսկայական գիտելիքներ ենք կուտակում, ուշագրավ պատկերներ ներկայացնում, սակայն դեռևս չենք կարողանում կասեցնել այն ցավը, որ պատճառում ենք իրար: Չենք խոտորում «անիրավների ճանապարհը», անընդհատ կրկնվող այն ուղին, որ տանում է «դեպի խավար»: Հակառակ մեր լավագույն գիտելիքների՝ մենք իսկապես պատկերացում չունենք, թե «թե ինչով ենք գայթակղում» (Հմ.19):

Ահա ինչու մենք պետք է ստանանաք «իմաստնություն և ըմռնողություն» (Հմ.5): Մեր գիտելիքները միշտ էլ պակասում են, իսկ նրա իմաստնությունը կապահովի մեզ համար անհրաժեշտը:

**Աղոթք - Սիրելի՛ Յայր,** իմ մարդկային գիտելիքները չեն կարողանում փրկել ինձ: Խնդրում եմ՝ սովորեցրո՛ւ ինձ Քո ճշմարտությունը: Ամեն:

**Մարդկային գիտելիքների դակարան ակնհայտ է: Իսկ Ասծոն իմաստնությունը մեզ սովորեցնում է աղրել ավելի լավ ու ճշմարիտ ձևով:**

Յագեք գութ, ողորմություն, քաղցրություն, խոնարհություն, հեղություն, համբերատարություն: (Կող. 3. 12)

## ԴԱՆԴԱՂ ՆՈՐԱԶԵՎՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՉԻՎ

**Լ**սե՞լ եք «դանդաղ նորաձևության» մասին: Սա մի շարժում է, որի նպատակն է հակադրվել «արագ նորաձևությանը»՝ էժանագին հագուստի արագ վաճառքին: Արագ նորաձևության հագուստները արագ էլ գուրս են գալիս շրջանառությունից:

Դանդաղ նորաձևություն շարժումը մարդկանց մղում է մի փոքր այլ մոտեցում ունենալ: Միշտ նոր տեսք ունենալու համար այն առաջարկում է ընտրել քիչ, բայց լավ և որակյալ աղբյուրներից պատրաստված նյութեր, որոնք մնայուն են:

Դանդաղ նորաձևության առաջարկի մասին մտածելիս հասկացա, որ ես էլ էի հակված ընտրել արագ նորաձևության վերջին միտումները: Կողոսացիներին ուղղված նամակում Պողոսն ասում է, որ Հիսուսով իսկապես կերպարանափոխվելը արագ լուծում պահանջող քմահաճույք չէ: Այդ աստիճանական վերափոխման պրոցեսը կարող է ամբողջ կյանք տևել:

Նորաձևության վերջին խոսքով հազնվելու մարդկային ձգտումը կարելի է փոխարինել «գութ, ողորմություն, քաղցրություն, խոնարհություն, հեղություն, համբերատարություն» հագնելու (Հմ. 12): Սուրբ Հոգու խորհրդով: Կարող ենք համբերատարություն սովորել Քրիստոսի՝ մեր սրտերը փոխող դանդաղ ճամփորդության ժամանակ: Ճամփորդություն, որը տանում է դեպի հարատև խաղաղություն (Հմ.15):

**Աղոթք - Յայր, շնորհակալ եմ, որ կարող եմ իմ անհանգիստ ձգտումները փոխարինել քեզ ինտ քայլելու հանգստությանը:**  
**Անեն:**

**Վերջին նորաձևություններով փորձում ենք աղափություն գտնել, սակայն գրիտնակություն ունենք է գտնել Տեր Հիսուսի մեջ:**

Եվ խիստ ցնցվում է իմ անձը. իսկ դու, ո՞վ Տեր, մինչև ե՞րբ... (Սաղմ. 6. 3)

## ՀՈՒՅՍ` ՑԱՎՈՂԻ ՀԱՍԱՐ

«Մարդկանց մեծամասնությունն ունեն սպիտեր, որոնք ուրիշները չեն կարող տեսնել կամ հասկանալ»,՝ բեյսբոլիստ Անդրելիթոն Սիմոնսն այս անկեղծ խոսքերով հրաժարվեց մասնակցել 2020-ի մրցաշարի ավարտին, երբ նրա մոտ առաջացան հոգեկան խանգարումներ: Այդ որոշումն ընդունելուց հետո նազգաց, որ իր պատմության մասին պետք է իմանան նաև ուրիշները՝ որպես խրախուսում ու կարեկցության արտահայտություն նման մարտահրավերներ դիմագրավողներին:

Անտեսանելի սպիտերն այն խոր ցավերն ու վերքերն են, որոնք չեն երևում, բայց իրական ցավ ու տառապանք են պատճառում: Սաղմոս 6-ում Դավիթը, ցավով արտահայտելով իր ներքին խոր պայքարը, գրել է, որ ինքը «տկար է» (Հմ.2), «ցնցվում է» (Հմ.3) և «ամբողջ գիշեր արցունքներով թրջում է իր անկողինը» (Հմ.6): Թեև Դավիթը չի ասում իր տառապանքի պատճառը, սակայն մեզանից շատերը կարող են իրենց վերաբերմունքը ցույց տալ այդ ցավին:

Մենք կարող ենք նաև քաջալերվել Դավիթի՝ ցավին արձագանքելու ձևով: Իրեն ճնշող տառապանքների մեջ Դավիթը դիմեց Աստծուն: Անկեղծորեն ցույց տալով իր սիրտը՝ նա աղոթեց բժշկվելու (Հմ.2), փրկության (Հմ.4) և ողորմության համար (Հմ.9): Նույնիսկ Աստծուն հարցնելով «մինչև ե՞րբ» ու շարունակելով խոսել իր վիճակից՝ նա վստահ էր, որ Աստված «լսեց իմ աղաչանքը. Տերն ընդունում է իմ աղոթքը» (Հմ.9):

Քանի որ նա մեր Աստվածն է, ուրեմն հույսը միշտ կա:

**Աղոթք** - Երկնավոր Դայր, ինձ տուր քաջություն՝ արտահայտելու իմ ամենախոր ցավը և ողջունելու քո ներկայությունն ու ապաքինումը իմ վիճակում: Ամեն:

**Ցավի, դայրաի ու տառադանի դահերին դիմենք Ասծուն՝ խնդրելով բժշկություն, ողորմություն և փրկություն:**

Մեր Տեր Յիսուս Քրիստոսի Աստվածը իրեն ճանաչելու համար տա ձեզ ինաստնություն և հայտնության հոգի, որ ձեր սրտի աչքերը լուսավորի, և ճանաչեք, թե ի՞նչ է նրա կոչման հույսը: (Եփ, 1. 17-18)

## ԲԱՇ ԱՐՏԻՍ ԱՉՔԵՐԸ

**2001 թ. Քրիստոֆեր Դաֆլի անունով վաղաժամ ծնված երեխան** ողջ մնալով զարմացրեց բժիշկներին: Հինգ ամսականում նրան ընդգրկեցին խնամատարության ծրագրում, մինչև որ մոռագրով ընտանիքը որդեգրեց մանկանը: Զորս տարեկանում մանկավարժներից մեկը նկատեց, որ երեխան, թեև կույր էր և առտիզմ ուներ, բայց լավ ձայն ուներ: Վեց տարի անց նա արդեն եկեղեցու բնեմում երգում էր «Բացե՛ք իմ սրտի աչքերը»: Այդ տեսանյութը, համացանցում տարածվելով, հասավ միլիոնավոր մարդկանց: 2020-ին Քրիստոֆերն արդեն խոսեց հաշմանդամություն ունեցողներին պաշտպանելու իր նպատակի մասին: Նա շարունակում է ապացուցել, որ հնարավորություններն անսահման են, եթե սրտիդ աչքերը բացում ես Աստծո առաջ:

Պողոս առաքյալը գովում է եփեսացիներին՝ իրենց համարձակ հավատքի համար (1.15-16), խնդրում է Աստծուց, որ նրանց տա «իմաստնություն և հայտնության հոգի», որպեսզի ավելի լավ ճանաչեն իրեն (Հմ.17): Աղոթում է, որ նրանց աչքերը «լուսավորվեն» կամ «բացվեն», որպեսզի նրանք հասկանան այն հույսն ու ժառանգությունը, որ Աստված խոստացել է իր ժողովրդին (Հմ.18): Երբ Աստծուց խնդրենք, որ իրեն բացահայտի մեզ, մենք կկարողանանք ավելի լավ ճանաչել նրան ու վստահորեն հայտարարել իր անունն ու իշխանությունը (Հմ.19-23): Հիսուսի հանդեպ մեր ունեցած հավատով, բոլորին սիրելով և միաժամանակ նրան խնդրելով, որ շարունակի բացել մեր սրտի աչքերը, կկարողանանք ապրել այնպես, որ ապացուցվեն նրա անսահման հնարավորությունները:

**Աղոթք - Հզոր ու ողորմած Աստված, խնդրում եմ՝ բաց սրտիս աչքերը, որպեսզի կարողանամ ճանաչել, սիրել և ապրել քեզ համար՝ համարձակ հավատքով, որ մղում է քեզ երկրպագելու: Անեն:**

**Պետք է ավելի լավ ճանաչեմ ու սիրեմ մեզ ցըալատողներին այնուես, ինչու Աստված է սիրում մեզ:**

Մի՛ վախեցիր, որովհետև հանուն քո հայր Յովնաթանի սիրո ես քեզ անպայման բարերարություն պիտի անեմ: (Բ. Թագ. 9.7)

## **ԾԱՆԱՉԵԼ ԵՎ ՍԻՐԵԼ**

«Որդիս ճանաչո՞ւմ է քեզ» ազգեցիկ հողվածում մարզական լրագրող Զոնաթան Տժարքսը գրում է, որ պայքարում է քաղցկեղի դեմ և ցանկություն հայտնում, որ իր մահից հետո մարդիկ հոգ տանեն կնոջ ու փոքրիկ որդու մասին: Երեսունչորս տարեկան թղթակիցը հողվածը գրել է մահից վեց ամիս առաջ: Նա հավատում էր Հիսուսին և իր հողվածում հիշատակել էր սուրբ գրություններ, որոնք այրիներին ու որբերին խնամելու մասին էին (Ելք 22.22, Ես. 1.17, Հակ. 1.27): Իսկ ընկերներին ուղղված խոսքում գրել էր. «Երբ ձեզանից յուրաքանչյուրին տեսնեմ դրախտում, միայն մեկ բան եմ հարցնելու. «լավ վարվե՞լ ես որդուս ու կնոջս հետ: Որդիս ճանաչո՞ւմ է քեզ»: Դավիթ թագավորը հարցնում է. «Արդյոք Սավուղի տանից մնացած մարդ կա՞», որ նրան հանուն Հովնաթանի սիրո բարերարություն անեմ» (Բ. Թագ. 9.1): Նրա մոտ են բերում Հովնաթանի որդուն՝ դժբախտ պատահարի հետևանքով կազ մնացած Մեմփիբոսթեին (Հմ. 3, տե՛ս 4.4), որը բերանքսիվայր ընկնելով՝ երկրպագում է թագավորին: Դավիթը նրան ասում է. «Մի՛ վախեցիր, որովհետեւ հանուն քո հայր Հովնաթանի սիրո ես քեզ անպայման բարերարություն պիտի անեմ և քո հոր՝ Սավուղի բոլոր արտերը պիտի վերադարձնեմ քեզ, և դու պիտի միշտ հաց ուտես իմ սեղանից» (Հմ. 9.7): Դավիթը սիրալիր կարեկցություն ցուցաբերեց Մեմփիբոսթեի հանդեպ, որը ժամանակի ընթացքում իսկապես ճանաչեց ու ընդունեց նրան (տե՛ս 19. 24-30): Հիսուսը մեզ կոչ է անում սիրել ուրիշներին այնպես, ինչպես ինքն է մեզ սիրում (Հովկ. 13. 34): Երբ նա գործում է մեր մեջ ու մեր միջոցով, եկե՛ք իսկապես լավ ճանաչենք ու սիրենք նրան:

**Աղոթք - Երկնավոր Հայր, օգնի՛ր, որ պատվեմ քեզ՝ ձգտելով իսկապես ճանաչել ու սիրել ուրիշներին: Ամեն**

**Պետք է ավելի լավ ճանաչենք մեզ ուրաղատողներին, սիրենի նրանց այնուես, ինչողեւ Ասված է սիրում մեզ:**

Յավիտյան Տիրո՛ջը վստահեք: (Ես. 26. 4)

## ՅԱՎԻՏՅԱՆ ՎԱՏԱՐԵԼ

**Q**մուան մի առավոտ, բացելով վարագույրները, մառախուղիթանձր պատ տեսա: Մեր բնակված տարածքի համար հազդվագեալ այդ երեսույթը անակնկալ էր: Իսկ օդերեսութաբանները կանխատեսել էին, որ այն կցրվի մեկ ժամ հետո: Այդպես էլ եղավ: Մեկ ժամ անց մառախուղն անցավ, և երկինքը դարձավ արեոտ ու կապույտ:

Ես, որ կյանքում միայն մառախուղ եմ տեսել, պատուհանի մոտ կանգնած, խորհում էի վստահության իմ մակարդակի մասին: Եվ հարցրի ամուսնուս.«Աստծուն վստահեմ միայն այն ժամանակ, երբ տեսնո՞ւմ եմ»:

Երբ Ոզիա թագավորը մեռավ, և որոշ կաշուակեր կառավարիչներ Հուղայի իշխաններ դարձան, Եսային հարցրեց. «Ո՞ւմ կարող ենք վստահել»: Աստված նրան արձագանքեց մի տեսիլքով, որը համոզեց մարդարեին, որ նրան կարելի է վստահել այսօր՝ գալիք ավելի լավ օրերի համար: Եվ Եսային գովարնեց. «Հաստատուն միտք ունեցողին դու պահում ես կատարյալ խաղաղության մեջ, քանզի քեզ է հուսացել» (Ես. 26.3): Ապա ավելացրեց. «Հավիտյան Տիրո՛ջը վստահեք, որովհետե Տեր Աստված հավիտենական վեմ է» (Հմ. 4):

Երբ մեր միտքը կենտրոնացած լինի Աստծո վրա, մենք կարող ենք վստահել նրան նույնիսկ մառախուղի ու շփոթության ժամանակ: Մենք կարող ենք հիմա տեսնել, բայց եթե վստահենք Աստծուն, կարող ենք վստահ լինել, որ նրա օգնությունը մոտ է:

**Աղոթք -** Սիրելի՝ Յայր, աշխարհն այսօր մշուշապատ է երևում, ուստի օգնի՛ր, որ միտքս ուղղեն քեզ վրա, որին վստահում եմ իավիտյան: Ամեն:

**Երբ մեր կյանքը դառնա մօռւուս ու սփոթելի, մեր դիմագրավածքովոր հարցերի համար վստահենի Աստծուն:**

Խաղաղություն եմ քողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ: (Հովհ. 14. 27)

## ԱՆԿԱՐԵԼԻ ՊԱՐԳԵՎ

**Պ**ւրախ էի, որ սկեսուրիս տարեգարձի առիթով կարողացա  
գտնել ցանկալի նվեր՝ ապարանջան՝ իր սիրելի քարով: Հարմար ու գեղեցիկ նվեր գտնելը միշտ էլ հաճելի է: Բայց ի՞նչ անել, եթե անհրաժեշտ նվերը երբեմն մեր նյութական հնարավորություններից վեր է լինում: Մեզանից շատերն ուզում են մեկին նվիրել մտքի խաղաղություն, հանգիստ և նույնիսկ համբերություն: Եթե միայն դրանք հնարավոր լիներ գնել, ծրաբել ու ժապավենով կապել:

Այդպիսի նվերներ մարդիկ չեն կարող տալ միմյանց: Սակայն Հիսուսը՝ մարդեղացած Աստվածը, իրեն հավատացողներին տալիս է այդպիսի «անհնար» թվացող մի պարզեց խաղաղություն: Աշակերտներին թողնելուց ու երկինք համբառնալուց առաջ Հիսուսը նրանց միմիթարեց Սուլքը Հոգի տալու խոստումով.« Նա ամեն բան կուսուցանի ու կհիշեցնի ձեզ այն ամենը, ինչ ձեզ ասացի» (Հովհ. 14. 26): Իր աշակերտներին նա որպես անխափան նվեր առաջարկեց խաղաղություն, ի՞ր խաղաղությունը, երբ նրանց սրտերն անհանգիստ էին, կամ երբ նրանք ապրում էին վախի մեջ: Նա ինքը մեր խաղաղությունն ու հաշտությունն է Աստծո, ուրիշների և ինքներս մեզ հետ:

Մենք կարող ենք մեր սիրելիներին համբերություն կամ բարելաված առողջություն տալու հնարավորություն չունենալ: Ոչ էլ մեր հնարավորության սահմաններում է նրանց տալ այն խաղաղությունը, որ անհրաժեշտ է մարտահրավերներին դիմանալու համար: Բայց մենք կարող ենք առաջնորդվել Հոգով ու նրանց հետ խօսել Հիսուսի՝ ճշմարիտ ու հարատես խաղաղություն տվողի ու մարմնավորողի մասին:

**Աղոթք - Տե՛ր Յիսուս, շնորհակալ եմ իմ կյանքում ունեցածդ անխափան խաղաղության միջարդարության համար: Անեն:**

**Եթե Քրիստոսի ՏՎԱԾ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՆԵՏ ԹՌ ՄԵԶ, ՎԻԴԱՄԱՆԳԻՌ ԱՅՆ ՈՒՐԻՇԱԵՐԻՆ:**

Աստված ընտրեց նրանց, որոնց այս աշխարհում հիմարներ են կարծում, որպեսզի իմաստուններին ամաչեցնի: (Ա.Կորնթ. 1. 27)

## ԱՍՏԾՈ ԱՆԱԿՆԿԱԼ ԶԵՎԵՐԸ

Հովիվը, թուղթը մոտեցնելով աչքերին, ուշադիր նայեց իր պատրաստած քարոզի տեքստին: Նա շատ վատ էր տեսնում և կարգում էր ոչ տպագորիչ ու միապաղաղ ձայնով: Բայց Ձոնաթան եղբարդսի քարոզչության միջոցով Աստծո Հոգին շարժվեց ու վառեց Առաջին մեծ զարթոնքի կրակը և հազարավոր մարդկանց առաջնորդեց դեպի Քրիստոսը:

Աստված հաճախ անսպասելի բաներ է օգտագործում իր նպատակների համար: Պողոս առաքյալը, գրելով մարդկության համար Հիսուսի խաչվելու ու սիրառատ մահվան մասին, եղրափակում է. «Աստված ընտրեց նրանց, որոնց այս աշխարհում հիմարներ են կարծում, որպեսզի իմաստուններին ամաչեցնի» (Ա.Կորնթ. 1. 27): Աշխարհն սպասում էր, որ աստվածային իմաստնությունը նմանվի մերինին և անդիմադրելի ուժով գա: Իսկ Հիսուսը խոնարհաբար ու նրբանկատորեն եկավ մեզ փրկելու մեր մեղքերից և այդպես դարձավ մեզ համար «իմաստություն, արդարություն, սրբություն և փրկություն» (ՀՃ.30):

Հավիտենական և ամենաիմաստւն Աստվածը դարձավ մարդկային մանուկ, որը մեծանալով տանջվեց, մեռավ ու հարություն առավ, որպեսզի իր սիրով ցույց տա մեզ դեպի Տերը տանող ճանապարհը: Մեծ բաների հասնելու համար նա սիրում է խոնարհ միջոցներ ու մարդկանց օգտագործել: Եթե ուզենք, նա կարող է մեզ էլ օգտագործել:

**Աղոթք - Սիրո՞ղ Յայր, շնորհակալ եմ Ձո անսպասելի ուղիների համար: Օգնիր ինձ, որ այսօր մոտիկից հետևեմ Ձեզ, որպեսզի օգտագործվեմ այն բանի համար, ինչը հաճելի է Ձեզ: Ամեն:**

**Եթե անակնկալ բաներ ենք տեսնում, դեմք է այդ մասին  
ուրիշներին դասմենք:**

Աստված ասաց. «Ես քեզ հետ կլինեմ»: (Ելք 3.12)

## ԵՍ ՈՎ ԵՄ

**Կ**իզոմբոն նստեց խարույկի կողքին ու նայելով կրակին՝ սկսեց խորհել իր կյանքի մեծ հարցերի մասին: «Ի՞նչ եմ կարողացել ես անել»,՝ մտածեց նա և անմիջապես էլ պատասխանեց. «Իրականում ոչ շատ բան»: Նա վերադարձել էր իր ծննդավայր և ծառայում էր իր հոր աշխատած դպրոցում: Նա փորձում էր նաև գրել հոր մասին, որն անցել էր երկու քաղաքացիական պատերազմով: Ու դարձյալ նրան տանջում էր նույն հարցը. «Ես ո՞վ եմ, որ փորձում եմ անել դա»: Կիզոմբոյի անվտահությունը նման էր Մովսեսի զգացումներին: Աստված նրան առաքելություն էր վատահել. «Ուստի արի՛ հիմա քեզ ուղարկեմ փարավոնի մոտ, և հանի՛ր Եգիպտոսից իմ ժողովրդին՝ իսրայելի որդիներին» (Ելք 3.10): Մովսեսը պատասխանում է. «Ես ո՞վ եմ» (Հմ.11): Մովսեսի որոշ թույլ առարկումներից հետո Աստված նրան հարցնում է. «Այդ ի՞նչ է քո ձեռքին: Նա պատասխանում է՝ գավազան» (4.2): Աստծո հրամանով Մովսեսը գավազանը նետում է գետնին, և այն վերածվում է օձի: Զնայած վախին՝ Մովսեսը բռնում է այն, որը նրա ձեռքում նորից դառնում է գավազան (Հմ.4): Աստծո զորությամբ Մովսեսը կարող էր հանդիպել փարավոնի հետ, որովհետեւ տառացիորեն Եգիպտոսի «աստվածներից» մեկը՝ օձը, իր ձեռքում էր: Եգիպտոսի աստվածները վտանգ չեն ներկայացնում, միայն ճշմարիտ Աստծուց էր վտանգը: Կիզոմբոն մտածեց Մովսեսի մասին և զգաց Աստծո պատասխանը, թե. «Ինձ և իմ խոսքն ունես»: Մտածեց նաև իր ընկերների մասին, որոնք խրախուսում էին գրել հոր պատմությունը, որպեսզի ուրիշներն էլ իմանան իր կյանքում Աստծո զորության մասին: Նա մենակ չէր: Միայնակ մեր բոլոր ջանքերն անբավարար են: Բայց մենք ծառայում ենք Աստծուն, որն ասում է. «Ես քեզ հետ կլինեմ» (3.12):

**Աղոթք - Հայր, քեզ հետ ես ոչ մի բանի պակաս չունեմ, անկախ իրավիճակներից:** Ամեն:

**Ի՞նչ ունեմ, որ Աստված կարող է օգտագործել: Դա կօգնի մեզ մտածելու, թե Նա ինչ կարող է անել մեզ համար:**

Մեզ համար հաստատում և անշարժ խարիսխն է, որ թափանցում է վարագույրից ներս: (Եր. 6.19)

## ՅՈՒՅՍԻ ՄԵՐ ԽԱՐԻՍԽՆ

**Կ**իրակնօրյա դպրոցի վեցերորդ դասարանցիներին նկարագրելով փողոցում ստվարաթղթի տակ քնող մարդկանց՝ հարցը, թե ինչի կարիք ունեն նրանք: Մեկն ասաց՝ մնունդ, մյուսը՝ փող, ապահով տեղ: Մի աղջիկ ասաց՝ հույս: Եվ բացատրեց, որ իր կարծիքով՝ նրանք հույսով սպասում են, թե լավ բաներ պիտի լինեն: Ինձ համար հետաքրքիր էր այդ մտածելակերպը, որովհետև դժվարությունների մեջ գտնվող մարդիկ հիմնականում լավ բան չեն ակնկալում:

Աստվածաշունչը նույնպես պատմում է այդ նույն հույսի մասին. «Հավատը հուսացված բաների հաստատումն է» (Եր. 11.1): Տեր Հիսուսին հավատացողներս էլ կարող ենք ակնկալել, որ լավ բաներ պիտի կատարվեն:

Ո՞րն է այն գերագույն բարիքը, որին կարող են վստահորեն հուսալ Հիսուսին հավատացողները՝ «Նրա հանգստի մեջ մտնելու խոստումը» (4.1): Հավատացյալների համար Աստծո հանգիստը ներառում է Նրա խաղաղությունը, փրկության վստահությունը, Նրա ուժին ապավինումն ու ապագա տան երաշխիքը: Աստծո երաշխավորությունը և Հիսուսի առաջարկած փրկությունն այն է, թե ինչու կարող է հույսը լինել մեր խարիսխը՝ անհրաժեշտության դեպքում մեզ հաստատուն պահելով (6.18-20): Աշխարհն իսկապես հույսի կարիք ունի. Աստծո ճշմարիտ ու վստահ հավաստիացման, որ լավ ու վատ ժամանակներում նա է ասելու վերջին խոսքը և չի տապալելու մեզ: Վստահելով Նրան, մենք գիտենք, որ նա մեզ համար ամեն ինչ կծշտի իր ժամանակի մեջ:

**Աղոթք - Սիրելի՝ Աստված, Ձո հանդեպ իմ հույսը հաստատ է ու ապահով ոչ թե այն պատճառով, որ հավատքս է ամուլդ, այլ որ Դու ես հավատարիմ Ձո խոստումները կատարելու մեջ:** Ամեն:

**Աստվածաւունչը մեզ բաջակերում և տալիս է հույս ու վստահություն: Ծնորհակալ լինեն Աստծուն այդ դարձնի համար:**

Տարիքան բազում բարի գործեր ու ողորմություններ էր արել:  
(Գործը 9.36)

## ԻՆՉ ՈՐ ՈՒՆԵՍ. ՕԳՏԱԳՈՐԾԻՌ ՀԻՍՈՒՄԻ ՀԱՄԱՐ

**Վ**արի փառքի սրահն ստեղծվել է 2011-ին և ներկայացնում է այն մարդկանց, ովքեր մեծ ավանդ են ունեցել տնային կարի արտադրության մեջ: Նրանցից է օրինակ Մարթա Պուլենը, որն այդ խմբում ընդգրկված է եղել 2005-ին և նկարագրված է որպես Առակներ 31-ի «առաքինի կինը, որը երբեք չի թերացել հայտարարելու իր ուժի, ոգեշնչման և օրհնությունների աղբյուրի մասին»:

Կարի փառքի սրահը 21-րդ դարի իրողություն է, բայց եթե այն ստեղծվեր առաջին դարում իսրայելում, Տարիթա անունով կինը անպայման կընդգրկվեր այդ խմբում: Տարիթան Հիսուսին հավատացող դերձակուհի էր, որը ժամանակ էր հատկացնում իր համայնքի աղքատ այրիների համար կարելու (Գործք 9. 36, 39): Երբ նա հիվանդացավ ու մահացավ, աշակերտները կանչեցին Պետրոսին, որ հրաշք գործի և իրենց սիրելի Տարիթային կենդանացնի: Ողբացող այրիները Պետրոսին ցույց տվեցին նրա կարած հանդերձները (Հմ.39), որոնք այդ կնոջ բարության արտահայտությունն էին (Հմ.36): Եվ Աստծո գորությամբ Տարիթան կենդանացավ:

Աստված կանչում է մեզ ու զինում, որպեսզի մեր հմտություններով բավարարենք մեր համայնքի ու աշխարհի կարիքները: Եկե՛ք օգտագործենք մեր հմտությունները Հիսուսին ծառայելու համար և տեսնենք, թե նա ինչպես է գործածում մեր սիրո գործերը սրտերն ու կյանքերը միացնելու համար (Եփ. 4. 16):

**Աղոթք - Սիրելի՝ Հիսուս, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ սիրով և կարեկցությամբ արձագանքելու ուրիշների կարիքներին: Ամեն:**

**Ասված մեզանից յուրաքանչյուրին սկել է որոշակի կարողություններ ու հմտություններ: Օգտագործե՛ն որանի մարդկանց կարիքները հոգալու համար:**

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՉՉ ՄԵԿ ՏԱՐՈՒՄ | Եսայի 53-55 և Բ ԹԵՍԱՊՈԽԻԿԵՑԻ 1

Նախ Աստծու արքայությունն ու նրա արդարությունը փնտրեք, և այդ ամենը ավելիով ձեզ կտրվի: (Մատթ. 6. 33)

## ԱՌԱՋԻՆԸ ՑՈՒՑԱԿՈՒՄ

**Օ**րն սկսեցի վազքով: Անկողնուց վեր թռա ու սկսեցի թվարկել անելիքներս: Գործնական ու անձնական ծրագրերս խառնվեցին իրար. աշխատանքի գնալ, խմբագրել հոդվածը, մաքրել գրասենյակը, ուազմավարական խումբ ձևավորել, համացանցում տեղադրել գյուտարարության մասին հոդված, մաքրել ներքնահարկը, աղոթել: Երբ հասա վերջին կետին, հիշեցի, որ Աստծո օգնության կարիքն ունեմ: Բայց ես այնքան հեռուն էի գնացել, որ մտքովս չէր էլ անցնում, որ այդ ամենն անում եմ մենակ՝ փորձելով ստեղծել իմ սեփական ընթացքը:

Հիսուսը գիտեր, որ մեր օրերն իրար են բախվում մշտական վազքի ու արագության հորձանուտում: Ուստի հրահանգում էր. «Նախ Աստծու արքայությունն ու նրա արդարությունը փնտրեք, և այդ ամենը ավելիով ձեզ կտրվի» (Մատթ. 6.33):

Բնական է, որ այս խոսքերը պետք է ընդունել որպես պատվիրան, որովհետեւ այդպես էլ կա: Բայց այդ խոսքերում կա նաև հրավեր: Մատթեոսի 6-ում Հիսուսը մեզ հրավիրում է աշխարհի վայրի անհանգստությունը (Հմ. 25-32) փոխարինել ամենօրյա վստահելի կյանքով: Աստված իր շնորհքով կօգնի մեզ մեր բոլոր օրերում, նույնիսկ մեր անելիքների վերջին կետին հասնելիս: Դրա համար պետք է նախ կյանքին նայենք իր տեսանկյունից:

**Աղոթք - Հայր, շնորհակալ եմ անհանգստությունները թոթափելու և կյանքի առատ օրինություններն ընդունելու քո իրավերի համար: Ամեն:**

**Ամեն or առաջին stեղն Ասծուն տանի, որդեսզի մեր առօրյա ճնշումների ներքո կարողանանք շարունակել մեր կյանքը՝ մեր բոլոր կարիքները հոգալու համար վստահելով Հիսուսին:**

Տեր Աստված մի պարտեզ տնկեց Եղենում՝ արևելյան կողմը, և իր արարած մարդուն դրեց այնտեղ: (Ծն. 2.8)

## ՊԱՐՏԵՉՈՒՄ

Հայրս սիրում էր բնության գրկում լինել, հավաքների, ձկնորսության մասնակցել: Հաճույքով նաև աշխատում էր բակում ու պարտեզում: Դրա համար, իշարկե, շատ ժամանակ էր պահանջվում: Ժամեր շարունակ նա կտրում էր, փորում, սերմեր ու ծաղիկներ ցանում, հանում մոլախոտերը, ջրում: Արդյունքն, իշարկե, նկատելի էր: Գեղեցիկ մարդագետին, համեղ լոլիկներ ու խաղաղության գեղեցիկ վարդեր: Ամեն տարի նա կտրում է վարդերը, բայց դրանք շարունակում են աճել՝ շրջապատը լցնելով բույրով ու գեղեցկությամբ:

Ծննդոց գրքում կարդում ենք եղեմի պարտեզի մասին, որտեղ ապրում, բարդավաճում ու Աստծո հետ քայլում են Աղամն ու Եվան: Այստեղ «Տեր Աստված հողից բուսցրեց տեսքով հաճելի և քաղցրահամ պտուղներով բոլոր ծառերը» (Ծն. 2.9): Պատկերացնում եմ, որ այդ կատարյալ պարտեզում եղել են նաև գեղեցիկ, անուշաբույր, գուցե նաև առանց փշի վարդեր:

Աղամի ու Եվայի՝ Աստծոն չենթարկվելուց հետո նրանք վտարվեցին պարտեզից և կարիք ունեցան տնկելու և խնամելու իրենց սեփական այգին: Իսկ դա նշանակում էր փորել կարծր հողը, պայքարել փշերի և այլ դժվարությունների դեմ (3. 17-19, 23-24): Բայց Աստված շարունակեց ապահովել նրանց որոշ կարիքները (Հմ.21): Նա մարդկանց չթողեց առանց դեպի իրեն ճգելու արարչագործության (Հռոմ. 1.20): Պարտեզի ծաղիկները մեզ հիշեցնում են Աստծո շարունակական սիրու և նորոգված ստեղծագործության խոստման մասին՝ իրեւ հույսի ու մսիթարության խորհրդանիշ:

**Աղոթք -** Սիրելի՝ Յայր, շնորհակալություն քեզ Քո արարչագործության մեջ Քո մասին բազում հիշեցումներիդ համար: Շնորհակալություն նաև փշերի մեջ Եղած գեղեցկության համար: Ամեն:

**Աստվածային ստեղծագործությունը մղում է գովաբանելու մեր Արարչին և տեսնելու նրան իր ստեղծագործության մեջ:**

Ես եմ աշխարհի լույսը. ով իմ հետևից գա, նա խավարի մեջ չի քայլի: (Յովհ. 8.12)

## ՔՐԻՍՏՈՍԸ՝ ՄԵՐ ճՇՄԱՐԻՏ ԼՈՒՅԸԸ

«Գնա՞ դեպի լույսը»,՝ ասաց ամուսինս, երբ քաղաքի մեծ հիվանդանոցներից մեկում փորձում էինք գտնել ելքը: Մենք այցելել էինք մեր բարեկամին, և երբ դուրս եկանք վերելակից, ոլորապտույտ միջանցքները կիսախավար էին, ու դուրս դալու ճանապարհը գտնելը դժվար էր: Ի վերջո մի մարդու օգնությամբ քայլեցինք դեպի ելքի դուռը, որն իսկապես տանում էր դեպի պայծառ արեկի լույսը:

Տեր Հիսուսն էլ շփոթված ու կորսված մարդկանց հրավիրում է հոգեսոր խավարից դուրս գալու համար հետևել իրեն. «Ե՛ս եմ աշխարհի լույսը. ով իմ հետևից գա, նա խավարի մեջ չի քայլի, այլ կյանքի լույսը կընդունի» (Հովհ. 8.12): Նրա լույսի մեջ կարող ենք տեսնել գայթակղության քարեր, մեղքեր կամ կույր կետեր, որոնք թույլ կտան, որ նա հեռացնի խավարը մեր կյանքից, երբ շողացնում է իր լույսը մեր սրտերում ու մեր ճանապարհներին: Ինչպես կրակի այունը, որ իսրայելի ժողովրդին առաջնորդեց անապատում, այնպես էլ Քրիստոսի լույսը մեզ կրերի Աստծո ներկայությունը, պաշտպանությունն ու առաջնորդությունը:

Հովհաննեսը բացատրում է, որ Հիսուսը «ճշմարիտ լույսն էր» (Հովհ. 1.9), «իսկ խավարը նրան չտիրեց» (Հմ.5): Կյանքում թափառելու փոխարեն մենք կարող ենք իրենից ուղղություն խնդրել, և նա կլուսավորի մեր ուղին:

**Աղոթք** - Սիրելի՝ Յիսուս, խավարով լի աշխարհում քո ճշմարիտ լույսը փայլեցրո՞ւ իմ սրտում ու իմ ճանփին: Ամեն:

**ՄԵՐ ԿՅԱՆՔԻ ՈՐՈՉ ՈՂՈՐՏԱՆԵՐՆ ՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱԳՐԱԳՈՐԾՈՂ ԼՈՒՅՍԻ ԿԱՐԻՖԲՆ ԵՆԻ ՈՒՆԵՆՈՒՄ: Ուստի ՈՐՈՇԵՆԻ ՆՐԱ ԼՈՒՅԸԸ և ԽՐԱԺՄԱՎԵՆԻ ՄԵզ գայթակղող քարերից:**

Խորագետը տեսնում է չարիքը և զգուշանում, իսկ միամիտներն անցնում են ու պատժվում: (Ար. 27.12)

## ՎՏԱՆԳԸ ԿԱՆԽԵԼ ՄՏԱԾԵԼՈՎ

**1** 892 թ. խոլերայով հիվանդ մի մարդ ելքա գետի միջոցով հիվանդությունը փոխանցեց Համբուրգի ջրամատակարարման համակարգին, ինչի պատճառով տասը հազար մարդ մահացավ: Դրանից ութ տարի առաջ գերմանացի մանրէակենսաբան Ռոբերտ Քոչը բացահայտել էր, որ խոլերան ջրով է փոխանցվում: Այդ հայտնագործությունը ստիպեց, որ եվրոպական մի շարք քաղաքներում մեծ ներդրումներ արվեն ջրային համակարգում և կատարելագործվեն մաքրման ու գտման կայանները: Համբուրգի իշխանությունները, սակայն, անտեսել էին դա, համարել կասկածելի գիտություն և ոչինչ չէին ձեռնարկել:

Առակների գիրքը շատ բան ունի ասելու այն մարդկանց, որոնք դժվարությունների հանդիպելիս հրաժարվում են որևէ բան անել: «Խորագետը տեսնում է չարիքը և զգուշանում» (27.12): Երբ Աստված օգնում է մեզ տեսնել սպասվող վտանգը, ողջամիտ կլինի պատրաստվել այդ վտանգը կանխելուն, դրա դեմ պայքարելուն: Իմաստնությամբ հնարավոր կլինի գեպքերի ընթացքը փոխել կամ իր տված նախագդուշական միջոցներն օգտագործելով՝ դիմագրավել սպառնացող վտանգին: Այլապես կարող ենք անտեսել նախագդուշացման նշաններն ու ինքներս մեզ աղետի մատնել. «միամիտներն անցնում են ու պատժվում» (Հմ.12):

Սուրբքրային պատմություններում ու Հիսուսի կյանքի օրինակով Աստված մեզ ցույց է տալիս այն ուղին, որին պետք է հետևել: Զանց առնելով դա՝ վտանգի մեջ կընկնենք: Թո՛ղ որ ականջալուր լինենք նրա իմաստնությանը, երբ նա իր չնորհքով առաջնորդում է մեզ, և փոխենք մեր ընթացքը:

**Աղոթք - Սիրելի՛ Յայր, խնդրում եմ՝ օգնի՛ ինձ, որ լսեմ քեզ ու հեռանամ վտանգից: Անեն:**

**Չմերժե՛ն ընդունել Ասծոն ոված իմաստնությունը և սովորե՛ն նրա նախագօնւացումներից:**

Տիրո՞ջը հանձնիր քո ճանապարհը և վստահիր նրան, և նա ամեն ինչ կտնօրինի: (Սաղմ. 37. 5)

## ՅԱՆՉՆՎԵԼ ԱՍՏՈՒՆ

**Ա**մերիկացի գերասան Զոնաթան Ռումին, որ Ավետարանների վրա հիմնված «Հնտրյալները» հեռուստանախագծում մարմնավորում էր Հիսուսին, Աստծոն հանձնվելու կարևորությունն զգաց 2018-ի մայիսին: Նա ուժ տարի ապրում էր Հոս Անջելեսում, գրեթե ընչագուրք էր, ուներ ընդամենը մեկ օրվա սնունդ և չուներ աշխատանք: Զիմանալով՝ ինչ անել, գերասանը սիրտը բացեց Աստծո առաջ և իր վիճակի մասին հայտնեց նրան: «Ես բառացի աղոթեցի ու ասացի.«Քեզ եմ հանձնվում, Քեզ եմ հանձնվում»: Հենց նույն օրը նա իր նամակներում վճարման չորս կտրոն գտավ, իսկ երեք ամիս անց հայտնի հեռուստանախագծում նրան վստահվեց Հիսուսի գերը: Եվ Ռումին հասկացավ, որ Աստված օգնում է նրանց, ովքեր վստահում ու ապավինում են իրեն:

Փոխանակ անհանգստանալու և նախանձելու «անիրավություն գործողներին» (Սաղմ. 37.1)՝ սաղմոսերգուն մեզ հրավիրում է ամեն ինչ հանձնել Աստծուն: Երբ ամբողջովին կենտրոնանանք իր վրա «Տիրոջը վստահենք և բարին անենք», «Նա մեր սրտի ուզածը կտա» (Հմ. 3.4): Եթե մենք նրան հանձնենք մեր բոլոր ցանկությունները, առօրյա խնդիրներն ու անհանգստությունները, «Նա ամեն ինչ կտնօրինի և լույսի նման դուրս կհանի մեր արդարությունը» (Հմ.5-6): Որպես Հիսուսին հավատացողներ՝ մեզ համար կարևոր է թույլ տալ, որ նա որոշի, թե ինչպիսին է լինելու մեր կյանքը:

Եկե՛ք հանձնվենք ու վստահենք Աստծուն: Երբ մենք այդպես վարվենք, նա կանի այն, ինչն անհրաժեշտ է ու լավագույնն է:

**Աղոթք - Սիրո՞ղ Յայր, խնդրում եմ՝ օգնիր ինձ, որ այսօր ազատորեն հանձնվեմ քեզ և զգան քո կյանքն ու խաղաղությունը: Ամեն:**

**Դժվարություններ ու անորոշություններ միշտ էլ կլինեն մեր կյանքում, բայց կարևոր մեզ համար Աստծուն հանձնվելն է:**

Դրա համար չենք վիատվում: Թեև մեր արտաքին մարդը քայլայվում է, բայց մեր ներքին մարդն օրեցօր նորոգվում է: (Բ.Կորոնթ. 4.16)

## ՍԻՐՏ ՉԿՈՐՑՆԵ՞Ս

**Ե**ս չեմ հիշում մի ժամանակ, երբ մայրս՝ Դորոթին, առողջ և լավ լիներ: Երկար տարիներ տառապում էր շաքարախտից, որի բարդություններից էր նաև երիկամների խնդիրը: Կոտրվածքների պատճառով անվասայլակով էր տեղաշարժվում, ներող ուներ և տեսողությունն էր օրեցօր վատանում:

Սակայն որքան մայրս Փիղիկապես տկարանում էր, այնքան նրա բարեպաշտությունն ավելանում էր: Նա ժամերով աղոթում էր, որ ուրիշները ճանաչեն ու զգան Աստծո սերը: Նրա համար Աստվածաշնչի խոսքերն ավելի էին քաղցրացել: Իսկ տեսողությունը վատանալու օրերին նա իր քրոջը նամակ գրեց, որում ներառել էր հատված կորնթացիներին ուղղված Բ նամակից. «Դրա համար չենք վհատվում: Թեև մեր արտաքին մարդը քայլայվում է, բայց մեր ներքին մարդն օրեցօր նորոգվում է» (Հմ. 4.16): Պողոս առաքյալը գիտեր, թե որքան դյուրին է «սիրտը կորցնելը»: Վերոհիշյալ նամակի 11-ում նա նկարագրում է իր կյանքի վտանգները, ցավն ու զրկանքները (Հմ.23-29): Բայց նա այդ «դժբախտությունները» համարում է ժամանակավոր: Եվ խրախուսում է մարդկանց նայել ոչ թե այն բաներին, ինչ տեսնում են, այլ անտեսանելիներին, որոնք հավիտենական են (4.17-18):

Հակառակ մեզ հետ կատարվող ամեն ինչին՝ մեր սիրող Հայրը շարունակում է մեզ ամեն օր նորոգել ներքնապես: Նրա ներկայությունը մեզ վստահություն է տալիս: Աղոթքի պարգևի միջոցով նա ընդամենը մեկ շուրջ է հեռու մեղանից: Եվ նրա խոստումները մեզ զորացնելու, հույս ու ուրախություն տալու մասին, միշտ ճշմարիտ են:

**Աղոթք -** Թանկագին Յայր, շնորհակալ եմ իմ հանդեպ հավատարիմ սիրուդ և ներկայությանդ կատարության համար: Անեն:

**Շատ բաներ կարող են մեզ հուսահատեցնել կամ դաշտառ դառնալ, որ «կորցնեն մեր սիրտը»: Սակայն Նրա խոսքը բաջալերում է մեզ**

Քանի որ ով Տիրոջ անունը կանչի, կփրկվի: (Հռոմ. 10.13)

## ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ ՄԵԿ ԴՈՒՌ

**Մ**անկությանս տարիների մեր թաղամասի ճաշարանի կարգուկանոնը շատ բնորոշ էր 1950-ական թվականների վերջին և 1960-ականների սկզբին գոյություն ունեցող ազգային ու սոցիալական ըմբռնումներին: Խոհանոցի ստորին աշխատողները՝ խոհարարի օգնականը և ինձ նման աման լվացողները, սևամորթ էին, ճաշարանի հաճախորդները՝ սպիտակամորթ: Սևամորթ հաճախորդները կարող էին ուտելիք պատվիրել, բայց գրանք պետք է վերցնեին հետեւի դռնից: Նման քաղաքականությունը այդ շրջանում դարձավ սևամորթների հանդեպ անարդար վերաբերմունքի պատճառ: Թեև այդ շրջանից շատ ժամանակ է անցել, բայց մենք դեռ աճելու շատ տեղ ունենք այն հարցում, թե ինչպես ենք վերաբերմում միմյանց հանդեպ՝ որպես Աստծո պատկերով ստեղծված մարդիկ:

Աստվածաշնչի որոշ հավածներ, ինչպես օր. Հռոմեացիներին 10. 8-13-ը, ցույց են տալիս, որ Աստծո ընտանիքում չկան հետեւի դռներ, այնտեղ բոլորը ողջունելի են: Բոլորն այնտեղ մտնում են նույն կերպով՝ հավատալով Հիսուսի մահվանը և մաքրվելու ու ներվելու համար: Այդ փոխակերպող փորձառության մասին Աստվածաշնչի խոսքը պահպանված է (Հմ. 9,13): Մարդկային հավասարության վրա չեն կարող ազդել նրանց ազգային պատկանելությունն ու սոցիալական կարգավիճակը: Ինչպես ասում է Սուրբ Գիրքը. «Ամեն ոք, ով նրան հավատա, չի ամաչելու: Հըեայի և հույնի միջև խտրություն չկա, որովհետեւ բոլորի Տերը նույնն է, առատաձեռն բոլորի հանդեպ, ովքեր կանչում են իրեն» (Հմ. 11-12): Դու քո սրտում հավատո՞ւմ ես Հիսուսի մասին աստվածաշնչյան պատգամին: Եթե այս, ուրեմն բարի՝ գալուստ հավատքի ընտանիք:

**Աղոթք -** Յայր, սիրտս ուրախանում է, որ Դու այնքան սիրեցիր աշխարհը, որ ուղարկեցիր Հիսուսին: Ամեն:

**Աստվածաշնչի դատամը հստակ է: Հիսուսի միջոցով մենք ունենք ներում, և շատերս ունենք այդ դատամի կարիքը:**

Տերն օծել է ինձ....դափնեպսակ տալու մոխրի փոխարեն: (Ես. 61.1, 3)

## ՄՈԽԻՐՆԵՐԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆԸ

**Կ**ոլորագոյի պատմության մեջ ամենակործանարար Մարշալ-յան հրդեհից հետո նախարարություններից մեկը, որոշելով օգնել տուժած ընտանիքներին, առաջարկեց մոխրների մեջ փնտրել հրո ճարակ գարձած թանկարժեք իրերը, որոնք մարդիկ նշել էին: Դրանք շատ քիչ էին: Մի մարդ քնքշորեն ասաց իր ամուսնական մատանու մասին, որը դրել էր ննջարանի զգեստապահարանում: Տունն ամբողջովին մոխրի էր վերածվել, և մատանին որոնողների ջանքերն արդյունք չտվին:

Եսայի մարգարեն ողբալով գրում է Երուսաղեմի մոտալուտ կործանման մասին: Դեպքեր էլ կան, երբ մենք զգում ենք, որ մեր կյանքն է վերածվում մոխրի, որ հոգեկան ու զգացական որևէ բան չի մնացել: Բայց Եսայի մարգարեն հույս է տալիս. «Տերն ինձ ուղարկել է դարմանելու բեկված սիրտ ունեցողներին....և բոլոր սգավորներին մխիթարելու» (Ես. 61. 1-2): Աստված փառքի է վերածում մեր ողբերգությունը. «Պափնեպսակ է տալու մոխրի փոխարեն» (Հմ.3): Նա խոստանում է, որ «պիտի վերաշինեն հին ավերակները, պիտի վերականգնեն նախկինում ամայացած վայրերը» (Հմ.4):

Մարշալյան հրդեհի վայրում մի կնոջ հաջողվեց գտնել ամուսնու մատանին, որը դեռ պատյանի մեջ էր: Հուսահատությանդ մեջ Աստված իր ձեռքը մեկնում է քո մոխրներին և այնտեղից հանում քեզ համար իսկապես թանկարժեք իրը:

**Աղոթք - Սիրելի՝ Յայր, խնդրում եմ՝ մոխրս վերածի՛ր գեղեցկության: Ամեն:**

**Կյանքում մեր դիմագրաված դժվարությունները սիհում են մտածել, թե ամեն ինչ կորցրել են: Սակայն Ասված կարող է մեզ դուրս հանել մոխրներից՝ տալով նոր հույս:**

ժողովուրդը մեծ կրակ չարեց նրա համար, ինչպես որ արել էր նրա հայրերի համար: (Բ. Մնաց. 21. 19)

## ԵՐԵՔ ԹԱԳԱՎՈՐ

«Համիլթոն» հայտնի երաժշտական ներկայացման մեջ Անգլիայի Զորջ թագավորը երգիծաբար ներկայացված է որպես խելագար ծաղրածու և չարագործ: Սակայն այդ թագավորի կենսագրության մեջ ասվում է, որ իրականում նա բռնակալ չի եղել, ինչպես նկարագրված է տվյալ ներկայացման մեջ կամ Ամերիկայի անկախության հռչակագրում: Եթե նա այդ դաժան բռնակալը լիներ, ծայրահեղ ու դաժան միջոցներով խեղդած պիտի լիներ ամերիկացիների անկախության ձգտումը: Իրականում նա աչքի է ընկել իր «քաղաքակիրթ ու բարեսիրտ» խառնվածքով: Ո՞վ գիտե, գուցե Զորջ թագավորն ափսոսանքով է մահացել: Արդյո՞ք նրա թագավորությունն ավելի հաջող կլիներ, եթե ավելի դաժան վարվեր իր հպատակների հետ: Պարտադիր չէ: Աստվածաշնչում կարդում ենք Հովքամ թագավորի մասին, որն իր գահն ամրապնդեց «սրով սպանելով իր բոլոր եղբայրներին, նաև իսրայելի իշխաններից ոմանց» (Բ Մնաց. 21.4): Նա «չարիք գործեց Տիրոջ առաջ» (Հմ.6): Նրա անողոք թագավորությունը օտարացրեց իր ժողովրդին, և մարդիկ չլացին նրա սարսափելի մահվան համար, ոչ էլ թաղման ժամանակ խունկ ծխեցին (Հմ.19): Պատմաբանների քննարկելիք թեման է, թե արդյո՞ք Զորջ թագավորը չափազանց փափուկ էր, իսկ Հովքամը՝ չափազանց դաժան: Նախընտրելին Հիսուսի ձևն է, որը «լի է չնորհով ու ճշմարտությամբ» (Հովկ. 1.14): Քրիստոսի ակնկալիքները հաստատ են (Նա պահանջում է ճշմարտություն), նաև ընդունում է նրանց, ովքեր հետեւում են իր առաջնորդությանը: Ապա իր սուրբ առաջնորդությամբ նա զորացնում է մեզ՝ այդ անելու համար:

**Աղոթք - Սիրելի Յիսուս, նպատակ ունեմ, հետևելով Ձեզ,  
առաջնորդել ուրիշներին: Անեն:**

**Պատասխանատվություն ունենք ուրիշներին առաջնորդել դեռի  
Յիսուսը՝ ցույց տալով Նրա ընորհն ու ծամարտությունը:**

ԱՍՏՎԱԾԱՇԽԱՑ ՄԵԿ ՏԱՐՈՒՄ | Երեմիա 12-14 և Բ Տիմոթեոս 1

Մոտ եք կենդանի Վեմին, որը թեև մարդկանցից մերժված է, բայց Աստծու առաջ ընտրյալ ու պատվական է: (Ա.Պետ. 2.4)

## ՈՍԿՈՒՑ ԱՎԵԼԻ ՊԱՏՎԱԿԱՆ

**Պ**ատահել է, որ բացօթյա առևտրի տաղավարում նայեք ցուցադրված էժան ապրանքներին ու դրանց մեջ գտնեք անհավանական արժեքավոր մի բան: Իրականում այդպիսի բան պատահել է Կոնեկտիվուտում, երբ էժան վաճառակետից 35 դոլարով ձեռք բերված ծաղկավոր հնառն չինական գավաթը 2021 թ. աճուրդում վաճառվեց 700 հազար դոլարով: Պարզվեց, որ դա 15-րդ դարից պահպանված հազվագյուտ ու պատմական նշանակության իր էր: Այս դեպքը հիշեցում է այն մասին, որ այն, ինչ ուրիշները համարում են անարժեք, իրականում կարող է շատ մեծ արժեք ունենալ: Դետրոս առաքյալը աշխարհացրիվ հավատացյալներին բացատրում է, որ Տեր Հիսուսի հանդեպ նրանց ունեցած հավատքը շատերը մերժում են: Կրոնական հրեա առաջնորդների մեծ մասի կողմից արհամարհված և հոռմեական կառավարության ձեռքով խաչված Քրիստոսին շատերը չէին գնահատում, քանի որ նա չէր արդարացրել իրենց ակնկալիքներն ու ցանկությունները: Սակայն նա «թեև մարդկանցից մերժված է, բայց Աստծու առաջ ընտրյալ ու պատվական է» (Ա.Պետ. 2.4): Նրա արժեքը մեզ համար անսահմանորեն ավելի թանկ է, քան արծաթն ու ոսկին (1. 18-19): Եվ մենք վստահ ենք, որ «Նրան հավատացողը չպիտի ամաչի» (2.6): Երբ ուրիշները, անարժեք համարելով, մերժեն Հիսուսին, եկե՛ք մեկ այլ հայացքով նայենք ու տեսնենք նրա պատվականությունը: Աստծո Հոգին կարող է մեզ օգնել՝ տեսնելու Քրիստոսի անգին պարգևը, որ բոլոր մարդկանց հրավիրում է դառնալ Աստծո ընտանիքի մաս«Հիմա Աստծու ժողովուրդ եք, որ....արժանացել եք ողորմության» (Հմ.10):

**Աղոթք - Սիրո՞ղ Յիսուս, շնորհակալ եմ թեզ՝ հնազանդ կյանքով ապրելուդ համար: Այն օգնում է, որ ես ել դառնամ Աստծո ընտանիքի մի մասը: Ամեն:**

**Տե՛ս Տե՛ր Յիսուսի իրական արժեքը և Նրան վստահելու օրհնությունները փոխանցի՛ր ուրիշներին:**

Քեզ պիտի հուսան քո անունը ճանաչողները, որովհետև դու չես լքում քեզ փնտրողներին: (Սաղմ. 9.10)

## **ԿԱՐՈՌ ԵՍ ՎԱՏԱՐԵԼ ԱՍՏԾՈՒՆ**

**Ե**րբ կատվիս՝ Միկիի աչքերը բորբոքվեցին, ես ամեն օր աչքի գեղ էի կաթեցնում: Հենց նրան դնում էի լոգարանի սեղանին, հանգիստ նստում, վախվորած հայացքով նայում ու սպասում էր կաթիլների հոսքին: Ես շոյում էի նրան, ու կատարում բոլոր գործողությունները: Կենդանին առանց հասկանալու հնազանդ սպասում էր, չէր փախչում կամ ճանկում: Ընդհակառակը, ավելի էր սեղմվում ինձ: Այսինքն՝ վստահում էր ինձ:

Երբ Դավիթը գրեց Թրդ սաղմոսը, նա հավանաբար արգեն ունեցել էր Աստծո սիրո և հավատարմության փորձառությունը: Դիմել էր նրան թշնամիներից պաշտպանելու խնդրանքով և ստացել արձագանք (Հմ. 3-6): Դավիթի կարիքների ժամանակ Աստված նրան հուսախար չէր արել, ուստի Դավիթը հասկացել էր, որ նա հզոր է ու արդար, սիրող ու հավատարիմ: Եվ վստահել էր նրան, որովհետև գիտեր, որ նա վստահելի է:

Ես Միկիին ինսամեն եմ այն օրվանից, երբ փողոցում գտա փոքր ու սովահար ձագուկին: Ու նա գիտի, որ կարելի է ինձ վստահել, նույնիսկ այն պահերին, երբ իմ արարքներն իր համար անհասկանալի են: Հիշելով Աստծո հավատարմությունը մեր հանդեպ և իր նկարագիրը՝ մենք էլ կարող ենք վստահել նրան՝ նույնիսկ առանց հասկանալու իր արածները: Թող որ շարունակենք վստահել Աստծուն կյանքի դժվարությունների մեջ:

Աղոթք - Սիրելի՛ Յայր Դու միշտ հավատարիմ ես: Օգնի՛ր ինձ, որ վստահեմ քեզ: Թող դժվարություններն ինձ ավելի մոտեցնեն քեզ: Ամեն:

**ՄԵՐ ԴԻՄԱԳՐԱՎԱԾ ԺԱՆՐ ԻՐԱՎԻԾԱԿՆԵՐՈՒՄ ԱՍՎԱԾ ՇՈՒՅՑ Է ՏԱԼԻՒ ԻՐ ՄԵՐՆ ՈՒ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴԵՏՆԱՐԱՐ ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆԻ ՎՍՏԱՀԵԼ ԻՐԵՆ:**

Ես եմ Տերը, Տեր Աստվածը՝ Տեր ողորմած և գթած, համբերատար, առատ ողորմությամբ և ճշմարտությամբ: (Ելք. 34.6)

## ՅԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԿԱՐԵԿՑՈՒԹՅՈՒՆ

**Ա**ռաքիչը ուշացրել է պատվիրածդ ուտելիքը, կարող ես բջջային հեռախոսով ցածր գնահատել նրա ծառայությունը: Խանութպանը հետդ կոպի՞տ վարվեց: Կարող ես անմիջապես քննադատել նրան: Բջջային հեռախոսները մեզ հնարավորություն են տալիս գնումներ կատարել, ընկերների հետ կապ պահպանել և այլն, նաև՝ միմյանց հրապարակավ գնահատել: Իսկ դա կարող է նաև խնդրահարույց լինել: Այդպես հեռակա գնահատական տալիս մարդիկ հիմնականում խորամուխ չեն լինում հանդամանքների մեջ: Օրինակ առաքիչը ուտելիքն ուշացնում, կամ խանութպանը կոպիտ է վարվում հաճախորդի հետ իրենցից անկախ պատճառներով: Հնարավոր է մեկն ամբողջ գիշեր հիվանդ երեխայի կողքին արթուն է մնացել, մեկ ուրիշն էլ այլ հիմնավոր պատճառ ունի: Հետևաբար, ինչպե՞ս խուսափել մարդկանց անարդարացի գնահատականներ տալուց: Ելքի 34. 6-7 հատվածում Աստված նկարագրվում է որպես «ողորմած, գթած և համբերատար», ինչը նշանակում է, որ նա մեր ձախողումները չի դատի՝ առանց նկատի առնելու հանդամանքները: «Համբերատար» նշանակում է, որ նա բացասական գնահատական չի տա միայն մեկ ձախողման համար: «Ողորմած», որ մեզ ուղղելու նրա թելադրանքը մեր բարիքի համար է, և ոչ թե վրեժինդիքը լինելու և «գթած», որ մեր կյանքը չպետք է որոշվի մեկ աստղանի գնահատականի օրինակով: Քանի որ Աստծո նկարագիրը պետք է լինի մեր հիմքը (Մատթ. 6.33), մենք կարող ենք խուսափել բջջային հեռախոսների հնարավորություններից և օգտագործել իր առաջարկածը: Առցանց գարաշը ջանում բոլորս կարող ենք կոպտորեն գնահատել ուրիշներին: Թող Սուրբ Հոգին այսօր զորացնի մեզ ավելի կարեկից լինելու համար:

Աղոթք - Սուրբ Յոգի, խնդրում եմ այսօր իմ մեջ աճեցրու աստվածապաշտ հոգու պտուղը, հատկապես երբ առցանց եմ:

Ամեն:

**Որդես Ասծոն զավակներ՝ հարկավոր է ավելի շատ  
կարեկցություն ցուցաբերել, քան բննադատել:**

Ես հավիտյան պիտի բնակվեմ քո խորանում, հավիտյան պիտի ապավինեմ քո թևերի ծածկույթին: ( Սաղմ. 61.4)

## ԱՍՏԾՈ ԹԵՎԵՐԻ ՏԱԿ

**Մ**եր թաղամասի լճակում կանադական սագերի մի քանի ընտանիք կա: Փոքրիկ սագերն այնքան փափլիկ ու անուշիկ են, որ անհնար է անտարբեր անցնել: Բայց այդտեղով քայլելիս կամ փազելիս ես խուսափում եմ նրանց ուղիղ նայել, այլապես կարժանանամ մայր սագերի ֆշշոցին ու հարձակմանը:

Իր ձագերին պաշտպանող թռչունների պատկերով Սուրբ Գրքում նկարագրվում է Աստծո քնքուց ու պաշտպանող սերն իր զավակների հանդեպ. «Նա քեզ կծածկի իր փետուրներով, նրա թերթի տակ ապահով կլինես. նրա ճշմարտությունը վահան է և զրահ» (Սաղմ. 91.4): 61-րդ սաղմոսում Դավիթը կարծես թե պայքարում է Աստծո այսպիսի հոգատարությունն զգալու համար: Աստծուն նկատելով որպես իր «ապավեն ու զորավոր աշտարակ»՝ նա «երկրի ծայրից» հուսահատ կանչում է ( հմ.2) և փափագում ես մեկ անգամ «ապավինել նրա թերթի ծածկույթին» (հմ.4):

Իր ցալին ու բուժման կարիքը հայտնելով Աստծուն՝ Դավիթը միսիթարպեց՝ իմանալով, որ Աստված լսում է իրեն (հմ.5): Աստծո հավատարմության շնորհիվ նա խոստանում է «Նրա անվանը սաղմոս ասել հավիտյան» (հմ.8):

Սաղմոսերգուի նման մենք նույնպես, երբ հեռացած զգանք Աստծո սիրուց, կարող ենք հետ փազել գեպի իր գիրկը, որպեսզի վստահ լինենք, որ նույնիսկ մեր ցավի մեջ նա մեզ հետ է, կպաշտպանի ու կինամի մեզ, ինչպես մայր թռչունն իր ձագերին:

**Աղոթք -Սիրելի՛ Յայր, շնորհակալ եմ քեզ՝ իմ հանդեպ քո մեծ ու պահպանիչ սիրո համար: Օգնի՛ ինձ ապահով**

**հանգստանալ քո քնքուց խնամքի ներքո: Ամեն:**

**Պահտամելու համար Ասված Եր հզոր թևերը տարածում է մեզ վրա: Ուստի արժե բոլոր դարագաներում նրան աղավինել:**

Զեզանից ամեն մեկը, եթե իր ամբողջ ունեցվածքից չիրաժարվի, չի կարող իմ աշակերտը լինել: (Ղուկ. 14. 33)

## ԱՐԺԵ ՀԻՍՈՒՍԻՆ ՀԵՏԵՎԵԼ

**Պ**ոնիտը կրոնական, բայց ոչ քրիստոնեական ընտանիքից էր: Հոգեռոր հարցերի մասին իրենց զրույցները չոր էին ու ակադեմիական: «Ես շարունակ աղոթում էի, սակայն Աստծուց ոչ մի պատասխան չէի ստանում», -պատմում է նա:

Եվ նա սկսեց ուսումնասիրել Աստվածաշունչը: Դանդաղ ու հաստատակամորեն սկսեց զարգացնել իր հավատը Հիսուսի հանդեպ: Ռոնիտը այսպես է նկարագրում կողմնորոշման անմոռաց պահը. «Ես իմ սրտում հստակ լսեցի մի ձայն, որ ասում էր. «Դու բավական լսեցիր, բավական տեսար: Հիմա՝ ժամանակն է հավատալու»: Բայց նա դիմագրավեց իր հոր զայրությը. «Հայրս այնպես պատասխանեց, ասես Վեզուվը ժայթքեց»:

Երբ Հիսուսը քայլում էր այս աշխարհի վրա, բազմությունը հետեւում էր Նրան (Ղուկ. 14.25): Հայտնի չէ, թե ինչ էին փնտրում մարդիկ, բայց ինքը աշակերտներ էր փնտրում: Իսկ դա զոհողություններ էր պահանջում, որովհետև Հիսուսն ասաց. «Եթե մեկն ինձ մոտ գա, բայց չհրաժարվի իր հորից ու մորից, կնոջից ու զավակներից, եղբայրներից ու քույրերից, նույնիսկ իր կյանքից, նա չի կարող իմ աշակերտը լինել» (Հմ. 26): Նրա ասածն այն չէր, որ մենք տառացիորեն պետք է ատենք մեր ընտանիքը: Այլ այն, որ ամենից առաջ իրեն պետք է ընտրենք: Դրա համար ասում էր. «Զեզանից ամեն մեկը, եթե իր ամբողջ ունեցվածքից չհրաժարվի, չի կարող իմ աշակերտը լինել» (Հմ. 33): Եվ խորապես սիրելով հանդերձ իր ընտանիքը՝ Ռոնիտը եղբակացըց, որ ամենամեծ գնով էլ արժե հետեւել Հիսուսին: Երբ Հիսուսը առաջնորդում է մեզ, ինչի՞ց ենք հրաժարվում մենք՝ Նրան հետեւելու համար:

**Աղոթք - Յայր, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ, որ ամեն բանից առաջ ընտրեն քո Որդուն: Ամեն:**

**Եթե որուել ես հետեւել Յիսուսին, ի՞նչ է արժեցել դա ինձ համար:**

Ո՞վ աքենացիներ, տեսնում եմ, որ դուք ամեն առումով պաշտամունքասեր եք: (Գործը 17. 22)

## ԲՈԼՈՐՆ ԵՆ ՊԱՇՏՈՒՄ

**Վ**երջերս այցելել էի Հունաստան: Պտտվելով Աթենքի Հին Ագորայի շուրջ, այնտեղ, որտեղ փիլիսոփաներն ուսուցանել են, աթենացիները՝ պաշտել, Հին ակրոպոլիսի ստվերում տեսա Ապոլոնի ու Զևսի զոհասեղանները, որտեղ մի ժամանակ կանգնած էր Աթենաս աստվածուհու արձանը:

Մենք այսօր չենք խոնարհվում Զևսի ու Ապոլոնի առջև, բայց հասարակությունը պակաս պաշտամունքասեր չէ: Արձակագիր Դեյվիդ Վալլասն ասում է. «Բոլորը պաշտում են», ապա ավելացնում. «Եթե դուք դրամ եք պաշտում և իրեր, ապա երբեք չեք բավարարվելու: Պաշտեցե՛ք ձեր մարմինն ու գեղեցկությունը և միշտ ձեզ տգեղ եք զգալու: Պաշտեցե՛ք իմացությունը և ձեզ հիմար եք զգալու»: Մեր աշխարհիկ դարաշրջանն ունի իր աստվածները, և դրանք բարի ու ազնիվ չեն:

Երբ Պողոսն այցելում էր Ագորա, ասաց. «Ո՞վ աթենացիներ, տեսնում եմ, որ դուք ամեն առումով պաշտամունքասեր եք» (Գործը 17. 22): Ապա առաքյալը նկարագրեց միակ ճշմարիտ Աստծուն՝ որպես բոլորի Արարիչ (Հմ. 24-26), որն ուզում է ճանաչելի լինել (Հմ.27) և իր մասին հայտնել է Հիսուսի հարության միջոցով (Հմ.31): Այս Աստվածը Ապոլոնի ու Զևսի նման մարդու ձեռքով չի կերտվել, և փողի, իմացության կամ որեւէ այլ երեսույթ պաշտելու նման նրան պաշտելը կործանարար չէ:

Մեր «Աստվածը» նա է, ում մենք ապավինում ենք նպատակ ու անվտանգություն ունենալու համար: Երբ երկրային աստվածները մեզ հուսախար են անում, բարեբախտաբար, միակ ճշմարիտ Աստվածը միշտ պատրաստ է մեզ օգնելու (Հմ.27):

**Աղոթք - Հայր, ների՛ր,** որ առաջնություն եմ տալիս հարստությանը, գեղեցկությանը, քաղաքականությանն ու այլ բաների: Կիանեմ դրանք սրտիս զոհասեղանից և կփոխարինեմ թեզանով: Ամեն:

**Մեր ուրցը ուրիշ աստվածներ տեսնելով՝ ինչի՞ վրա ենք դնում մեր հույսը՝ որդես նղարակի ու անվտանգության երաշխավոր:**

Դուք եք աշխարհի լույսը: (Մատթ. 5.14)

## ԱՐՏՎՅՈՒԵԼ ՈՐԴՈՒ ԼՈՒՅԾ

**Մ**որս հետ խիստ վիճել էր: Վերջապես նա համաձայնել էր հանդիպել ինձ հետ: Երբ հասա մեր պայմանավորված վայրը, հասկացա, որ նա արդեն գնացել էր: Բարկացած ուզեցի մի կարճ պատասխան գրել, բայց հանկարծ զգացի, որ Աստված հորդորում է սիրով պատասխանել: Մայրս, կարդարով գրածս, զանգեց ու ասաց, որ ես փոխվել եմ: Աստված օդտագործեց իմ վիճակը, որպեսզի մայրս հարցնի Հիսուսի մասին և ի վերջո ընդունի Նրան՝ որպես իր Տեր ու Փրկիչ:

Մատթեոս 5-ում Հիսուսը հաստատում է, որ իր աշակերտները աշխարհի լույսն են (Հմ.14): Նա ասում է.«Թող ձեր լույսը մարդկանց առաջ փայլի, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Հմ.16): Երբ մենք ընդունենք Քրիստոսին՝ որպես մեր Փրկիչ, կստանանք Սուրբ Հոգու զորությունը: Նա կփոխակերպի մեզ, որպեսզի մենք, ուր էլ որ գնանք, կարողանանք դառնալ աստվածային ճշմարտության ու սիրո պայծառ վկայություններ:

Սուրբ Հոգու զորությամբ մենք կարող ենք լինել հույսի ու խաղաղության ուրախ լույսեր, որոնք ամեն օր ավելի ու ավելի են նմանվում Հիսուսին:՝ Մեր կատարած յուրաքանչյուր լավ բան կդառնա երախտապարտ Հոգով պաշտելու գործողություն, որը գրավիչ կլինի ուրիշների համար և կընկալվի որպես վառ հավատք: Հանձնվելով Սուրբ Հոգուն՝ մենք կկարողանանք պատվել Հորը և արտացոլել Որդուն՝ Հիսուսի լույսը:

**Աղոթք -** Տե՛ր Յիսուս, խնդրում եմ՝ շողացրո՛ւ սիրո քո վառ լույսն իմ ողջ կյանքում, որպեսզի ես կարողանամ պատվել Յորը և քաջալերել ուրիշներին, որպեսզի վստահեն քեզ: Ամեն:

**Տեսնենք Յիսուսի լույսը, որ փայլում է մեկ ուրիշի միջոցով, որի բարի գործերը մեզ մղում են փառաբանելու Ասծուն:**

Ինձ հանեց կորստի հորից՝ տղմոտ ցեխից, ոտքերս կանգնեցրեց վեմի վրա ու քայլվածքս հաստատուն դարձրեց: (Սաղմ. 40.2)

## ԱՍՏԾՈ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ

**Գ**թասիրտ կամավորին իր հերոսական ջանքերի համար կոչեցին «պահապան Հրեշտակ»: Ձեք Մանան իր աշխատավայրում արևային ճառագայթների սարքեր էր տեղադրում, երբ լսեց, որ հնդամյա աղջնակ է կորել և միացավ նրան փնտրողներին: Մինչ գրացիներն ստուգում էին ավտոտնակներն ու բակերը, Մանան գնաց գեպի մոտակա անտառապատ տարածքը, որտեղ էլ նկատեց աղջկան՝ մինչեւ գոտկատեղը ճահճում թաղված: Նա զգուշորեն մտավ ցեխի մեջ, որպեսզի աղջկան անվնաս դուրս բերի ու հասցնի մորը:

Այդ փոքրիկ աղջկա նման Դավիթը նույնպես ազատվելու փորձառություն ունեցավ: Սաղմոսերգուն «Հույսով սպասում էր» Աստծուն, որ պատասխանի իր «սրտագին աղաղակներին» (Սաղմ. 40.1): Եվ Աստված պատասխանեց: Նա թեքվեց, ուշադիր լսեց Դավիթի աղաղակն ու պատասխանեց՝ փրկելով նրան «կորստի հորից՝ տղմոտ ցեխից» (Հմ.2) և տալով նրան կյանքի համար ապահով ու հաստատուն հիմք:

Կյանքի ցեխոտ ճահճից փրկվելով՝ նա ամրապնդվեց ու ըսկըսեց փառաբանության երգեր երգել. «Երանի՛ այն մարդուն, որ իր հույսը դարձնում է Տիրոջը և չի հետեւում ամբարտավաններին և ստության հետեղներին» (Հմ.3-4):

Կյանքի այնպիսի մարտահրավերների առջև հայտնվելիս, ինչպիսիք են նյութական դժվարությունները, ամուսնական խնդիրները և այլն, եկե՛ք աղաղակենք ու սպասենք նրա պատասխանին (Հմ.1): Նա այդտեղ է, պատրաստ է օգնելու մեզ և ամուր տեղ տալու, որպեսզի ոտքի կանգնենք:

**Աղոթք - Սիրելի՛ Հայր, երբ խրվում եմ տիղմի մեջ,  
համբերությանը սպասում եմ քեզ: Ամեն:**

**Ասված դատրաս է մեզ դուրս բերելու նեղություններից ու  
ցավերից: Ուսի վսահենն նրան:**

Տեսեք՝ ինչպիսի՞ սեր շնորհեց մեզ Հայրը, որպեսզի Աստծո որդիներ կոչվենք: (Ա.Հովհ. 3.1)

## ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍ ԱՍՏԾՈ ԸՆՏԱՆԻՔ

**Ե**րբ Շարման Սմիթը Դելանդ Մըքքալոուխն հրավիրեց Մայամիի համալսարանի ամերիկյան ֆուտարոլի թիմում խաղալու, անկեղծորեն սիրեց նրան ու գարձավ հայր, որը նա երբեք չէր ունեցել: Դելանդը նույնպես հիանում էր Շարմանով և ձգտում ամեն ինչում նմանվել նրան: Տասնամյակներ անց Դելանդը գտավ իր կենսաբանական մորն ու նրանից իմացավ, որ իր հոր անունը Շարման Սմիթ է: Այո՛, այո՛, այդ նույն մարդը: Մարզիչ Սմիթն ապշել էր, երբ իմացավ, որ որդի ունի, իսկ Դելանդը նույնչափ գարմացած էր՝ իմանալով, որ հոր իր իդեալը փաստորեն իր իսկական հայրն է:

Հաջորդ անգամ երբ նրանք հանդիպեցին, Շարմանը գրկեց նրան ու ասաց. «Տղա՛ս»: Դելանդն այդ բառը երբեք չէր լսել հոր բերանից: Նա նաև գիտեր, որ Շարմանն այդ խոսքն ասում է այնպիսի գոհունակությամբ, կարծես ասելիս լինի. «Ես հպարտ եմ, որ սա իմ տղան է»:

Մենք նույնպես պետք է ուրախանանք մեր երկնավոր Հոր կատարյալ սիրով: Հովհաննեսն ասում է. «Տեսե՛ք՝ ինչպիսի՞ սեր չնորհեց մեզ Հայրը, որպեսզի Աստծո որդիներ կոչվենք» (Ա.Հովհ. 3.1): Մենք էլ ենք զարմանում Դելանդի նման, որը չէր համարձակվում մտածել, որ Շարմանի նման մեկը կարող էր իր հայրը լինել: Իսկապե՞ս դա ճիշտ է: Հովհաննեաը պնդում է, որ այո՛. «Աստծո որդիներ ենք կոչվում» (Հմ.1):

Եթե հավատում ես Հիսուսին, Նրա Հայրը նաև քո հայրն է: Դու կարող ես աշխարհում քեզ միայնակ զգալ: Բայց ճշմարտությունն այն է, որ դու ունես մի Հայր՝ միակն ու կատարյալը, և նա հպարտ է, որ քեզ զավակ է անվանում:

**Աղոթք** -Հայր, շնորհակալ եմ, որ իմ հայրն ես: Օգնիր ինձ ապրել որպես քո զավակ: Ամեն:

**Շատ կարենո՞ւ է, որ ընտել ենի Աստծո զավակը լինելը: Ուստի Նրա հանդեռ ցուցաբերենի մեծ սեր:**

Բարիք գործելուց չձանձրանանք: (Գաղ. 6.9)

## ՍՆՈՒՆԴ՝ ԲԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՁ

**Տ**ասներկու տարեկանում իբրահիմը Աֆրիկայից հասավ իտալիա՝ առանց իտալերեն մի բառ իմանալու, կակազելով և ստիպված եղավ հաղթահարել ներգաղթյալների հանդեպ եղած անբարեհաճ վերաբերմունքը: Սակայն այդ ամենը չխանգարեց աշխատասեր երիտասարդին, որ քսան տարեկանում արդեն իտալական Տրենում քաղաքում բացեր պիցցայի խանութի, որի ապրանքը դարձավ աշխարհի 50 լավագույն պիցցաներից: Սա իսկական հաղթանակ էր նրա հանդեպ թերահավատություն ունեցողների նկատմամբ: Իբրահիմի նպատակն էր կերակրել իտալիայի թափառաշրջիկ երեխաներին, և նա նախաձեռնեց «Պիցցայի բարեգործություն» անունով մի գործ՝ ընդլայնելով նապոլիտանի ավանդույթը: Այցելուներին առաջարկվում էր ավելորդ մեկ գավաթ սուրճ գնել, որից գոյացած գումարով կարիքավորներին պիցցա էին նվիրում: Այս տղայի գործունեությունը նաև ներգաղթյալ երեխաների համար նախապաշարումներին չենթարկվելու ու տեղի չտալու իսկական օրինակ էր: Այն հիշեցնում է բոլորին բարիք անելու մասին Պողոսի դասերը գաղատացիներին, երբ նա ասում էր. «Բարիք գործելուց չձանձրանանք, որովհետեւ իր ժամանակին կհնձենք, եթե չըուլանանք» (Գաղ. 6.9): Ապա Պողոսը շարունակում է. «Ուրեմն քանի գեռ ժամանակ ունենք, բարիք անենք բոլորին, մանավանդ հավատի ընտանիքի անդամներին» (Հմ.10): Իբրահիմը, լինելով գաղթական, հաղթահարեց լեզվական և այլ գժվարություններ ու բարիք գործելու հնարավորություն ստեղծեց: Մնունքը դարձավ գեպի հանդուրժողականություն ու բարություն տանող «կամուրջ»: Մենք նույնպես կարող ենք որոնել բարիք գործելու հնարավորություն: Աստված փառափորփում է, երբ տեսնում է մեր հաստատակամությունը և գործում է մեր աննահանջ փորձերի միջոցով:

**Աղոթք - Սիրելի՛ Յայր, ոգեշնչի՛ր ինձ հաստատակամ մնալ քո մեջ, երբ նտածում եմ հանձնվելու նասին: Անեն:**

**Մեր ամնահանջ ընթացքը փառավորում է Ասծուն և մեզ առիք տալիս իր անունով բարեգործություն կատարելու:**

Տեր Աստված կանչեց Աղամին ու ասաց նրան.«Ո՞ւր ես»:(Ծն. 3.9)

## ԿՈՐԾԱՆԱՐԱՐԸ՝ ԿՈՐԾԱՆՎԱԾ

«Թռչնի ձագուկները վաղը կթռչեն»,՝ ասաց կինս՝ Քարին՝ հերթական անգամ նայելով պատշգամբում կախված զամբյուղի մեջ տեղափորված թռչունների ընտանիքին: Կինս ոչ միայն հետեւում էր նրանց, այլև լուսանկարում էր ամեն օր իր ձագերի համար կեր բերող ու կերակրող մայր թռչունին:

Հաջորդ օրը վաղ առավոտյան նա դարձյալ մոտեցավ բնին, սակայն, կանաչը հետ տանելով, թռչունների փոխարեն մի օձ տեսավ, որը պատն ի վեր բարձրանալով, կուլ էր տփել բոլոր թռչուններին:

Քարինը շատ զայրացավ ու սրտնեղվեց, և քանի որ ես քաղաքում չէի, իր ընկերոջը կանչեց՝ օձին հեռացնելու: Բայց վնասն անդառնալի էր:

Աստվածաշունչը պատմում է մեկ այլ կործանարար օձի մասին: Դրախտի պարտեզում օձը խարեց եվային և հորդորեց ուտել այն ծառի պտուղը, որն արգելել էր Աստված: Նա ասաց.«Բնավ չեք մեռնի, այլ Աստված գիտե, որ այն օրը, երբ դրանից ուտեք, ձեր աչքերը կբացվեն, և աստվածների նման կլինեք՝ բարին ու չարն իմացող» (Ծն. 3. 4-5):

Մեղքն ու մահն աշխարհ եկան եվայի ու Աղամի՛ Աստծուն չհնազանդվելու պատճառով և «այն առաջին օձը, որ գեն է ու սատանան» (Հայտն. 20.2), շարունակում է իր խարեռությունը: Բայց Հիսուսը եկել է «որ սատանայի գործերը քանդի» (Ա. Հովհ. 3.8) և նրա միջոցով մենք վերականգնեցինք մեր հարաբերությունը Աստծո հետ: Մի օր նա «ամեն բան նոր է դարձնելու» (Հայտն. 21.5):

**Աղոթք -Տե՛ր Հիսուս, խնդրում եմ՝ ազատի՛ր ինձ սատանայի խարեռությունից: Փրկի՛ Աստված, տո՛ւր ինձ թեզ համար ապրելու շնորհքը: Ամեն:**

**Դիսուսը կարող է վերացնել մեր սրտերում ու կյանքում սատանայի կատարած ավերածությունները: Անհամբեր սղասում ենք Նրա վերադարձին:**

Ոչխարները հետևում են նրան, որովհետև ճանաչում են նրա ձայնը: (Հովհ. 10. 4)

## ՏԱՆԱՉԵԼ ՀՈՎՎԻ ԶԱՅՆԸ

**Ե**րբ ես փոքր տղա էի, բնակվում էի թենեսիի ագարակներից մեկում: Երեկոներն անցկացնում էի ընկերոջս հետ մենք քայլում էինք դեպի անտառ, ձի էինք վարում, գնում էինք արոտավայրեր ու գոմեր՝ տեսնելու, թե ինչպես են ձիերին վարժեցնում: Եվ ամեն անգամ, հենց լսում էի հայրիկիս սուլիչի ձայնը, թողնում էի ամեն ինչ ու գնում տուն: Ազգանշանն անվրեպ էր, գիտեի, որ հայրս կանչում է ինձ: Տասնամյակներ անց էլ լավ հիշում եմ սուլիչի այդ ձայնը:

Հիսուսն իր աշակերտներին ասաց, որ ինքը Հովհին է, իսկ իրեն հետեւողները՝ ոչխարները: «Ոչխարները լսում են նրա ձայնը: Նա իր ոչխարներին կանչում է անուն առ անուն և նրանց դուրս է հանում» (Հովհ. 10.3): Այն ժամանակ, երբ բազմաթիվ առաջնորդներ և ուսուցիչներ փորձում էին շփոթեցնել աշակերտներին՝ հաստատելով իրենց իշխանությունը, Հիսուսը հայտարարում է, որ իր սիրո ձայնը կարող է ավելի հստակ ու պարզ լսվել, քան մյուսներինը: «Ոչխարները հետեւում են նրան, որովհետև ճանաչում են նրա ձայնը» (Հմ. 4):

Հիսուսի ձայնը լսելիս ուշադիր ու զգույշ լինենք և խուսափենք անխոհեմաբար այն մերժելուց, որովհետև ճշմարտությունն այն է, որ Հովհիվը խոսում է պարզ, և նրա ոչխարները լսում են իր ձայնը: Գուցե Հիսուսի խոսքը լինի Աստվածաշնչի մի հատվածով, հավատացյալ ընկերոջ մի խոսքով կամ Սուրբ Հոգու միջոցով, և մենք լսենք այն:

**Աղոթք - Աստված, ինձ պետք է հիշեցնել, որ Դու խոսում ես, իսկ ես լսում եմ: Օգնի՛ր ինձ՝ ուշադրություն դարձնել քո ձայնին, լսել և պատասխանել: Ամեն:**

**Դժվար է թվում Ասծոն ձայնը լսելը, սակայն փորձենք լսել իրեն:**

Երբ սկսվեց նրանց ցնծության երգն ու օրինաբանությունը, Տերը դարան դրեց.... և նրանք կոտորվեցին: (Բ. Մնաց. 20.22)

## ՅԻՍՈՒՍԻ ԳԵՐԱՎԳՈՒՅՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

**Ե**րկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ եվոպական որոշ ռազմական ճամբարներում զինվորների համար օդանավով արտասովոր նվեր ուղարկվեց՝ ուղղաձիգ դաշնամուրներ: Դրանք հատուկ պատրաստված էին մետաղական մասերով, պատված էին ջրակայուն սոսնձով և այնպիսի նյութերով, որ միջատներ չհավաքվեն: Դաշնամուր կոչվածները կոպիտ էին, պարզունակ, սակայն կարոտած զինվորների համար ապահովում էին հաճելի ժամանց, երբ նրանք հավաքվում էին երգելու իրենց սիրելի ու ծանոթ երգերը: Երգելը, հատկապես փառաբանության երգեր երգելը, միջոց է, որով Հիսուսին հավատացողները կարող են խաղաղություն գտնել նաև ճակատամարտերի ժամանակ: Հուղայի Հոսափատ թագավորն այդպես վարվեց, երբ նրա երկրի վրա էին արշավում թշնամական զորքերը (Բ. Մնաց. 20): Նա իր ժողովրդին հավաքեց աղոթքի ու ծոմապահության (Հմ. 3-4): Ի պատասխան՝ Աստված նրան ասաց, որ զինվորներին տանի դեպի թշնամին՝ խոստանալով, որ նրանք «չեն պատերազմելու» (Հմ.17): Հոսափատը հավատում էր Աստծուն և գործում էր հավատքով: Նա երգիչներ նշանակեց Աստծուն փառաբանելու և նրա փառքը օրհնաբանելու համար, որոնք «ընթանալով սպառազինյաների առջեկից, ասում էին. «Գոհացե՛ք տիրոջից, որովհետեւ հավիտյան է նրա ողորմությունը» (Հմ.21): «Երբ սկսվեց նրանց ցնծության երգն ու օրհնաբանությունը, Տերը դարան դրեց.... և նրանք կոտորվեցին» (Հմ.22): Հաղթանակը չի գալիս ինչպես և երբ մենք ցանկանում ենք: Բայց մենք միշտ կարող ենք հոչակել Հիսուսի վերջնական հաղթանակը մեղքի ու մահվան նկատմամբ, որն արդեն նվաճել է մեզ համար: Մենք կարող ենք երկրպագելով հանգստանալ նույնիսկ պատերազմի մեջ:

**Աղոթք - Սիրելի՝ Յայր, Դու իմ թշնամիներից ավելի ուժեղ ես:**  
**Այսօր հավատով բարձրացնում եմ քո անունը: Ամեն:**

**Որտեղ էլ լինենք, կարող ենք փառաբանել Աստծուն, որովհետև  
Հիսուսն արդեն շահել է գերազույն դատերազմը:**

Աղոթեք ձեզ նեղողների համար: (Դուռ. 6.28)

## ՍԵՐ՝ ԱՂՈԹՔԻ ՄԻՋՈՑՈՎ

**Ճ**ոնը տարիներ շարունակ եկեղեցում լարված էր, շատ վատ էր վարվում բոլորի հետ, միշտ պահանջուտ էր ու կոպիտ: Անընդհատ գանգատվում էր, որ իրեն լավ «չեն ծառայում», որ անձնակազմը իր գործը լավ չի կատարում: Անկեղծ ասած՝ հեշտ չէր նրան սիրելը:

Դրա համար էլ, երբ լսեցի, որ նրա մոտ քաղցկեղ է ախտոռոշվել, դժվարացա աղոթել իր համար: Մտաբերեցի նրա դաժան խոսքերն ու տհաճ բնավորությունը: Բայց հիշելով Հիսուսի սիրո կոչը՝ ձգտում ունեցա ամեն օր մի պարզ աղոթք ասել իր համար: Մի քանի օր անց ավելի շատ սկսեցի մտածել նրա անընդունելի հատկությունների մասին ու ենթադրեցի, որ նա հավանաբար կորցրել է իրեն, աջակցության կարիք ունի:

Ես հասկանում եմ, որ աղոթքը Աստծո առաջ բացում է մեր զգացումներն ու հարաբերությունները՝ թույլ տալով, որ Սուրբ Հոգին դանդաղ, բայց հաստատուն կերպով փոխի մեր սրտերը: Զարմանալի չէ, որ մեր թշնամիներին սիրելու կոչը կապված է աղոթելու կոչի հետ. «Աղոթեք ձեզ նեղողների համար» (Դուռ. 6.28):

Պետք է խոստովանեմ, որ հիմա ես ջանում եմ Ձոնի մասին լավ մտածել: Սուրբ Հոգու զորությամբ սովորում եմ նրան տեսնել Աստծո աչքով ու սրտով՝ որպես մարդ, որին պետք է ներել ու սիրել:

**Աղոթք - Սիրելի՛ Յայր,** Դու գիտես, թե ես ինչպես են վերաբերվում նրանց հետ, ովքեր վիրավորել կամ նեղացրել են ինձ: Խնդրում եմ՝ տո՛ւ ինձ շնորհը ու կարեւոցություն ցուցաբերելու սիրտ, որպեսզի աղոթեմ նրանց համար, որովհետև Դու սիրում ես նրանց: Ամեն:

**Դժվար է, սակայն Աստծո դասվիրանն է աղոթել մեզ նեղողների համար:**

Ես եմ Տերը. սա է իմ անունը. Ես իմ փառքը ուրիշին չեմ տա: (Ես. 42. 8)

## ԲԱԽՏԱՎՈՐ ԿՈՇԻԿՆԵՐ

**Թ**ոմը ոտքի տակ զգաց սարսափազդու մի ձայն ու բնազդաբար ցատկեց մի կողմ: Բարեբախտաբար, գետնի տակ գտնվող ականը չպայթեց: Հետո մասնագետները հայտնաբերեցին 40 կիլոդրամանոց պայթուցիկն ու վնասազերծեցին: Թումն այդ «բախտավոր» կոշիկները հագավ այնքան ժամանակ, մինչև որ ամբողջովին մաշվեցին:

Հնարավոր է, որ նա այդ կոշիկներին կառչած էր մնում պարզապես հիշելով մահվանը այդքան մոտ լինելու հանգամանքը: Բայց մարդիկ սխալմամբ հաճախ են այս կամ այն առարկայի վերագրում ինչ-որ գերբնական հատկություն, անվանում այն բախտավոր, երանելի և նույնիսկ համարում Աստծո օրհնության աղբյուր:

Իսրայելցիներն այդ բանը սովորեցին դժվար ճանապարհ անցնելով: Փղշտացիների բանակը դեռ նոր էր պարտության մատնել իրենց: Երբ իսրայելը վերանայում էր իր անհաջողությունը, մեկն առաջարկեց թշնամուն պատասխան տալու համար իրենց մոտ բերել «Տիրոջ ուխտի տապանակը» (Ա. Թագ. 4.3): Գաղափարը լավ ընդունվեց (Հմ. 6-9), որովհետև Ուխտի տապանակը սուրբ առարկա էր: Բայց իսրայելցիները սխալվում էին: Տապանակն ինքնին նրանց ոչինչ չէր կարող տալ: Աստծո ճշմարիտ ներկայության փոխարեն հավատալով ինչ-որ առարկայի՝ նրանք ավելի մեծ պարտություն կրեցին, և թշնամին գրավեց տապանակը (Հմ. 10-11):

Առարկաները երբեք չեն կարող օրհնության աղբյուր լինել, որովհետև օրհնության միակ աղբյուրը Աստված է:

**Աղոթք - Սիրոն Յայր, ներին ինձ, երբ բացի քեզնից փորձում եմ հավատալ մեկ այլ բանի: Ամեն:**

**Դժվարության հանդիմելիս ինչի՞ վրա կարող եմ դնել մեր հավատն ու հույսը:**

Որովհետև իր մտքում ասում էր. «Եթե միայն նրա հագուստին դիպչեմ, կփրկվեմ»: (Մատթ. 9.21)

## ԿԱՌԵԼ ՀԻՍՈՒՍԻՆ

**Ա**ստիճաններով բարձրանալիս գլխապտույտ ունեցա, սիրտս սկսեց արագ աշխատել, ու ես կառչեցի բազրիքին: Բժշկական գննումները ցույց տվեցին, որ ինձ մոտ ներքին արյունահօսություն կար: Բուժումից հետո այդ խնդիրը վերացավ, բայց ես երբեք չեմ մոռանա, թե որքան թույլ էի այդ օրը:

Ահա՝ ինչու ես հիանում եմ տասներկու տարի արնահօսող այն կնոջ օրինակով, որը գրսելորեց հավատ ու համարձակվեց մոտենալ ու հպվել Հիսուսին: «Որովհետև իր մտքում ասում էր. «Եթե միայն նրա հագուստին դիպչեմ, կփրկվեմ» (Մատթ. 9. 20-21): Նա վախենալու պատճառ ուներ. հրեական օրենքը սահմանում էր, որ իբրև անմաքուր կի՞ն՝ նա կարող էր ուրիշներին դարձնել իր նման: Բայց այն միտքը, որ միայն Հիսուսի հանդերձին դիպչելը կարող էր օգնել իրեն, կնոջը մղեց մոտենալ նրան: Հունարեն բառը, որ թարգմանաբար նշանակում է դիպչել, Մատթեոսի 9.21-ում ավելի լայն իմաստ ունի. այն պարզապես դիչել չի, այլ «կառչել» կամ «կապվել»: Կինը ամուր բռնել էր Հիսուսին: Նա հավատում էր, որ Հիսուսը կարող է բուժել իրեն:

Հիսուսն էլ բազմության մեջ տեսավ կնոջ հավատքը: Երբ մենք էլ հավատքով մոտենանք ու կառչենք Քրիստոսին, նա կողջունի մեզ և կգա մեզ օգնելու: Մենք կարող ենք նրան պատմել մեր պատմությունը՝ առանց վախենալու, թե կմերժվենք կամ կպատժվենք: Հիսուսն այսօր մեզ ասում է. «Կառչի՛ր ինձ»:

**Աղոթք - Սիրելի՝ Աստված, շնորհակալ եմ Ձո սիրո համար:** Ես չպետք է ամաչեմ ու վախենամ, որովհետև Դու ընդունում և Քո զավակն ես կոչում ինձ: Ամեն:

**ՄԵՐ ԿՅԱՆԻՒՑ ԱՆԴԱԿԱՍ ԵՆ ցավը, ՏԱՐՈՎԱԴԱՆԻՆ ՈՒ ՆԵՂՈՒԹՅՈՒՆԸ:**  
**ԴՐԱՆՑԻՒՑ ԱՊԱՏՎԵԼՈՒ և օգնության համար կարելի է դիմել ու ԿԱՌԵԼ ՀԻՍՈՒՍԻՆ:**

Եզեկիան իր երեսը դարձրեց դեպի պատը և աղոթեց Տիրոջը: (Դ. Թագ. 20.2)

## ԱՂՈԹՔ ԵՎ ԱՅՑԵՔԱՐՏ

**Վ**երջերս այրիացած կինը գնալով ավելի անհանգիստ էր դառնում: Ապահովագրական ընկերությունից որոշակի գումար ստանալու համար անհրաժեշտ էր որոշակի տեղեկություններ տրամադրել ամուսնու կյանքը խլած դժբախտ պատահարի մասին: Նա խոսել էր մի սոտիկանի հետ, որը խոստացել էր օգնել: Բայց կինը կորցրել էր սոտիկանի այցեքարտը: Եվ նա աղոթեց՝ Աստծուց խնդրելով օգնություն: Շատ չանցած՝ եկեղեցու ճանապարհին մի պատուհանի մոտով անցնելիս նրա աչքին ընկավ նույն սոտիկանի այցեքարտը: Կինը աչքերին չէր հավատում, բայց վստահ էր, թե դա ինչպես է պատահել: Տերը լսել էր իր աղոթքը: Աստվածաշունչն ասում է, որ Աստված լսում է մեր աղոթքները: Պետրոսը գրում է. «Տիրոջ աչքերն արդարների վրա են, ու նրա ականջները՝ գեպի նրանց աղոթքը» (Ա. Պետ. 3.12): Աստվածաշունչը բազում օրինակներ է տալիս, թե ինչպես է Աստված պատասխանում մեր աղոթքին: Մեկն էլ եզեկիայի գեպըն է: Նա հիվանդացել էր, նույնիսկ եսային նրան ասել էր, որ մահանալու է: Եվ «Եզեկիան իր երեսը դարձրեց գեպի պատը և աղոթեց Տիրոջը» (Դ. Թագ. 20.2): Շուտով Աստված եսայի մարգարեին պատվիրում է թագավորին հասցնել այս պատգամը. «Լսեցի քո աղոթքը....ես քեզ պիտի բժշկեմ, և երրորդ օրը պիտի ենես ու գնաս տիրոջ տուն» (Հմ.5): Աստված Եզեկիային չնորհեց ևս տասնհինգ տարվա կյանք:

Միշտ չէ, որ Աստված մեր աղոթքներին պատասխանում է պատուհանին դրված այցեքարտի տեսքով, բայց վստահեցնում է, որ դժվար իրավիճակները միայնակ չենք կարողանա հաղթահարել: Աստված տեսնում է մեզ և լսում մեր աղոթքները:

**Աղոթք - Հայր, շնորհակալ եմ, որ մեզ հետ ես ու լսում ես մեր աղոթքները: Անեն:**

**Մեր մտահոգությունների ցանկը կարելի է տալ Աստծուն՝ խնդրելով Նրա առաջնորդությունն ու օգնությունը:**

Ես պիտի ներեմ նրանց անօրինությունը և նրանց մեղքերն այլևս չեմ հիշի: (Եր. 31. 34)

## ՉՅԻՇՎԱԾ ՄԵՂՔԵՐ

**Ս**առույցը չէի տեսել, բայց զգացի: Պապիս փոքր բեռնատարով շեղվեցի ճանապարհից ու թուա 15 ոտնաչափ հողաթրմբի վրայով: Վերջին միտքս այն էր, թե հրաշք կլինի, եթե ողջ մնամ: Բեռնատարը զառիթափով գլորվեց ու հասավ մինչեւ ձորի հատակը: Ես ջարդված խցիկից անվնաս դուրս եկա:

1992-ի գեկտեմբերյան այդ առավոտ բեռնատարն ամբողջովին փչացավ: Բայց Աստված խնայեց ինձ: Իսկ ի՞նչ ասաց պապս: Իրականում՝ ոչ մի բառ, ոչ հանդիմանություն, ոչ որևէ խոսք հատուցման մասին: Ոչինչ: Պարզապես ներում: Եվ հայրական գոհունակություն, որ ես լավ եմ ու անվնաս:

Պապիս վարքագիծը հիշեցնում է Երեմիայի 31-ում նկարագրված Աստծո շնորհը: Զնայած ահոելի ձախողումներին՝ Աստված խոստանում է վերականգնել հարաբերությունները իր ժողովրդի հետ՝ ասելով. «Ես պիտի ներեմ նրանց անօրինությունը և նրանց մեղքերն այլևս չեմ հիշի» (Եր. 3. 34):

Վստահ եմ՝ պապս երբեք չմոռացավ իմ հասցրած վնասը, բայց նա վարվեց այնպես, ինչպես Աստված է անում. չհիշեցրեց, չամաչեցրեց, չստիպեց աշխատել ու փոխհատուցել վնասը: Ավելին, նախընտրեց այլևս չհիշել այդ դեպքը, ասես չէր էլ եղել:

**Աղոթք - Յայր, շնորհակալ են քո տված ներման համար: Երբ ես կրկին ամաչում եմ արածիս համար, օգնի՛ հիշել, որ քրիստոսով Դու այլևս չես հիշելու իմ մեղքերը: Ամեն:**

**Յակառակ մեր բազմաթիվ մեղերին ու սխալներին՝ Աստված Իր ընորհը ցույց է տալիս Տեր Յիսուսի միջոցով:**

Դու հոգս ես անում և շատ բաներով ես զբաղված, բայց նի բան է հարկավոր: (Ղուկ. 10. 41-42)

## ՄԻ ԲԱՆ Է ՀԱՐԿՎԱԿՈՐ

**Մ**արտ ամսին հանդիպում էի կազմակերպել՝ նվիրված բեթանիացի քույրեր Մարթային ու Մարիամին և նրանց եղբայր Ղազարոսին, որոնց սիրում էր Հիսուսը (Հովհ. 11.5): Անգլիայում էինք, անակնկալ ձյուն տեղաց և մենք ստիպված էինք մեկ օր ավելի մնալ: Հանդիպման մասնակիցներից շատերն ակնարկեցին, որ կարող են դարձյալ ժամանակ տրամադրել «Հարկավոր բանի համար» (Ղուկ. 10. 42), որ Հիսուսն ասաց Մարթային, և նա պետք է ընդուներ ու սովորեր:

Երբ Հիսուսն այցելեց Մարթայի, Մարիամի ու Ղազարոսի տուն, Մարթան տեղյակ չէր, որ նա գալու է: Ուստի նա իրավացիորեն զայրացավ քրոջ վրա, որ մենակ էր թողել իրեն Հիսուսի ու նրա ընկերների համար կերակուր պատրաստելիս: Մակայն Հիսուսը նրան հիշեցրեց. «Դու հոգս ես անում և շատ բաներով ես զբաղված, բայց մի բան է հարկավոր» (Ղուկ. 10. 41-42):

Երբ մենք տարբեր պատճառներով դառնում ենք դյուրագըրգիռ ու ծանրաբեռնված զանազան անելիքներով, կանգ առնենք մի պահ ու հիշենք, թե ի՞նչն է իրականում կարենը կյանքում: Դանդաղեցնենք մի պահ մեր ընթացքը, պատկերացնենք մեզ նստած Հիսուսի ոտքերի մոտ՝ խնդրելու նրանից, որ լցնի մեզ իր սիրով ու կյանքով: Եվ մենք կկարողանանք ուրախանալ՝ լինելով նրա սիրելի աշակերտը:

**Աղոթք -Սիրելի Շիսուս,** շնորհակալ եմ, որ սիրում ես քո ուղիների մասին ինձ սովորեցնելը: Օգնի՛ր ինձ, որ չշեղեմ թեզ իմ գործերով, այլ կենտրոնանամ թեզ վրա: Ամեն:

**Մեր առօրյա գործերն ու զբաղմունները կարող են մեզ թույլ չտալ, որ ստանամ Շիսուսի օրհնությունը: Ընտե՛ն ուրեմն այս մեկ բանը, որն է նստել նրա ուժերի մոտ:**

Զեզ պատմեմ, թե նա ինչ արեց իմ անձի համար: (Սաղմ. 66. 16)

## ՊԱՏՄԻՌ ԱՍՏԾՈ ԲԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**Մ**եր եկեղեցու պաշտամունքի մեջ վկայության հատված կա, որի ժամանակ մարդիկ պատմում են, թե Աստված ինչպես է գործել իրենց կյանքում: Քույր Լանգֆորդը հայտնի էր իր անձնական դարձի մասին պատմությամբ, հետևաբար սպասելի է, որ պաշտամունքի այդ բոպեները նա կարող է զբաղեցնել: Նա ամբողջ սրտով փառաբանում է Աստծուն, որն իր բարեհաճությամբ փոխել է նրա կյանքը:

66-րդ սաղմոսի հեղինակի վկայությունը նույնպես լի է գովասանքով ու վկայում է այն մասին, թե ինչ է արել Աստված իր ժողովրդի համար: «Եկե՛ք և տեսե՛ք Աստծո գործերը. նա իր գործերով ահեղ է մարդկանց որդիների համար» (Հմ.5), Նրա գործերը ներառում էին հրաշքներ (Հմ.6), պահպանություն (Հմ.9), փորձություններ ու խրատներ, որոնց հետևելով՝ իր ժողովուրդն ավելի լավ տեղ հասավ (Հմ.10-12): Աստծո փորձառությունների մասին մյուս հավատացյալների պատմություններից բացի՝ մեր անհատական ճամփորդության մեջ կան նաև յուրահատուկ բաներ: Մեր կյանքում էլ եղել են գեպքեր, երբ Աստված ինքն է իր մասին պատմել: Եվ ուրեմն արժե, որ այդ ամենի մասին պատմենք ուրիշներին.«Զեզ պատմեմ, թե նա ինչ արեց իմ անձի համար» (Հմ. 16):

**Աղոթք** - Երկնավոր Դայր, ուրախանում եմ իմ հանդեպ Ձոքարության բազում արտահայտություններվ: Օգնի՛ր, որ այդ ամենի մասին պատմեմ նաև ուրիշներին: Ամեն:

**Ասված մեզ համար բարի բաներ է անում, որդեսզի ավելի վստահեն իրեն: Պատմենք օրհնություն ստանալու մեր այդ փորձառության մասին ուրիշներին:**

Նրանով մենք ել ժառանգություն ստացանք,....որպեսզի իր փառքի գովար լինենք մենք: (Եփ. 1.11-12)

## ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ

**Մ**ի երիտասարդ ասաց «Քրիստոնեությունն ինձ համար չէ: Զանձրալի է: Ես սիրում եմ արկածախնդրությունը: Դա է ինձ համար կյանքը»: Ես տիրեցի, որ նա տեղյակ չէր այն անհավատալի ուրախության ու ոգևորության մասին, որ տալիս է Հիսուսին Հետեւելը: Որ դա նույնպես ինքնին արկածախնդրություն է, բայց բոլորովին այլ տեսակի և ինքնատիպ: Ես ոգևորված պատմեցի նրան Հիսուսի և այն մասին, թե ինչպիսին է իրական կյանքը նրա հետ:

Միայն բառերը բավարար չեն Հիսուսին՝ Աստծո Որդուն ճանաչելու և նրա հետ քայլելու հետաքրքրությունը նկարագրելու համար: Բայց եփեսացիներին 1-ում Պողոսը մեզ տալիս է իր հետ լինելու վերաբերյալ փոքրիկ, բայց հզոր մի պատկեր: Աստված մեզ ուղղակի երկնքից տալիս է հոգեւոր օրհնություն (Հմ.3), սրբություն և անարատություն (Հմ.4) և մեզ որդեգրում է՝ որպես իր սեփական զավակներին իր թագավորական ընտանիքում (Հմ.5): Նա օրհնում է մեզ իր ներումի ու շնորհի շքեղ պարգևով (7-8), նրա կամքի խորհուրդն ըմբռնելով (Հմ.9) և ապրելու նոր նպատակով, «որպեսզի իր փառքի գովքը լինենք» (Հմ.12): Սուրբ Հոգին դալիս է ապրելու մեր մեջ՝ զորացնելու և առաջնորդելու մեզ (Հմ.13), նա երաշխավորում է հավիտենականություն՝ Աստծո ներկայությամբ (Հմ.14):

Երբ Հիսուս Քրիստոսը մտնում է մեր կյանք, բացահայտում ենք, որ նրան ավելի շատ ճանաչելն ու իրեն մոտիկից հետեւելը արդեն իսկ մեծագույն արկածախնդրություն է: Փնտրի՛ր նրան հիմա և ամեն օր իրական կյանքի համար:

**Աղոթք** - Սիրո՞ղ Յիսուս, շնորհակալ եմ, որ սիրում ես ինձ և միշտ քայլում ես կողքիս: Դու ինձ ավելին ես տվել, քան ես պատկերացնում եմ: Ուրախ եմ, որ ճանաչում ես ինձ, և ես կարող եմ քո նասին պատմել ուրիշներին: Ամեն:

**Հիսուսի հետ բայլելը մեծագույն արկածախնդրություն է յուրաքանչյուր հավատացյալի համար:**

Տերը Կայենին ասաց. «Ինչո՞ւ ես բարկացել»: (Ծն. 4.6)

## ԱՌԱՐԿԵԼ ՍԻՐՈՎ

**Շ**ատ բաներ լավ էր անում, բայց մի խնդիր կար, որ բոլորն էին տեսնում: Իր ազգեցիկ գերը շատ լավ կատարող անձը, սակայն, չէր կարողանում կառավարել իր հույզերը, զայրույթով ու կոպիտ էր խոսում մարդկանց հետ, ինչի հետևանքով շատերը չէին առարկում ու նեղվում էին: Ի վերջո բոլորը հանգեցին այն եզրակացության, որ Քրիստոսով այս եղբոր համար ամեն ինչ կարող էր այլ կերպ դասավորվել: Եթե ես էլ ավելի շուտ սիրով ընդդիմանայի՝ նրան:

Ծննդոց 4-ում Աստված կատարյալ պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպես կարելի է սիրով խոսել որևէ մեկի գործած մեղքի մասին: Կայենը բարկացել էր: Լինելով հողագործ նա «երկրի մրգերից ընծա մատուցեց Տիրոջը» (Հմ.3), բայց այն մերժվեց: «Կայենը շատ բարկացավ և երեսը կախեց» (Հմ.5): Տերը Կայենին ասաց. «Ինչո՞ւ ես բարկացել» (Հմ. 6), ապա հորդորեց հետ դառնալ իր մեղքերից ու բարին կատարել, հետամուտ լինել լավին ու ճշմարիտին: Ցավալի է, որ Կայենն անտեսեց Աստծո խոսքերը և սարսափելի մեղք գործեց՝ սպանեց իր եղբայր Աբելին (Հմ.8):

Մենք չենք կարող ուրիշներին ստիպել, որ հրաժարվեն մեղսալից վարքագծից, բայց կարող ենք կարեկից տոնով հակառակն ասել: Մենք կարող ենք «ճշմարտությունն ասել սիրով», որպեսզի երկուսս էլ «ավելի ու ավելի նմանվենք Քրիստոսին» (Եփ. 4.15): Եվ քանի որ Աստված մեզ ականջներ է տվել լսելու համար, կարող ենք նաև ճշմարտության ծանր խոսքեր լսել ուրիշներից:

**Աղոթք - Յայր,** քաջություն տուր սիրով դիմադրել ուրիշներին և շնորհընվ ընդունել ծանր, բայց ճշմարիտ խոսքերը: Ամեն:

**Մեզ համար կենսական է սիրով ուրիշներին առարկելը, նոյնիսկ երբ լսում եմ ծանր, բայց օգտակար խոսքեր:**

Քեզ իմ շնորհը բավական է, որովհետև իմ գորությունը տկարության մեջ է կատարյալ դառնում: (Բ. Կորնթ. 12. 9)

## ԱՍՏԾՈՎ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԱՔԵԼ

**Գ**րեյնջեր Մըքգոյն արվեստագետ է, որն ուսումնասիրում և քանդակում է թռչուններ՝ հատկապես կենտրոնանալով այդ էակների խոցելիության, նաև ուժի վրա: Նրա ստեղծագործություններից մեկը, որ կոչվում է «Կազդուրում», պատկերում է աջ թերե վերև պարզած բաղի: Նկարի ներքեւ ցուցատախտակին ցույց են տրված թռչունի կազդուրման մանրամասները, բացատրված է, որ «Թռչունի մեծագույն թռւության պահը գալիք ճանապարհի համար ուժ հավաքելու պահն է»: Նաև մեջբերված է «Քեզ իմ շնորհը բավական է, որովհետև իմ գորությունը տկարության մեջ է կատարյալ դառնում» (Բ. Կորնթ. 12. 9) խոսքը, որ Պողոսն ասել է կորնթացիներին: Անձնական պայքարի ու որոնումների մեջ նա Աստծուց խնդրեց, որ իրենից հեռացնի «մարմնի խայթ» կոչվածը (Հմ.7): Նրա տառապանքը կարող էր լինել ֆիզիկական հիվանդություն կամ հոգեոր ներհակություն: Ինչպես Հիսուսն իր խաչելության նախորդ գիշերը Ձիթենյաց լեռան վրա (Ղուկ. 22. 39-44), Պողոսը նույնպես բազմիցս խնդրում է հեռացնել իր այդ տառապանքը: Սուրբ Հոգին պատասխանում է՝ վստահեցնելով, որ ինքը կտա անհրաժեշտ ուժը: Եվ Պողոսը հասկանում է. «որովհետև երբ տկարանում եմ, այն ժամանակ զորանում եմ» (Բ. Կորնթ. 12.10):

Մեր կյանքում այնքա՞ն շատ այդպիսի խայթեր ենք ստանում: Ինչպես թռչունն է իր ուժերը հավաքում երկար ճամփորդությունից առաջ, այնպես էլ մենք կարող ենք հավաքել Աստծո զորությունը մեր առջև ծառացած խնդիրների լուծման համար: Այդ ուժով մենք կդտնենք մերը:

**Աղոթք - Սիրելի՛ Յայր, օգնի՛ ինձ, որ իմ առջև ծառացած դժվարությունների ժամանակ Քեզանից ստանամ իմ ուժը:**  
**Ամեն:**

**Այսօր կարող ես թույլ գգալ, բայց դա հաղթահարելու և նոր ճանադարի ընկնելու համար կարող ես հավաել Աստծո ուժը:**

Ուրախ սիրտը դեղի պես օգտակար է: (Առ. 17.22)

## ԱՆԳԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

**Ե**րեք տարի շարունակ Քալլին ամեն օր մի տարազով կամ գիմակով ողջունում էր ավտոբուսից դուրս եկող գպրոցականներին: Դա աշակերտներին ու վարորդին ուրախացնում և ջերմացնում էր: Իսկ ինքը դա կատարում էր սրտանց և մեծ սիրով:

Քալլին ձեռնամուխ եղավ այդ քայլին, երբ սկսեց զբաղվել երեխանների խնամքով: Իմանալով, թե որքան դժվար է նրանց համար բաժանվել ծնողներից ու դպրոց գնալ, նա որոշեց մանուկներին ողջունել տարազով: Երեք օր անց երեխանները խնդրեցին շարունակել: Զնայած դա ժամանակի ու միջոցների հետ էր կապված, նա շարունակեց: Եվ ինչպես նկարագրում է լրագրող Մերեղիթ Թերհարը, ունեցավ «անգին արդյունք՝ ուրախություն»:

Առակների գրքի մի փոքր հատվածը, որ Սողոմոն թագավորն ուղղել է իր որդուն, լիովին ամփոփում է այս կնոջ արածի իմաստը. «Ուրախ սիրով դեղի պես օգտակար է» (Առ. 17.22): Ուրախացնելով իր կենաբանական, որդեգրված, թե խնամատար երեխաններին, նա հույս ուներ կանխել նրանց մանկական հոգիների փշրվելը:

Ծշմարիտ ու հարատե ուրախության աղբյուրը Աստված է՝ Սուրբ Հոգու միջոցով (Ղուկ. 10.21, Գաղ. 5.22): Հոգին մեզ հնարավորություն է տալիս շողացնելու Աստծո լույսը, երբ մենք ճգտում ենք ուրախություն պարզեել ուրիշներին: Ուրախություն, որը հույս և ուժ է տալիս փորձությունները դիմագրավելիս:

**Աղոթք - Սիրելի՛ Յայր, շնորհակալ եմ ինձ ուրախություն պարզելու համար: Օգնի՛ր, որ այն տարածեմ ուրիշների վրա: Անեն:**

**Եթե երախտաղար են ուրիշներից ստացած ուրախությամբ, եկե՛մ մենք էլ մեր հերթին ուրախացնենք ուրիշներին:**

Որովհետև դու թանկագին ես իմ աչքին, պատիվ գտար, և ես սիրեցի քեզ: (Ես. 43. 4)

## ԱՍԾՈ ՀԱՄԱՐ ԹԱՆԿԱԳԻՆ

**Մ**ինգի հայրը կոպիտ էր ու սառը: Նույնիսկ երեխային բժշկի տանելուց էր խուսափում: Մի անգամ վիճաբանության ժամանակ տղան իմացավ, որ հայրը չի ցանկացել, որ ինքը ծնվի: Անցանկալի լինելու զգացումը նրան հետևեց մինչև չափահաս տարիքը: Եվ երբ նա դարձավ Հիսուսին հավատացող, դժվարանում էր Աստծուն Հայր կոչել, չնայած նրան համարում էր իր կյանքի Տեր:

Իրենց երկրային հայրերին ինչ-ինչ պատճառով չսիրող կամ չընդունող մարդիկ Մինգի նման կարող են կասկածներ ունենալ Աստծո հետ հարաբերություններում, մտածել, թե բեռ են նրա համար, կամ արդյո՞ք նա հոգում է իր մասին և այլն: Մեր երկրային հայրերը կարող են անտարբեր ու հեռու լինել, բայց մեր երկնային Հայր Աստվածը մոտենում է ու ասում. «Ես սիրեցի քեզ» (Ես. 43. 4): Եսայի 43-ում Աստված խոսում է որպես մեր արարիչ ու Հայր: Եթե գեռ կասկածներ ունես, թե նա ուզում է, որ դու ապրես իր խնամքի ներքո՝ որպես իր ընտանիքի անդամ, լսի՛ր, թե ինչ է ասել իր ժողովրդին. «Բե՛ր իմ որդիներին հեռվից և գուստերին՝ երկրի ծայրերից» (Հմ.6): Եթե չգիտես, թե ինչ արժեք ունես իր համար, լսի՛ր նրա հաստատումը. «Դու թանկագին ես իմ աչքին, պատիվ գտար» (Հմ.4):

Աստված մեզ այնքան է սիրում, որ Հիսուսին ուղարկեց մեր մեղքերի պատիճը կրելու, որպեսզի «ով նրան հավատում է, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա» (Հովկ. 3.16): Հետևելով իր ասածներին ու արածներին՝ մենք կարող ենք վստահ լինել, որ թանկ ենք նրա համար, և նա սիրում է մեզ:

**Աղոթք** - Հայր, ամեն օր ուզում եմ ապրել որպես Ձո զավակ՝ քեզ համար թանկ ու պատվական: Ամեն:

**Աստված մեզ սիրող ու մեզ համար հոգ տանող Երկնավոր Հայրն է, իսկ մենի իր թանկագին զավակներն են:**

Պիտի երևաք որպես աշխարհում լույս տվողներ՝ կյանքի խոսքը պահելով: (Փիլ. 2. 15-16)

## ՓԱՅԼՈՒՆ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐ

**Ի**մ ժամանած քաղաքում առաջին բանը, որ աչքի էր զարնում, խաղատներն էին, հաջորդը թմրանյութերի և մեծահասակների խանութները և հսկայական գովազդային վահանակները պատեհապաշտ իրավաբանների մասին, որոնք մեծ գումարներ են վաստակում ուրիշի դժբախտության հաշվին: Ես շատ այլ քաղաքներում եմ եղել, բայց այս մեկը ցածր մակարդակով գերազանցում էր բոլորին: Սակայն հաջորդ առավոտյան տրամադրությունն բացվեց, երբ զրուցեցի տաքսու վարորդի հետ: Նա սաաց, որ ինքն ամեն օր Աստծուց խնդրում է իր մոտ ուղարկել մարդկանց, ում ինքը կարող է օգնել: Եվ խաղամոլները, անբարոյականները, կյանքի լուսանցքում հայտնված մարդիկ նրան պատմում են իրենց խնդիրների մասին: «Ես կանգնեցնում եմ մեքենան ու լսում այդ մարդկանց: Ապա աղոթում եմ նրանց համար: Եվ սա իմ առաքելությունն է», - սաաց այդ բարի մարդը: Հիսուսի՝ այս աշխարհ գալը նկարագրելուց հետո Պողոս առաքյալը Քրիստոսին հավատացողներին կոչ է անում հետամուտ լինել Աստծո կամքին ու «Նրա բարեհաճ ծրագրին» (Հմ.13), «պահել կյանքի խոսքը» (Հմ.16), լինել «Աստծո անբիծ և անմեղ զավակները այն կամակոր և խոտոր սերնդի մեջ, որի մեջ պիտի երևաք որպես աշխարհում լույս տվողներ» (Հմ.15): Տաքսու վարորդի նման մենք էլ պետք է Հիսուսի լույսը բերենք խավարի մեջ: Անգլիացի խոչընուռ պատմաբան, փիլիսոփա ու մշակութաբան Քրիստոֆեր Դավոնն ասել է. «Քրիստոսին հավատացողները միայն պետք է հավատարմորեն ապրեն, որպեսզի փոխեն աշխարհը, որովհետև այդ կենսակերպում «ներառված է աստվածային կյանքի ողջ խորհուրդը»: Եկե՛ք խնդրենք, որ Աստծո Հոգին ուժ տա մեզ, որպես Հիսուսի ժողովուրդ, հավատարմորեն ապրելու և աշխարհի ամենամութ անկյուններում նրա լույսը փայլեցնելու համար:

**Աղոթք - Տե՛ր Յիսուս, շնորհակալ եմ, որ Դու ես աշխարհի լույսը, որ ինձ դուրս է բերում խավարից: Ամեն:**

**Պետք է կենարնանալ ոչ թե աշխարհի չարիի, այլ Քրիստոսի վրա և ուղացնել Նրա լույսը մեր ուրցը:**

Երբ իյուրասիրություն ես անում, կանչի՛ր աղքատներին, խեղերին, կաղերին, կուլյերին, և երանելի կլինես: (Ղուկ. 14. 13-14)

## ԳՈՐԾԱԲԱՆՈՒԹՅՎՆ ՕՐՅՆՈՒԹՅՈՒՆԸ

**2** 016-ին Վանդա Դենչը Գոհաբանության օրվա առիթով հաղորդագրություն ուղարկեց իր թոռնիկին՝ հրավիրելով նրան ընտանեկան ընթրիքի: Սակայն թոռնիկը փոխել էր հեռախոսահամարը, և հրավերը գնաց ժամալ անունով մի անձանոթի: Վերջինը հատուկ ծրագրեր չուներ և իր ով լինելը պարզաբանելուց հետո հարցըց, թե կարո՞ղ է արդյոք ինքն էլ գալ այդ ընթրիքին: Համաձայնություն ստանալով՝ ժամալը միացավ նրանց ընտանեկան հավաքույթին, և դա շարունակվեց ավանդաբար: Միսալ հրավերը ամենամյա օրհնություն դարձավ:

Վանդայի վերաբերմունքը անծանոթին հիշեցնում է Հիսուսի հորդորը Ղուկասի ավետարանում: Փարիսեցի իշխանավորներից մեկի հրավերքի ժամանակ (Ղուկ. 14.1) Հիսուսը տեսավ, թե ովքեր են հրավիրված և թե ինչպես են հյուրերն շտապում պատվավոր տեղերն զբաղեցնել (Հմ.7): Եվ տանտիրոջն ասաց, որ օրհնությունը սահմանափակվում է, եթե մարդկանց հրավիրելիս առաջնորդվում է հետագայում փոխհատուցում ստանալու ակնկալիքով (Հմ.12): Փոխարեն «Եթե հյուրասիրություն ես անում, կանչի՛ր աղքատներին, խեղերին, կաղերին, կուլյերին, և երանելի կլինես» (Հմ.13-14):

Գոհաբանության օրը պատահաբար ժամալին հրավիրելը օրհնություն ու քաջալերանք եղավ Վանդայի համար հատկապես ամուսնու մահից հետո: Եթե ուրիշներին ձեռք մեկնենք առանց որևէ ակնկալիքի, այլ Աստծո սիրով, շատ ավելի մեծ օրհնություն ու քաջալերանք կստանանք:

**Աղոթք - Երկնավոր Յայր, թող իմ հրավերները ցույց տան այն սիրտը, որն ուզում է օրինել ուրիշներին թո առաջնորդությամբ:**  
Ամեն:

**Անսողասելի հրավերները բաջալերում են մեզ և դարնում  
օրհնություն: Պատրաստ լինենք կատարելու դրան:**

Սրտանց սիրում եմ քեզ, ո՞վ Տեր, իմ գորություն: (Սահմ. 18.1)

## ԱՐԺԱՆԻ ԱՄԵՆ ՓԱՌԱՔԱՆՈՒԹՅԱՆ

**Դ**ատերն են համարում, որ ամերիկացի դաշնակահարներ Ֆերանտն ու Թեյչերը բոլոր ժամանակների անզուգական դուետն են եղել: Նրանց կատարումներն այնքան վիրտուոզ էին ու ճշգրիտ, որ մասնագետները նրանց պատկերավոր անվանում էին «չորս ձեռք և մեկ միտք»: Լսելով այդ տաղանդավոր զույգի երաժշտությունը՝ կարելի է պատկերացնել, թե որքան ջանք է պահանջվել նման վարպետության հասնելու համար: Բայց մի բան էլ կա: Նրանք սիրում էին իրենց գործը: Իրականում նույնիսկ հանգստի անցնելուց հետո 1989-ին Ֆերանտն ու Թեյչերը երբեմն հայտնվում էին դաշնամուրի խանութիւնում պարզապես հանպատրաստից նվագելու համար: Նրանք ուղղակի սիրում էին ստեղծագործել:

Դավիթն էլ էր սիրում երաժշտություն ստեղծել, բայց նա իր երգին ավելի բարձր նպատակ հաղորդելու համար միավորվեց Աստծու հետ: Նրա սաղմուները հաստատում են իր պայքարով լի կյանքը, Աստծուց կախվածությունն ու ապրելու ցանկությունը: Նույնիսկ անձնական անհաջողությունների և անկատարության մեջ, ամենախավար ժամանակներում, ընդունելով Աստծո մեծությունն ու բարությունը և գովարանելով Նրան, Դավիթը հասնում է հոգեսոր «կատարյալ բարձրության»: Դավիթի գովքի անկեղծությունը հաստատվում է Սաղմոս 18-ի 1-ում, որտեղ նա ասում է. «Սրտանց սիրում եմ քեզ, ո՞վ Տեր, իմ զորություն» (Սահմ. 18.1): Դավիթը շարունակում է. «Ես օրհներգությամբ կանչեցի Տիրոջը» (Հմ.3), «Իմ նեղության մեջ ես կանչեցի Տիրոջը» (Հմ.6): Անկախ մեր վիճակից՝ մենք նույնպես սրտանց փառաբանենք ու երկրպագենք Աստծուն:

**Աղոթք - Յայր, Դու նոր երգ ես դրել բերանս: Խնդրում եմ՝ օգնի՛ր, որ իմ փառաբանությունն արտահայտի քո իսկական բարությունն ու մեծությունը: Ամեն:**

**Աստծոն և ուրիշների հանդեմ մեր ունեցած սիրո մասին դատմենք ուրիշներին և թույլ չտանք, որ որևէ բան խանգարի դրան:**

Հավատը հուսացված բաների հաստատումն ու աներևույթ բաների ապացույցն է: (Եր. 11.1)

## ՀԱՎԱՏՈՎ ՏԵՍՆԵԼ

**Ա**ռավոտյան քայլելու ժամանակ հանկարծ նկատեցի, որ արևի ճառագայթներն այնպես էին ընկել Միջդան լճի վրա, որ հրաշալի պատկեր էր ստացվել: Ընկերոջս խնդրեցի սպասել, մինչ ես կլուսանկարեմ այդ տեսարանը: Արևի լույսը խանգարում էր, որ ես հեռախոսիս վրա տեսնեի ցանկալի կաղըն ու սեղմեի կոճակը, բայց ընկերոջս ասացի. «Մենք հիմա չենք տեսնում, բայց նման նկարները միշտ էլ լավն են լինում»: Այս կյանքում հավատով քայլելը հաճախ նման է լինում այդ կաղըն նկարելուն: Միշտ չէ, որ դու տեսնում ես Աստծո կատարած գործերի մանրամասները, բայց կարող ես վստահ լինել, որ նա այդտեղ է: Ինչպես երրայեցիներին ուղղված նամակի հեղինակն է գրում. «Հավատը հուսացված բաների հաստատումն ու աներեւոյթ բաների ապացույցն է» (Հմ.11.1): Հավատով մեր վստահությունն ենք արտահայտում Աստծու հանդեպ, հատկապես եթե չենք տեսնում կամ հասկանում, թե ինչ է անում նա:

Այդ չտեսնելը, միայն հավատով առաջնորդվելը չի խանգարում «կոճակը սեղմել»: Այն պարզապես կարող է ստիպել մեզ ավելի շատ աղոթել և Աստծո առաջնորդությունը խնդրել: Կարելի է նաև ապավինել անցյալում տեղի ունեցած դեպքերին, երբ կամ ուրիշներն են քայլել հավատով (Հմ. 4-12), կամ էլ մենք ինքներս: Որովհետեւ այն, ինչ Աստված արել է անցյալում, կարող է կրկնել:

**Աղոթք** - Երկնավոր Յայր, շնորհակալ եմ այն ամենի համար, ինչ տվել ես անցյալում: Օգնի՛ր, որ քայլեմ հավատով, նույնիսկ եթե չեմ տեսնում թու արածները: Ամեն:

**Եթե նույնիսկ ամեն ինչ հնարավոր չէ հստակ տեսնել, դարձյալ արժե հավատով վստահել Աստծոն մեր դիմագրաված բոլոր դժվարությունների մեջ:**

Ո՞վ են ես, և ո՞վ է իմ ժողովուրդը, որ կարողանայինք այսպես ընծառացնելու: (Ա.Մնաց. 29.14)

## Ո՞Վ ԵՄ ԵՍ

**Պ**րափես նախարարության տեղական դեկավար խմբի անդամ՝  
աշխատանքային պարտականություններիս մի մասն էր ու-  
րիշներին հրավիրել միանալ մեզ: Հրավիրներում նկարագրում  
էին նրանց պարտավորությունները, իրենց փոքր խմբերի դեկա-  
վարման ընթացքում առաջանալիք խնդիրներն ու դրանց լուծ-  
ման համար ձեռնարկվող միջոցառումները ինչպես հանդի-  
պումների, այնպես էլ հեռախոսային գրույցների միջոցով:

Զէի ուզում շատ բան պարտադրել դիմորդներին՝ գիտակցե-  
լով, որ նրանք որոշակի զոհողությունների են պատրաստվում  
առաջնորդ դառնալու համար: Բայց նրանց պատասխանները,  
թե դա իրենց համար մեծ պատիվ է, երբեմն հուզում էին ինձ:  
Փոխանակ օրինական պատճառներ նշելով մերժեին, նրանք  
երախտագիտություն էին հայտնում Աստծուն իրենց կյանքում  
արածների և հիմա վարձահատույց լինելու հնարավորության  
համար:

Երբ հասավ Աստծո տաճար կառուցելու համար միջոցներ  
տրամադրելու ժամանակը, Դավիթը առիթ ունեցավ ասելու.  
«Ո՞վ եմ ես, և ո՞վ է իմ ժողովուրդը, որ կարողանայինք այս-  
պես ընծառացնել» (Ա.Մնաց. 29.14): Նա չնորհակալ էր  
Աստծուն իր և իսրայելի ժողովրդի կյանքում ունեցած մաս-  
նակցության համար, իսկ նրա պատասխանը վկայում էր իր  
խոնարհության և «պանդուխտների ու նժեռների» հանդեպ  
Աստծո բարեհաճռությունը ճանաչելու մասին (Հմ.15):

Աստծո գործի համար մեր տված ժամանակն ու միջոցները  
ցույց են տալիս մեր երախտագիտությունը նրան, որովհետեւ  
«ամեն ինչ գալիս է քո ձեռքից, և ամեն ինչ քոնն է» (Հմ.16):

**Աղոթք - Սիրելի՛ Յայր,** խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ առատաձեռն  
սրտով պատասխանելու քո սիրուն և տվածդ  
հոգատարությանը: Ամեն:

**Արժե այսօր երախտաղարտ հոգով հիշել ու թվել Աստծո սկած  
բարիները:**

Պահպանեն ժողովի վրանի ամբողջ սպասքն ու կահավորանքը և հոգ տանեն այն ամենին, ինչ հանձնված է Խրայելի որդիների պահպանությանը, և կատարեն վրանի ծառայությունը: (Թվեր 3.8)

## ԾԱՌԱՅՅԵԼ ԱՍՏԾՈ ՀԱՄԱՐ

**Ե**րբ 2022 թ. սեպտեմբերին Անգլիայի Էլիզաբեթ թագուհին մահացավ, հազարավոր զինվորականներ կանչվեցին միանալու նրա հուղարկավորության թափորին: Նրանց անհատական դերն էր բազմության մեջ հնարավորինս աննկատ մնալ, բայց դա չէր խանգարում, որ շատերը դա իրենց համար մեծ պատիվ համարեին: Զինվորներից մեկը նույնիսկ ասաց. «Աս առիթ է կատարելու մեր վերջին պարտքը Նորին Մեծությանը»: Այսինքն կարեռվում է ոչ թե արված գործը, այլ այն, թե ում համար է արվում դա: Ղետացիները, որոնց հանձնարարված էր հոգ տանել Ուխտի տապանակին, նույնպես այդպիսի նպատակ ունեին: Ի տարբերություն քահանաների՝ Գերսոնյանները, Կահաթյաններն ու Մերարյանները նշանակվել էին սովորական առօրյա գործեր անելու համար. մաքրել կահույքը, վարագույրները, սյուները, ճրագակալներն ու պարանները (Թվեր 3. 25-26, 28, 31, 36-37): Ավելին, նրանց այդ պարտականությունները նշանակված էին Աստծո կողմից՝ «կատարեն վրանի ծառայությունը» (Հմ.8) և գրված հետագա սերունդների համար:

Ի՞նչ քաջալերական միտք: Այսօր մեզանից յուրաքանչյուրի՝ տանը, աշխատավայրում կամ եկեղեցում կատարած գործերը կարող են աննշան թվալ աշխարհի համար, որը գնահատում է տիտղոսներն ու աշխատավարձերը: Բայց Աստված այդ բանը այլ կերպ է տեսնում: Եթե աշխատում ու ծառայում ենք հանուն Աստծո և դա անում ենք իր փառքի համար, նույնիսկ ամենափոքր գործը կարեոր է:

**Աղոթք - Հայր,** շնորհակալ եմ Քեզ ծառայելու հնարավորության համար: Օգնիր ինձ հավատարիմ մնալ քո տված շնորհքով ու ուժով Քեզ համար աշխատելուն: Ամեն:

**Իմանալով, որ Աստծո համար ենի ծառայում՝ ոիշի փոխենի մեր աշխատանքը. աշխատենի երախտաղար հոգով և միայն իր փառի համար:**

Միջյանց նկատմամբ գթասիրտ եղեք,...հույսով ուրախացեք, նեղությանը համբերեք, մշտապես աղոթեք: (Հոռմ. 12. 10-12)

## ԿԱՐԵԿՑԱՆՔԻ ՀՍՏՈՒԹՅՈՒՆԸ

«Պարիդ մեջ փուշ է մտել, դրա համար գիշերները լալիս ես,- գրել է Քաթրին Սիենացին 14-րդ դարում և շարունակել,-աշխարհում կան մարդիկ, որ կարող են հանել այդ փուշը: Այդ հմտությունը նրանք սովորել են Աստծուց»: Քաթրինն իր կյանքը նվիրեց այդ «հմտությունը» զարգացնելուն և մինչեւ օրս հիշվում է ուրիշների ցավը հասկանալու և կարեկցելու իր կարողությամբ:

Խորը մտած փշի առաջացրած ցավի պատկերը հետապնդում է ինձ: Դա վառ հիշեցում է այն մասին, թե որքան բարդ ու վիրավոր ենք մենք և ուրիշներին կարեկցություն ցուցաբերելու համար որքան ունենք այդ ցավի մեջ խորանալու կարիք:

Կամ ինչպես Պողոս առաքյալն է նկարագրում, ուրիշներին սիրելը պահանջում է ավելին, քան բարի մտադրություններն ու ցանկություններն են: «Միյանց նկատմամբ գթասիրտ եղեք,...հույսով ուրախացեք, նեղությանը համբերեք, մշտապես աղոթեք» (Հոռմ. 12. 10-12): Նաև բոլորից պահանջում է «ուրախացողների հետ ուրախացեք և լացողների հետ լացեք» (Հմ. 15): Այս կոտրված աշխարհում ոչ ոք չի կարող անվնաս մնալ, վիրավորանքն ու սպիները խորապես արմատավորված են մեղանից յուրաքանչյուրի մեջ: Բայց ավելի խորն է այն սերը, որ գտնում ենք Քրիստոսի մեջ՝ կարեկից սրտով օրհնել թե՛ մեր ընկերներին, և թե՛ մեզ հալածողներին, չանիծել (Հմ.14), որպեսզի միասին բժշկվենք:

**Աղոթք - Սիրող Աստված, շնորհակալ եմ քո ողորմածության համար: Օգնի՛ր ինձ, որ սիրեմ ուրիշներին: Անեն:**

**Երբ զգանք կարեկցության բուժիչ ուժը, մենք էլ կզարգացնենք այդ հմտությունը:**

Նրա մասին մեր լսածը փսփսուք է: (Հոր. 26. 14)

## ՄԻԱՅՆ ՓՍՓՍՈՒՔ Է

**Վ**յու Յորքի երկաթուղային մեծ կայարանի շենքի փսփսացող պատն ասես լսողական օազիս լինի տարածքի ընդհանուր աղմուկի մեջ: Այդ եզակի տեղը հնարավորություն է տալիս մոտ երեսուն ոտնաչափ հեռավորությոն վրա միմյանց ուղարկել «լուռ» հաղորդագրություններ: Ճարտարապետական հորինվածքի շնորհիվ՝ երբ մարդ կանգնում է որձաքարե կամարի տակ ու մեղմ շնչում, ձայնային ալիքներով այդ շշունջը հասնում է պատի մյուս կողմում կանգնողին: Հորը նույնպես պատգամի շշունջ լսեց, երբ նրա կյանքը լցվել էր աղմուկով ու բոլոր կողմերից միայն ողբերգություններ էին պատահում (Հոր 1.13-19, 2.7): Նրա ընկերները բամբասում էին իրեն, մեղադրում, կորուստները գալիս էին մեկը մյուսի հետեից, չարն էր հետեւում ամենուր: Այդուստնայինիվ, նա չչարացավ, չմեղանչեց Աստծո գեմ, որովհետեւ լսել էր շշունջը Աստծո երկնային գորության մասին: Երկնքի շքեղությունը, Տիեզերքում կախված երկրի առեղծվածը և հորիզոնի կայունությունը Հորին հուշեցին, որ աշխարհն Աստծո ափերի մեջ է (26. 7-11): Նույնիսկ փոթորկվող ծովի ու որոտացող երկնքի ներքո նա ասաց. «Ահա սրանք են նրա ճանապարհների ծայրերը, և նրա մասին մեր լսածը փսփսուք է» (Հմ. 14): Եթե աշխարհի հրաշալիքները ներկայացնում են Աստծո կարողությունների ընդամենը մի մասը, ապա պարզ է, որ նրա զորությունը հասկանալը մեր ուժերից վեր է: Ծանր պահերին այս իրողությունը մեզ հույս է տալիս: Աստված կարող է անել ամեն ինչ, ներառյալ այն, ինչ արեց Հորի համար, երբ աշակցեց նրան իր տառապանքի մեջ:

**Աղոթք - Սիրելի՛ Աստված, երբ խնդիրներս մեծ են թվում, օգնի՛ իիշել, որ Դու ավելի մեծ ես, և քեզ համար անհնար բան չկա: Ամեն:**

**Ասծո զորությունը միխթարում է մեզ, իսկ բնության շեղությունն ու մեծությունը ոգեսնչում, որ ակնածանեով կանգնեն Ասծո առաջ:**

ԱՍՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՍԵԿ ՏԱՐՈՒՄ | Եզեկիել 35-36 և ՊԵՏՐՈՍ 1

Ոմանք կառքերին և ոմանք էլ ծիերին են ապավինում, բայց մենք պիտի ապավինենք մեր Տեր Աստծո անվանը: (Սաղմ. 20.7)

## ՎԱՏԱՐԵԼ ԱՍՏՈՒՆ

**Ի**նձ շտապ երկու գեղ էր հարկավոր. մեկը մորս ալերգիայի, մյուսը՝ զարմուհուս էկզեմայի համար: Նրանց վիճակն օրեւցոր վատթարանում էր, իսկ գեղատներում գեղ չէր ճարվում: Հուսահատ ու անօդնական՝ ես անդադար աղոթում էի ու խնդրում Աստծո օգնությունը:

Շաբաթներ անց նրանց վիճակը աստիճանաբար բարելավվեց: Կարծես Աստված ասելիս լիներ. «Կան պարագաներ, երբ դեղամիջոցներ եմ օգտագործում բուժելու համար, բայց վերջին խոսքը գեղերինը չէ, այլ իմն է: Վատահիր ոչ թե դրանց, այլ ինձ»:

Սաղմոս 20-ում Դավիթ թագավորը միսիթարվեց Աստծո տված վատահությամբ: Խսրայելցիներն ունեին հզոր բանակ, բայց գիտեին, որ իրենց ամենամեծ զորությունը գալիս է «Աստծո անունից» (Հմ.7): Նրանք վատահեցին Աստծո անվանը՝ Նրա ով լինելու, անփոփոխ նկարագրի ու հաստատուն խոստումների համար: Նրանք հավատարիմ մնացին այն ճշմարտությանը, որ «Տերը փրկում է օծյալին և լսում նրան իր սուրբ երկնքից՝ իր աջի փրկության զորությամբ» (Հմ.6):

Աստված մեզ օգնելու համար կարող է օգտագործել այս աշխարհի միջոցները, և վերջո մեր խնդիրներում հաղթանակը գալիս է միայն իրենից: Անկախ նրանից, նա մեզ տալիս է խնդիրների լուծում, թե տոկալու չնորհք, մենք կարող ենք վատահել, որ նա մեզ համար լինելու է ապավեն և ուժի աղբյուր: Զպետք է ընկրկենք դժվարություններից, այլ դիմակայենք՝ իր տված հույսով ու խաղաղությամբ:

**Աղոթք - Երկնավոր Յայր, տուր ինձ քեզ վատահելու քաջություն: Օգնիր հավատալ, որ Դու այն ես, ինչ խոստանում ես լինել: Ամեն:**

**Մեր բոլոր մարտահրավերների մեջ կարելի է աղավինել Աստծո անվանն ու վատահելով Նրան՝ դիմագրավել բոլոր դժվարությունները:**

Ինձ մո՛տ եկեք, բոլոր հոգնածներ ու բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ: (Մատթ. 11.28)

## ԱՍԾՈ ՍԻՐՏԸ ԲՈԼՈՐԻ ՀԱՍԱՐ Է

**Ի**նը տարեկան Դեն Գիլն իր լավագույն ընկերոջ՝ Արչիի հետ գնաց դասընկերոջ տարեղարձի Հավաքույթին: Հորելյարի մայրը, տեսնելով սեամորթ Արչիին, չկամեցավ, որ նա ներս մտնի՝ ասելով, թե տեղ չկա: Դենն առաջարկեց գետնին նստել, որպեսզի ընկերոջ համար տեղ լինի, բայց կինը դարձալ չթողեց: Վհատված Դենը թողեց իրենց բերած նվերներն ու Արչիի հետ վերադարձավ տուն՝ տեղի ունեցածից խոցված:

Տասնամյակներ են անցել, Դենն այժմ ուսուցիչ է և միշտ մի ազատ աթոռ է պահում իր դասարանում: Հարցասեր աշակերտներին էլ պատվիրում է հիշել և «միշտ դասարանում մի տեղ ունենալ որևէ մեկի համար»: Բոլոր մարդկանց համար սիրտ ունենալը երևում է Հիսուսի՝ կյանք տալու հրավերի մեջ. «Ինձ մո՛տ եկեք, բոլոր հոգնածներ ու բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ» (Մատթ. 11.28): Այս հրավերը կարող է հակասել Պողոսի՝ «նախ հրեային» փրկելու տեսությանը (Հռոմ. 1.16): Բայց փրկության պարգևը բոլոր մարդկանց համար է, ովքեր հավատում են Հիսուսին: Ինչպես գրում է նա. «Աստծո արդարությունը, որ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատի միջոցով է բոլոր հավատացողների համար, որովհետև խտրություն չկա» (3.22): Մենք ուրախանում ենք Քրիստոսի հրավերով, որն ուղղված է բոլորին. «Իմ լուծը ձեզ վրա՝ վերցրեք ու ինձանից սովորեք, որովհետեւ ես հեղ եմ ու սրտով խոնարհ, և ձեր հոգիներին հանգստություն կդանեք» (Մատթ. 11.29): Նրա բաց սիրտն սպասում է բոլոր նրանց, ովքեր խնդրում են Աստծո տված հանգիստը:

**Աղոթք -** Տե՛ր Հիսուս, դու ինձ կանչեցիր, երբ ուրիշները չեն կանչում: Ծնորհակալ եմ ինձ փրկություն ու սեր առաջարկելուդ համար: Անեն:

**Տերը հրավիրում է բոլոր հոգնածներին ու բեռնավորվածներին, որովհետև իր սիրտը բոլորի համար է: Նա թեզ էլ է կանչում: Լսի՛ր Նրա ձայնը:**

Ամբողջ նարմինը՝ միասնական ու ներդաշնակ,.... աճում է՝ ինքն իրեն սիրո մեջ հաստատելու համար: (Եփ. 4.16)

## ԱՌԱՋՆՈՐԴՎԵԼ ԲԱՐԻ ԿԱՍԵՑՈՂՈՒԹՅԱՄԲ

**Կ**ախքան ինչ-որ գործ սկսելը՝ առաջին միտքը, որ գալիս է, հաստատապես առատաձեռնությունն ու բարությունը չեն: Սակայն գործարար Ձերմաս Ռիփ կարծիքով՝ հենց դրա՞նք պետք է լինեն: Առաջնություն տալով «բարի կամեցողությանը», «բարի մշակույթի» և տալու հոգեբանությանը՝ նա կարողացավ կործանման եզրին գտնվող ընկերությունը ոչ միայն փրկել, այլև ծաղկեցնել: Հիշյալ հատկություններին մեծ տեղ տալով՝ նա կարողացավ մարդկանց մեջ արժնացնել հույս և մղում, որոնք անհրաժեշտ էին միավորելու, նորություն մտցնելու և խնդիրներ լուծելու: Ձերմասը բացատրում է, որ «բարի կամեցողությունը...իրական հարստություն է, որն ընդունակ է համազրելու և ուժեղացնելու»: Առօրյա կյանքում էլ բարի, դրական մտքերը անտեսվում են, համարվում ոչ օգտակար ու անկարելոր: Սակայն Պողոս առաքյալը սովորեցնում է, որ այդպիսի հատկություններն ամենակարեւորն են: Դիմելով նոր հավատացյալներին՝ Պողոսը շեշտում է, որ նրանց կյանքի նպատակը պիտի լինի Հոգու միջոցով փոխակերպվել՝ Քրիստոսի մարմնի հասուն անդամները դառնալու համար (Եփ. 4.15): Այդ նպատակով յուրաքանչյուր խոսք և յուրաքանչյուր գործողություն արժեք ունի միայն այն ժամանակ, եթե «բարի է, հավատի շինության համար պիտանի, որպեսզի շնորհ տա լսողներին» (Հմ.29): Այդ փոխակերպումը կարող է տեղի ունենալ ամեն օր, եթե միայն առաջնահերթություն արվի բարությանը, քաղցր խոսքին, գթասրտությանն ու ներումին (Հմ.32): Եթե Սուրբ Հոգին Հիսուսին հավատացողներին առաջնորդի նայել բարի կամեցողությամբ, մենք միմյանցից կսովորենք աճել ու հասունանալ մեր հավատքի մեջ:

**Աղոթք - Սիրելի՝ Յայր, ինձ ամեն օր սովորեցրո՛ւ, որ իսկապես կարևոր Որդուդ միջոցով հորդող սերն է: Ամեն:**

**Կարող է անմիջաղես չտեսնենք «բարի կամեցողության» ուսուակիելի ազդեցությունը: Բայց առաջնահերթությունը տալով բարությանը՝ մենք կածենք:**

Լսի՞ր Տիրոջ ձայնը, որ քեզ ասում եմ,... և դու ողջ կմնաս: (Եր. 38.20)

## ՀԱՆՉԱՎԵԼ ՀԻՍՈՒԽԻՆ

**1** 951թ. Ստալինի բժիշկը նրան խորհուրդ տվեց նվազեցնել իր աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ առողջությունը պահպանելու համար: Սակայն Խորհրդային Միության ղեկավարը մեղադրեց բժիշկին լրտեսության մեջ ու ձերբակալեց: Բոնակալը, որ ստերով ու կեղծիքով ճնշել էր շատերին, չկարողացավ ընդունել ճշմարտությունը և ինչպես շատ հաճախ արել էր, հեռացրեց իրական տվյալներն իրեն հայտնողին: Սակայն ճշմարտությունը հաղթեց, և Ստալինը 1953-ին մահացավ: Երեմիա մարգարեն, որ ձերբակալվեց իր մարգարեռությունների համար և պահպեց շղթաների մեջ (Եր. 38. 1-6. 40.1), Հուդայի Սեղեկիա թագավորին ասել էր, թե ինչ է սպասում երուսաղեմին: «Լսի՛ր Տիրոջ ձայնը, որ քեզ ասում եմ,... և դու ողջ կմնաս» (Եր. 38.20): Քաղաքը շրջապատած բանակին չհանձնվելը միայն կվատթարացներ վիճակը: Երեմիան զգուշացրեց. «Քո բոլոր կանանց ու որդիներին դուրս պիտի հանեն քաղեացիների մոտ, դու էլ չպիտի ազատվես նրանց ձեռքից, այլ պիտի բոնվես թարելոնի թագավորի ձեռքով» (Հմ.23): Սեղեկիան ոչ միայն ինքը չհետեւեց ճշմարտությանը, այլև Երեմիային կարգադրեց չասել ոչ մեկին ու նրան պահեց բանտում: Ի վերջո բարելոնացիները բռնեցին թագավորին, սպանեցին բոլոր որդիներին ու այրեցին քաղաքը (Գլ.39), ինչպես մարգարեցել էր Երեմիան: Ինչ-որ իմաստով յուրաքանչյուր մարդ էլ կարող է նման երկընտրանք ունենալ: Հաճախ մենք էլ վատթարացնում ենք վիճակը՝ անտեսելով մեր մասին ճշմարտությունն ասողներին: Մինչդեռ հարկավոր է հանձնվել նրա կամքին, ով ասել է. «Ե՛ս եմ ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը. ոչ ոք Հոր մոտ չի գա, եթե ոչ իմ միջոցով» (Հովհ. 14.6):

**Աղոթք - Կարեկից Աստված, ների՛ ինձ այն հպարտության համար, որն ինձ հեռու է պահում Թեզնից: Ամեն:**

**Յամընկո՞ւմ են արդյոյն բն ընտրությունները Յիսուսի հայտարարությունների հետ, և ի՞նչն է խանգարում եեզ Յիսուսին հանձնվել:**

Երանի՝ այն ժողովրդին, ո՞վ Տեր,....նրանք պիտի գնան քո երեսի լույսով: (Սաղմ. 89. 15)

## ՍՏՎԵՐՆ ՈՒ ԱՍՏԾՈ ԼՈՒՅԱԾ

**Ե**րբ իլեյնի մոտ քաղցկեղ ախտորոշվեց, և նա ու իր ամուլսին Զաքն իմացան, որ երկար չի մնացել ապրելու, երկուսն էլ որպես գանձ պահեցին 23-րդ սաղմոսի այն խոստումը, թե Աստված իրենց հետ պիտի լինի, երբ նրանք ճամփորդեն իրենց հիսունչորս տարվա ամենախոր ու խավար ձորում: Նրանք հույսը դրեցին այն փաստի վրա, որ իլեյնը պատրաստ էր հանդիպելու Տեր Հիսուսին, որին հավատում էր արդեն տասնամյակներ:

Կնոջ հիշատակին կատարված պաշտամունքի ժամանակ Զաքն ասաց, որ իլեյնի կյանքը դրախտում արդեն սկսված է, իսկ ինքը տակավին ճամփորդում է «մահվան ստվերի ձորում» (Սաղմ. 23.4), որ «մահվան ստվերը» իր և իլեյնին սիրողների հետ է:

Ստվերների ձորում ճամփորդելիս մենք որտե՞ղ կարող ենք գտնել մեր լույսի աղբյուրը: Հովհաննես առաքյալը հայտարարում է, որ «Աստված լույս է, և նրա մեջ խավար չկա» (Ա. Հովհ. 1.5): Իսկ Հովհաննու 8.12-ում Հիսուսը հայտարարում է.«Ես եմ աշխարհի լույսը. ով իմ հետեւից գա, նա խավարի մեջ չի քայլի, այլ կյանքի լույսը կընդունի»:

Որպես Հիսուսին հավատացողներ՝ մենք «քայլում ենք նրա երեսի լույսով» (Սաղմ. 89.15): Մեր Աստվածը խոստացել է լինել մեզ հետ և դառնալ մեր լույսի աղբուրը, նույնիսկ երբ ճամփորդում ենք ամենամութ ստվերների միջով:

**Աղոթք - Սիրո՞ղ Յայր, շնորհակալ եմ քո տված խոստնան համար, որ երբեք չես լրելու ինձ: Վստահ եմ, որ Դու ես լինելու իմ ողջ կյանքի ուժը, ուրախությունն ու ապաստանը: Ամեն:**

**Բնականաբար, անցնում ենք կյանքի մութ ու դժվարին ձորերով, բայց դեմք է վստահ լինենք, որ Տերը մեր լույսն ու աղաստանն է:**

Քո Տեր Աստվածը քեզ հետ է ամեն տեղ, ուր էլ որ գնաս: (Հետու 1.9)

## ԱՍՏԾՈ ԱՄԵՆԱՄԻՒԹԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

**S**արիներ առաջ ընտանիքով գնացինք Զորս անկյուն՝ Միացյալ նահանգների միակ վայրը, որտեղ հանդիպում են չորս նահանգները: Ամուսինս կանգնեց Արիզոնայի հատվածում, ավագ որդիս՝ Յուտայում,, կրտսեր որդիս՝ Զավիերը բռնեց ձեռքս, երբ անցանք Կոլորադոն: Իսկ երբ ես մտա Նյու Մեքսիկո, Զավիերն ասաց.«Մայրի՝ չեմ հավատում, որ ինձ թողեցիր Կոլորադոյում ու գնացիր»: Մենք միասին էինք և միաժամանակ առանձին, քանի որ մեր ձայներն ու ծիծաղը լսվում էին չորս տարբեր նահանգներում: Հիմա, երբ մեր մեծացած զավակները թողել են մեր տունը, ես ավելի խոր երախտագիտություն ունեմ իր ժողովրդի հետ լինելու Աստծո խոստման հանդեպ:

Մովսեսի մահից հետո Աստված առաջնորդության կանչեց Հեսուին և երաշխավորեց իր ներկայությունը՝ ընդլայնելով իսրայելցիների հողային տարածքը (Հետու 1.1-4): Նա ասաց.«Ինչպես Մովսեսի հետ էի, այդպես էլ քեզ հետ կլինեմ. չեմ լրի քեզ և անտես չեմ անի քեզ» (Հմ.5): Իմանալով, որ Հեսուն, որպես ժողովրդի նոր առաջնորդ, հաղթահարելու է կասկածներ ու վախ, Աստված հետեւալ խոսքերով հույսի հիմք գցեց նրա հոգում. «Ահա պատվիրում եմ քեզ, զորացի՛ր և քաջ եղի՛ր, մի՛ վախեցիր և մի՛ զարհուրիր, որովհետև քո Տեր Աստվածը քեզ հետ է ամեն տեղ, ուր էլ որ գնաս» (Հետու 1.9):

Անկախ նրանից, թե Աստված ուր է առաջնորդում մեզ կամ մեր սիրելիներին, նույնիսկ դժվար ժամանակներում նրա ամենամիխթարական հանձնառությունը վստահեցնում է մեզ, որ ինքը միշտ ներկա է:

**Աղոթք -Միշտ ներկա Աստված, շնորհակալ են քեզ, որ միխթարում ես ինձ քո մշտական ներկայության խոստնամբ:**  
**Ամեն:**

**Աստված խոստանում է մեզ միխթարել իր մօւսական ներկայությամբ: Մեզ մնում է ուղղակի հուսալ և աղավինել իրեն:**

Ահա կրոյսը կիղիանա և որդի կօնի, և նրան կկոչեն Եմնանուել, որ նշանակում է «Աստված մեզ հետ» (Մատթ. 1.23)

## ՍՈՒՐԲ ՆԻԿ (ՆԻԿՈԼԱՅ)

Սուրբ Նիկ անունով բարեպաշտ գործիչը ծնվել է մոտ 270 թ. հարուստ հույն ընտանիքում: Դժբախտաբար մանուկ հասակում նա կորցրել է ծնողներին, և նրա դաստիարակությամբ ու խնամակալությամբ զբաղվել է հորեղբայրը, որը սիրել է նրան ու սովորեցրել հետևել Աստծուն: Ավանդության համաձայն՝ Նիկը երիտասարդ ժամանակ լսել է երեք քույրերի մասին, որոնք ամուսնության համար օժիտ չունեին: Ցանկանալով հետևել կարիքավորներին տալու Հիսուսի պատվիրանին՝ նա իր ժառանգությունից յուրաքանչյուր քրոջը մի պարկ ոսկի է տվել: Տարիների ընթացքում Նիկոլասն իր ունեցվածքի մնացած մասն էլ տվեց աղքատներին կերակրելու և ուրիշների հոգսերը հոգալու համար: Հետագա դարերում նա մեծարվեց իր առատաձեռնության համար՝ դառնալով մերօրյա Կաղանդ պապի նախատիպը: Ծննդյան տոների ու նոր տարվա առիթով նվերներ տալու ավանդույթը կապված է Նիկոլասի անվան հետ: Իսկ նրա առատաձեռնությունը Հիմնված է Հիսուսի հանդեպ իր ունեցած նվիրումի վրա: Նա գիտեր, որ Քրիստոսն աներևակայելի առատաձեռնություն է գործադրել՝ մեզ բերելով ամենալավ պարզեր՝ Աստծուն: Հիսուսը՝ Աստված, մեզ հետ է (Մատթ. 1.23): Նա մեզ բերեց նաև կյանքի պարզեր: Մահվան աշխարհում «Նա իր գովարդին պիտի փրկի մեղքերից» (Հմ.21): Երբ մենք հավատանք Հիսուսին, կդրսեռը մեր գոհաբերական առատաձեռնությունը: Ուրիշների կարիքները հոգալու հակում ունենալով՝ ուրախությամբ կապահովենք նրանց կարիքները, ինչպես Աստված է ապահովում մերը: Սա Սուրբ Նիկի, բայց ավելի շատ Աստծո պատմությունն է:

**Աղոթք - Աստված, ուզում են առատաձեռն լինել, բայց դրա ներքին հակումը չեն զգում: Օգնիր ինձ դրսևորելու իսկական առատաձեռնությունը: Ամեն:**

**Ինչորե՞ս են նվերներ անում դարտադրաբա՞ր, թե ուրախությամբ: Հիսուսի կյանքն ու նվիրումը կարող են փոխել ուրիշներին օգնելու մեր մոտեցումը:**

Աղաջում եմ ձեզ, եղբայրներ, որ ձեր նարմինները նատուցեք կենդանի զոհ՝ սուրբ և աստվածահաճո. դա է ձեր հոգևոր պաշտամունքը: (Հռոմ. 12.1)

## ՏՍՌ ՔՐԻՍՏՈՍԻ ՆՄԱՆ

**Ե**րբ ամերիկացի գրող Օ. Հենրին 1905 թ. գրեց Սուրբ Ծննդյան թեմայով իր սիրելի «Սոգերի նվերը» պատմվածքը, անձնական դժվարություններ էր հաղթահարում: Բայց հակառակ իր վիճակին՝ նա գրեց ոգեշնչող մի պատմություն, որում ընդգծվում է քրիստոնեական նկարագրի կարևոր գծերից մեկը՝ զոհաբերությունը: Պատմության հերոսներից մեկը՝ աղքատ կինը, Սուրբ Ծննդյան նախօրյակին վաճառում է իր գեղեցիկ մազերը՝ ամուսնուն գրպանի ժամացույցի ոսկե շղթա նվիրելու համար: Սակայն հետո պարզվում է, որ ամուսինն էլ գրպանի ժամացույցն է վաճառել կնոջ համար սանրերի հավաքածու գնելու նպատակով:

Նրանց ամենամեծ նվերը միմյանց համար զոհաբերությունն էր: Ցուրաքանչյուրի ժեստը ցույց էր տալիս մեծ սեր:

Պատմությունը ներկայացնում է այն սիրառատ նվերները, որոնք մոգերը (իմաստուն մարդիկ) տվեցին մանուկ Քրիստոսին՝ Նրա Սուրբ Ծնունդից հետո (տե՛ս Մատթ. 2. 1,11): Այդ նվերներից ավելի, սակայն, Հիսուս մանուկը մեծանում և մի օր իր կյանքն է տալիս ամբողջ աշխարհի համար:

Մեր առօրյա կյանքում Քրիստոսին հավատացողները կարող են ընդգծել Նրա մեծ պարգևը՝ ուրիշներին առաջարկելով ժամանակի, գանձերի և խառնվածքի զոհաբերությունը, որոնք բոլորը վկայում են սիրո մասին: Ինչպես գրել է Պողոս առաքյալը: «Աղաջում եմ ձեզ, եղբայրներ՝ որ ձեր մարմինները մատուցեք կենդանի զոհ՝ սուրբ և աստվածահաճո. դա է ձեր հոգևոր պաշտամունքը» (Հռոմ. 12.1): Զկա ավելի լավ պարզե, քան Հիսուսի սիրով զոհաբերել ուրիշների համար:

**Աղօթք - Սիրելի Յայր, իմ առօրյա կյանքում թող որ Յիսուսին ցույց տամ ուրիշներին՝ զոհաբերելով իմ կարիքները նրանց համար: Ամեն:**

**Ինչու ուրախանում ենք զոհաբերական նվեր ստանալով մեկ ուրիշից, եկե՛մ մենք էլ դատրաս լինենք այդդիսի նվեր տալ:**

Հնարավո՞ր է, որ Նազարեթից որևէ լավ բան դուրս գա: (Հովհ. 1.46)

## ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՍԾՈ ՍԵՐԸ

«Դու այն չես, ինչ ես սպասում էի: Ես կարծում էի, թե ատում եմ քեզ, բայց այդպես չէ»: Երիտասարդի այս խոսքերը կարող են վիրավորական թվալ, բայց իրականում բարի լինելու ջանքեր են: Ես սովորում էի արտասահմանում, մի երկրում, որը տասնամյակներ առաջ պատերազմի մեջ էր իմ երկրի հետ: Խմբային աշխատանքների ժամանակ նկատեցի, որ այդ տղան մի տեսակ հեռու է պահում իրեն: Հարցրի, թե արդյո՞ք վիրավորել եմ ինչ-որ բանով: Պատասխանեց. «Ոչ... և հենց դա է հարցը: Պապս սպանվել է մեր երկրների միջև եղած պատերազմում: Դրա համար ես ատում եմ քո ժողովրդին ու երկիրը: Բայց հիմա տեսնում եմ, որ ես ու դու շատ ընդհանրություններ ունենք: Ու մտածում եմ, թե ինչո՞ւ չենք կարող ընկերներ լինել»:

Նախապաշարումները նույնքան հին են, որքան մարդկային ցեղը: Երկու հազար տարի առաջ, երբ Նաթանայելն առաջին անգամ լսեց Նազարեթում ապրող Հիսուսի մասին, թերահավատորեն հարցրեց. «Հնարավո՞ր է, որ Նազարեթից որևէ լավ բան դուրս գա» (Հովհ. 1.46): Նաթանայելն ապրում էր Գալիլեայի շրջանում, ուր եկել էր Հիսուսը, և մտածում էր, որ Աստծո մեսիան կարող է լինել միայն այդտեղից: Մյուս գալիլեացիները նույնպես արհամարհանքով էին նայում Նազարեթին՝ որպես փոքր ու աննշան մի գյուղ:

Նաթանայելի պատասխանը, սակայն, չխանդարեց Հիսուսին, որ սիրի ու փոխի նրան, երբ նա դարձավ Հիսուսի աշակերտներից (Հմ.49): Զկա որևէ կողմնակալություն, որ կարողանադիմակայել Աստծո փոխակերպող սիրուն:

**Աղոթք - Սիրելի՛ Հայր, օգնի՛ր հաղթահարել ցանկացած նախապաշարում, որպեսզի ուրիշներին սիրեմ այն սիրով, որով միայն Դու ես սիրում: Անեն:**

**Նախաղաւորումներն ու կանխակալ կարծիները խանգարում են Ասծո սերը ցույց տալու անխորհրդականիսկ նույնիսկ մեր հակառակորդներին ու թշնամիներին:**

Սիմյանց նկատմամբ հոգատար լինենք՝ սիրո ու բարի գործերի նղելով: Եվ մեր մեկ-  
տեղ հավաքվելը զանց չառնենք, ինչպես ոմանց սովորությունն է: (Եթ. 10. 24-25)

## ԵՂԻՌ ԵԿԵՂԵՑԻ

**Թ**ագաժահրի համավարակի ժամանակ Դեյվն ու Կառլան  
ամիսներով եկեղեցական տուն էին փնտրում, սակայն գո-  
յություն ունեցող սահմանափակումները դժվարացնում էին  
նրանց փնտրտուքը: Նրանք ուզում էին կապ ունենալ Հիսուսին  
հավատացողների որևէ կառույցի հետ: Կառլան էլեկտրոնային  
նամակ գրեց ինձ. «Դժվար է որևէ եկեղեցի գտնելը»: Սրտումս ցանկություն առաջացավ վերստին միանալու եկեղե-  
ցական իմ ընտանիքին և ես պատասխանեցի. «Դժվար ժամանակ  
է եկեղեցի լինելու համար»: Այդ շրջանում մեր եկեղեցին «փո-  
խել էր» իր գործունեության ձևը. առցանց պաշտամունքներ էր  
անցկացնում, զանգահարելով ու աղոթքով օգնում իր անդամ-  
ներին, ուտելիք էր բաժանում մոտակա թաղամասերում, մա-  
տուցում էր այլ ծառայություններ: Ամուսինս ու ես էլ մասնակ-  
ցեցինք, և անդադար մտածում էինք, թե էլ ինչ կարող ենք  
անել, որպեսզի մեր փոխված աշխարհում «եկեղեցի լինենք»:  
Եքրայեցիներին ուղղված նամակի 10. 25-ում հեղինակն իր ըն-  
թերցողներին հորդորում է. «Միմյանց նկատմամբ հոգատար  
լինենք՝ սիրո ու բարի գործերի մղելով: Եվ մեր մեկտեղ հավաք-  
վելը զանց չառնենք, ինչպես ոմանց սովորությունն է»: Թերեւս  
հալածանքների պատճառով (Հմ.32-34) կամ գուցե պարզապես  
հոգնածության հետևանքով (12.3) դժվարացող առաջին հավա-  
տացյաներին անհրաժեշտ էր գրգել, որ մնան իբրև եկեղեցի:  
Եկե՛ք ստեղծագործաբար քաջալերենք միմյանց, ինչպես Աստ-  
ված առաջնորդում է մեզ: Բաժնեկցենք մեր ունեցածը: Քաջա-  
լերական պատգամ հղենք, հավաքվենք հնարավորության դեպ-  
քում: Աղոթենք միմյանց համար: Եկե՛ք լինենք եկեղեցի:

**Աղոթք - Սիրելի Աստված,** ցույց տուր ինձ, թե ինչպես կարելի է  
եկեղեցի լինել: Անեն:

**Ինչո՞ւ կարելի է օգնել նրանց, ովքեր չեն կարողանում  
հավաքվել եկեղեցու շենուում: Դիւնեն, որ եկեղեցու դերն է  
ուրիշների կարիքները հոգալը ավելի մեծ նոյատակների համար:**

Ես քեզ չեմ մոռանա: (Ես. 49. 15)

## ԱՍՏՎԱԾ ՉԻ ՄՈՌԱՆԱ ՔԵԶ

**Ե**րբ փոքր էի, դրոշմապիտակներ էի հավաքում: Պապս, իմանալով այդ մասին, սկսեց ամեն օր իր գրասենյակում ստացված նամակների պիտակները պահել: Եվ երբ այցելում էի իրեն, նա ծրարով ինձ էր տալիս դրանք: Մի անգամ էլ ասաց. «Թեև ես միշտ զբաղված եմ, բայց քեզ չեմ մոռանում»:

Պապս սիրո բացահայտ դրսեորումներ չուներ, բայց ես այդ պահին զգացի նրա մեծ սերն իմ հանդեա:

Աստված ցույց է տալիս իր խոր սերը հսրայելի հանդեալ, երբ հայտարարում է. «Ես քեզ չեմ մոռանա» (Ես. 49. 15): Անցյալում իր կռապաշտության ու անհնազանդության համար պատժվելով Բաբելոնում՝ նրա ժողովուրդը ողբաց. «Իմ Տերն ինձ մոռացել է» (Հմ.14): Իրականում Աստծո սերն իր ժողովրդի հանդեալ չէր փոխվել: Նա խոստացավ ներում ու վերականգնում (Հմ. 8-13):

Աստված ասաց հսրայելին. «Ահա ես իմ ձեռքերի մեջ փորագրել եմ քեզ» (Հմ.16), ինչն այսօր ասում է մեզ: Երբ մտուրում եմ նրա վստահեցնող խոսքերի մասին, հիշում եմ Հիսուսի՝ մեխերի սպիտակով ձեռքերը սիրով մեզ երկարելը (Հովհ. 20. 24-27): Ինչպես պապիս հավաքած դրոշմապիտակներն ու քաղցր խոսքերը, այնպես էլ Աստծո մեկնած ներող ձեռքերը նրա հավիտենական սիրո նշաններն են: Եկե՛ք շնորհակալ լինենք նրան իր անփոփոխ սիրո համար: Նա երբեք չի մոռանում մեզ:

**Աղոթք - Յայր, շնորհակալ եմ Ձո մշտական սիրո ու ներկայության համար: Ամեն:**

**Վատահ լինենք, որ Աստված մեզ երբեք չի մոռանում: Նրա անփոփոխ սերը մեզ տալիս է լույս ու աղահովություն:**

Եվ դրացի կանայք նրան անուն դրեցին՝ ասելով. «Նոեմիին մի որդի է ծնվել». և նրա անունը Ովերդ դրին: (Հռ. 4.17)

## ԱՍՎԱԾ ԱՎԵԼԻՆ Է, ՔԱՆ ԲԱՎԱՐԱՐԸ

**Ե**ւնը նյութական սուղ վիճակում էր, ուստի շատ ուրախացավ Սբ. Ծննդյան առիթով հավելավճար ստանալու համար: Դրանով նա արդեն իսկ գոհ էր, բայց բանկում նրան ևս մեկ անակնկալ էր սպասվում: Բանկի աշխատակիցն ասաց, որ Սբ. Ծննդյան առիթով իր հաշվին է փոխանցվել հունվար ամսվա կալվածագրավը: Հիմա ինքն ու Թրեյլ կարող էին այլ պարտքեր ևս վճարել և Սուրբ Ծննդյան օրհնություն դառնալ մեկ ուրիշի համար: Աստված մեր սպասածից ավելի օրհնության միջոց ունի: Նոեմին գառնացած ու կոտրված էր ամուսնու և որդիների մահվան պատճառով (Հռ. 1. 20-21): Նրան այդ հուսահատ վիճակից հանեց Բոռոք՝ ազգականներից մեկը, որն ամուսնացավ նրա հարսի հետ և տուն տվեց նրանց (4.10):

Այդ պահին դա նոեմիի առավելագույն սպասելիքն էր: Բայց Աստված օրհնեց Հուռթին ու Բոսին՝ նրանց պարգևելով որդի: Այժմ արդեն Նոեմին թոռնիկ ուներ, որը լինելու էր նրա «հոգու մխիթարությունը և ծերության խնամակալությունը» (Հմ.15): Թվում է, թե այլևս սպասելիք չէր կարող ունենալ այդ կինը: Ինչպես ասում են Բեթղեհեմի կանայք. «Նոեմիին մի որդի է ծնվել», և նրա անունը Ովերդ դրին» (Հմ.17): Փոքրիկ Ովերդը մեծանալով գառնալու էր «Դավթի հոր՝ Հեսսեի հայրը» (Հմ.17): Նոեմիի ընտանիքը պատկանում էր Իսրայելի թագավորական տոհմին: Բայց դա էլ դեռ ավարտը չէր, որովհետև Դավթիթը դարձավ Հիսուսի նախահայրը: Եթե մենք հավատում ենք Քրիստոսին և Նոեմիի վիճակում ենք, այսինքն՝ ոչինչ չունենք, ուրեմն նա կիրկի մեզ: Այժմ մենք լիովին ընդունված ենք մեր Հորից: Իսկ նա օրհնում է մեզ ուրիշներին օրհնելու համար: Դա շատ ավելին է, քան բավարարը:

**Աղոթք - Տեր Յիսուս, Դու ինձ համար ավելին ես, քան  
բավարարը: Ամեն:**

**Ասված մեզ օգնում է մեր ստասածից ու դասկերացրածից շատ  
ավելի, որովհետև նա շատ ավելին է, քան բավարար:**

Տիրոջ անունն անուր աշտարակ է. արդարը վազում է այնտեղ և ապաստան գտնում: (Առ. 18.10)

## ՅԵՆՎԻՌ ԱՍՏՈ ՎՐԱ

**Յ**ի քանի ընկերներով գնացել էինք Ջրաշխարհ և փորձեցինք նավարկել ծփացող ալիքների վրայով, հաղթահարել ջրային արգելքները: Ճոճկող ու սահուն հարթակները գրեթե անհնար էին դարձնում հավասարակշռությունը պահելը, և մենք, հոսանքին տրված, ճչալով ու գոռզոռալով անցնում էինք ժայռերի ու խութերի միջով: Ատրակցիոնի մի մասի ավարտից հետո ընկերուհիս ուժասպառ հենվեց փչովի «աշտարակներից» մեկին՝ շունչ առնելու: Աշտարակը թեքվեց, և նա նորից նետվեց ջուրը: Ի տարբերություն Ջրաշխարհի աշտարակների՝ աստվածաշնչյան ժամանակներում աշտարակը պաշտպանվելու և պատսպարզվելու ամրոց էր: Դատավորների 9. 50-51-ում նկարագրվում է, թե ինչպես Թեքեսի բնակիչները, Արիմելեքի պաշարումից ու հարձակումից փրկվելու համար, «փախան մի ամուր աշտարակ, դուռը ներսից կողպեցին և ելան վեր՝ աշտարակի կտուրը»: Առակների 18.10-ում հեղինակն աշտարակի պատկերով է նկարագրել, թե ով է Աստված՝ իրեն վստահողներին փրկողը: Երբեմն, սակայն, երբ հոգնած ու սպառված ենք լինում, Աստծո այդ ամուր աշտարակին հենվելու փոխարեն՝ որոնում ենք ապահովության ու աջակցության այլ ասպարեզ, հարաբերություններ կամ ֆիզիկական հանգիստ: Այդպիսի դեպքերում մենք ոչնչով չենք տարբերվում այն հարուստից, որի «ունեցվածքն իր ամուր բերդաքաղաքն է» (Հմ.11): Բայց ինչպես փչովի աշտարակը չկարողացավ պահել ընկերուհու, այդպես էլ այլ բաները չեն կարող մեզ տալ այն, ինչը իրականում մեզ անհրաժեշտ է: Աստված, որ բոլոր իրավիճակներում ամենակարողն է ու վերահսկողը, կտա մեզ իւկական միխթարություն ու ապահովություն:

**Աղոթք - Սիրելի՝ Յայր, օգնի՛ր ինձ, որ այլ բաների դիմելուց առաջ միսիթարություն ու ապահովոթյուն գտնեմ թեզ մոտ: Ամեն:**

**Աղահովության համար ինչոյիսի՞ աշտարակների ենք հենվում: Յիշենք, որ ավելի լավ է վազել դեռի Աստված, որ մեր ամուր աշտարակն է:**

Թեպետ դուք խորհեցիք իմ դեմ չարիք գործել, բայց Աստված խորհեց այն փոխել բարիքի, որպեսզի աներ այն, ինչ եղավ այսօր, այսինքն՝ շատ ժողովուրդ ապրեցներ: (Ծնն. 50.20)

## ՀԱՂԹԱՎԱՐԵԼ ՓՈՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ե**ննը մեծացավ աղքատության ու ցավի մեջ: Իր քույր-եղբայր-ներից երկուսը մահացան շատ փոքր տարիքում: Ինքը հինգ տարեկանում մասսամբ կորցրեց տեսողությունը և չկարողացավ գրել-կարդալ: Ութ տարեկանում կորցրեց մորը, կարճ ժամանակ անց հայրը լքեց իր երեք երեխաներին: Ամենափոքրին ուղարկեցին հարազատների մոտ, իսկ էնն ու եղբայրը գնացին մի խարխուկ ու աղքատ տուն, որտեղ եղբայրն էլ մահացավ: Տասնչորս տարեկանում էննի վիճակը փոխվեց: Նրան ուղարկեցին կույրերի դպրոց, որտեղ նա վիրահատվեց, տեսողությունը վերականգնվեց, սովորեց գրել, կարդալ: Ավելին, նա այնքան առաջադիմեց ակադեմիական ոլորտում, որ այսօր արդեն հայտնի է մանկավարժ էնն Սալիկան անունով: Նա հատկապես կենտրոնացել է կույր երեխաների ուսուցման վրա՝ թերևս նմանություն տեսնելով իր ճակատագրի հետ: Ամենահայտնին կույր ու խուլ Հեղեն Կելերն է, որին էննը մեծ համբերությամբ ու սիրով սովորեցրեց բրայլյան գրերը: Կելերն ի վերջո դարձավ գրող, դասախոս, քաղաքական ակտիվիստ: Հովսեփը նույնպես ստիպված էր հաղթահարել շատ փորձություններ. տասնյոթ տարեկանում իր չար ու նախանձ եղբայրների ձեռքով ստրկության վաճառվեց, հետո հանիրավի բանտարկվեց (Ծն. 37, 39-41): Բայց Աստված նրան օգտագործեց Եգիպտոսն ու իր ընտանիքը սովից փրկելու համար. «Թեպետ դուք խորհեցիք իմ դեմ չարիք գործել, բայց Աստված խորհեց այն փոխել բարիքի, որպեսզի աներ այն, ինչ եղավ այսօր, այսինքն՝ շատ ժողովուրդ ապրեցներ» (50.20): Բոլորս էլ փորձություններ ու դժվարություններ ենք դիմագրավում: Բայց Աստված ինչպես Հովսեփին օգնեց հաղթահարելու և ազդեցություն ունենալու ուրիշների կյանքի վրա, այնպես էլ կարող է մեզ օգնել և օգտագործել:

**Աղոթք - Սիրելի Հայր,** ինձ օգնեցիր անցնելու փորձությունների միջով: Օգնիր ինձ՝ օգտակար լինել ուրիշներին: Ամեն:

**Աստված օգնում է մեզ մեր դիմագրաված փորձությունների մեջ:**  
**Մենք էլ ուստաս լինենք օգնելու ուրիշներին:**

Իմ անձը հանդարտեցրի և հանգստացրի: (Սահմ. 131. 2)

## ՇԵՂՎԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ուսանկարներից, գովազդներից և այլ նյութերից հոգնած՝ կողքի դրեցի հեռախոսը: Հետո նորից վերցրի ու միացրի, ինչո՞ւ:

2013-ին հրատարակած իր գրքում նիքը բարը նկարագրում է, թե ինչպես է համացանցն ազդում մեր կյանքի վրա: «Ի՞նչ է կատարվում, - գրում է նա, - համացանցը հղկում ու ձևավորում է կենտրանանալու և մտածելու իմ կարողությունը: Անկախ նրանից՝ ես առցանց եմ, թե ոչ, միտքս սպասում է արագ տեղեկությունների: Եթե անցյալում ես խորասուզվում էի բառերի ծովում, ապա այժմ սահում եմ դրա մակերեսին՝ ջրադահուկորդի նման»:

Մտավոր դահուկորդի կեցվածքը առողջարար չէ, բայց ինչպե՞ս կարող ենք նորից ձեռք բերել մեր դանդաղ ընթացքը՝ սուզվելու համար հանդարտ հոգեկոր ջրերի մեջ:

Սաղմոս 131-ում Դավիթը գրում է. «Իմ անձը հանդարտեցրի և հանգստացրի» (հմ.2): Այդ խոսքերը հիշեցնում են, որ մենք էլ պատասխանատվություն ունենք: Սովորությունները փոխեն սկսվում է հանգստանալուց, հանդարտվելուց, եթե նույնիսկ ստիպված լինենք անընդհատ դա կատարել: Որովհետեւ դանդաղության մեջ մենք կզգանք Աստծո գոհացուցիչ բարությունը: Երեխայի նման մենք գոհունակությամբ կհանգստանանք՝ հիշելով, որ միայն նա է տալիս հույս (հմ.3), հոգու բավարարում, որ ոչ մի հեռախոսային խելացի ծրագիր կամ որևէ սոցիալական կայք ի վիճակի չէ դա մատուցել:

**Աղոթք** - Հայր, աշխարհը լցված է բազմազանությամբ, որը չի բավարարում հոգիս: Օգնի՛ր ինձ վստահելու քեզ, որ իմ հոգին լցնես իսկական գոհունակությամբ: Ամեն:

Ի՞նչ ազդեցությունն ունի արվեստը Աստծո առաջ հանդարտվելու մեր ունակության վրա: Որքանո՞վ է բջջային հեռախոսը մեզ գոհունակության դարձնում:

Հարուստն ու աղքատը ընդհանուր բան ունեն. Տերն է նրանց բոլորի ստեղծողը: (Առ. 22.2)

## ԱՍԾՈ ԱՌԱՋ ՀԱՎԱՍԱՐ

**Ա**րձակուրդի ժամանակ կինս ու ես վաղ առավոտյան զբունում էինք հեծանվով, անցնում շքեղ առանձնատների մոտով, տեսնում ամենատարբեր մարդկանց՝ շների հետ զբունող, մեզ նման հեծանիվ վարող, շինարար կամ ծառերը խնամող և այլն: Դա հասարակության բոլոր խավերի խսկական խառնուրդ էր, որն ինձ հիշեցրեց այն ճշմարտությունը, թե մեր միջև տարբերություն չկա: Հարուստ, թե աղքատ, հայտնի, թե անհայտ, մենք բոլորս նույնն ենք. «Հարուստն ու աղքատը ընդհանուր բան ունեն. Տերն է նրանց բոլորի ստեղծողը» (Առ. 22.2): Անկախ բոլոր տարբերություններից՝ մենք բոլորս ստեղծված ենք Աստծո պատկերով (Ծն. 1.27):

Բայց կա ավելին: Աստծո առաջ հավասար լինելը նշանակում է, որ անկախ մեր ազգային, տնտեսական ու սոցիալական կարգավիճակից՝ մենք բոլորս ծնվել ենք մեղքի վիճակով. «բոլորը մեղանչեցին ու զրկվեցին Աստծու փառքից» (Հռ. 3.23): Բոլորս էլ անհնազանդ ենք և հավասարապես մեղավոր նրա առաջ և կարիք ունենք Հիսուսի:

Մենք հաճախ ենք մարդկանց բաժանում տարբեր հատկանիշներով: Իրականում, սակայն, բոլորս էլ մարդկության մի մասնիկն ենք: Ու թեե բոլորս նույն իրավիճակում ենք և ունենք Հիսուսի կարիքը, մենք կարող ենք «ձրի արդարանալ այն փրկության միջոցով, որ Հիսուս Քրիստոսով է» (Հմ. 24):

**Աղոթք - Սիրելի՝ Աստված, շնորհակալ եմ, որ Հիսուսին աշխարհ ուղարկեցիր կատարյալ կյանքով ապրելու և իր կյանքը մեր մեղերի համար պատրաստականորեն զոհաբերելու համար: Ամեն:**

**Քանի որ մենք բոլորս հավասար ենք Ասծո առաջ, սիրենք միմյանց առանց խորության:**

Ձերմեռանդորեն հետևում էին....հաղորդությանը: (Գործք 2.42)

## ՔՐԻՍՏՈՍՈՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔ

**Բ**ահամյան կղզիների հարավում մի տարածք կա, որ կոչվում է Հողսոված կղզի: 19-րդ դարում այստեղ աղի մեծ արտադրություն կար, որի նվազելուց հետո շատերը արտագաղթեցին մոտակա կղզիներ: 2016-ին կղզում ապրում էր ընդամենը 80 մարդ, բայց կար կրոնական երեք դավանանք, որոնց հարողները ամեն շաբաթ հավաքվում էին պաշտամունքի ու հաղորդակցության: Այսինքն՝ այդքան քիչ քանակով մարդկանց համար էլ կենսական էր համայնքի զգացումը:

Առաջին դարի եկեղեցու անդամները նույնպես զգացել էին համայնք լինելու կարիքն ու ցանկությունը: Նրանք ոգեսորված էին իրենց նոր հավատքով, որը հնարավոր դարձավ Հիսուսի մահվան ու հարության չնորհիվ: Նրանք դիտեին նաև՝ քանի որ նա ֆիզիկապես իրենց հետ չէ, ուրեմն իրենք միմյանց կարիքն ունեն: Նրանք «Ճերմեռանդորեն հետեւում էին առաքյալների ուսուցմանը, հաղորդությանը, հացի բեկմանը և աղոթքներին» (Գործք 2.42): Հավաքվում էին տներում պաշտամունքի, ճաշելու և այլոց կարիքները հոգալու: Ղուկաս ավետարանիչը այսպես է նկարագրում այդ եկեղեցին.«Հավատացյալների բազմությունը մեկ սիրտ ու մեկ հոգի է» (4.32): Սուրբ Հոգով լցված՝ նրանք անդադար փառաբանում էին Աստծուն և աղոթքով նրան հասցնում եկեղեցու կարիքները:

Համայնքը կարեղոր է մեր աճի և աջակցության համար: Աստված զարգացնում է համայնքի այդ զգացումը, երբ դու քո դժվարությունների և ուրախությունների մասին պատմում ես ուրիշներին, և դուք միասին եք մոտենում իրեն:

**Աղոթք - Յայր, որպեսզի ես լիարժեք ապրեմ քեզ համար, ինձ պետք եք Դու և քո ժողովուրդը: Ամեն:**

**Ինչո՞ւ կարող ես ժամանակ անցկացնել հավատակիցներիդ  
հետ: Արա՛ դա, երբ հնարավոր է:**

Խարդախս մարդու զգականության համար և սպորտի նախարարությունը բայց նրա մտերմությունն ուղղամիտ ների հետ է: (Առ. 3.32)

## ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՐԿՐՈՍՐԱՆՔ

**Պ**եյլիդն ու էնջին տեղափոխվեցին արտասահման՝ իրենց պաղաքեր ծառայությունը շարունակելու: Նրանց քայլը, սակայն, մեկ թերություն ուներ. Դեյլիդի տարեց ծնողները ստիպված էին լինելու Ծննդյան տոները միայնակ անցկացնել: Ճիշտ է, նրանք նվերները կանխավ ուղարկեցին և այդ օրն էլ վաղ առավոտյան զանգեցին ու չնորհավորեցին, բայց ծնողների կամեցածն այլ էր: Նրանք իրենց էին ուզում: Քանի որ Դեյլիդի վաստակը թույլ չէր տալիս բոլոր առիթներով տուն գալ, ուրիշ ի՞նչ կարող էին անել նրանք: Հարկավոր էր իմաստուն քայլ ձեռնարկել: Առակների Յը իմաստություն փնտրելու մի կարճ ընթացք է, որը ցույց է տալիս այդ ճանապարհը. «Քո ամբողջ սրտով ապավինի՛ր Տիրոջը և քո ըմբռնողությանը մի՛ ապավինիր: Քո բոլոր ճանապարհներին ճանաչի՛ր նրան, և նա կուղղի քո ճանապարհները» (Հմ.5-6): Նաև նկարագրում է, թե ինչպես է պետք հասնել դրան. «ողորմածությամբ ու հավատարմությամբ» (Հմ. 3-4, 7-12), և որոնք են դրա օգուտները՝ «երանություն, հաճույք ու խաղաղություն» (Հմ. 13-18): Աստված տալիս է իրեն վստահելու իմաստնություն. «Խարդախս մարդը զգվելի է Տիրոջը, բայց նրա մտերմությունն ուղղամիտների հետ է» (Հմ.32): Մի գիշեր Դեյլիդը աղոթեց իր խնդրի մասին և միտք հղացավ. Սուրբ Ծննդյան օրը ինքն ու էնջին հագան իրենց տոնական զգեստները, զարդարեցին սեղանը և ներս բերին ընթրիքը: Նույն արեցին նաև Դեյլիդի ծնողները: Ապա համակարգչի օգնությամբ տեսազանգով միասին նշեցին ու չնորհավորեցին միմյանց: Այդ օրվանից ի վեր դա դարձել է ընտանեկան ավանդույթ: Աստված սիրում է մեր խնդիրների ժամանակ ստեղծագործական լուծումներ հուշել:

**Աղոթք - Հայր Աստված, խնդրում եմ՝ շշնջա՛ իմ սրտում՝ քո ստեղծագործական լուծումները հուշելով: Անեն:**

**Ինչուիսի Երկրներամի առջև էլ լինենք, Աստված ունի իր սիրալիր լուծումները:**

Տերը մոտ է: Ոչնչի համար մի՛ մտահոգվեք, այլ աղոթքով, աղաչանքով և գոհությամբ ձեր խնդրանքները թող հայտնի լինեն Աստծուն: (Փիլ. 4. 5-6)

## ԱՍՏՎԱԾ ՄՈՏ Է

**Զ**այնավարժության ուսուցիչ Լուրդսը Մանիկայում երկար տարիներ է, ինչ դասավանդում էր ուսանողներին: Երբ նրան խնդրեցին անցնել հեռավար դասավանդման, նա անհանգստացավ. «Իմ համակարգիչը շատ հին է, ես էլ չգիտեմ առցանց հաղորդակցության ձևերը»: Շատերի համար դա առհասարակ փոքր հարց էր, բայց Լուրդսի համար իսկապես լուրջ խնդիր էր, որովհետև նա մենակ էր ապրում, չկար օգնող մեկը: Եվ նա մտավախություն ուներ, որ աշակերտները կթողնեն իրեն, և ինքը կկորցնի իր ապրուստի միջոցը:

Ուստի ամեն դասից առաջ նա աղոթում էր, որ համակարգիչը չխափանվի: Խոստովանում էր, որ համակարգչի էկրանին է դրել փիլիպպեցիներին ուղղված նամակի 4. 5-6 համարները, որոնց ինքը կառչել է:

Պողոսը հորդորում է ոչ մի բանի համար չանհանգստանալ, որովհետև «Տերը մոտ է» (Փիլ. 4. 5): Պետք է կառչել Աստծո ներկայության խոստմանը: Երբ հանգիստ գտնենք իր մոտ և աղոթքով ամեն ինչ հայտնենք իրեն, «Աստծո խաղաղությունը մեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսով կպահպանի» (Հմ. 7):

Լուրդսն ասում է. «Աստված ինձ առաջնորդեց գեպի համակարգչիս խնդիրները շտկելու կայք էջեր: Նաև տվեց համբերատար ուսանողներ, որոնք հասկանում էին իմ դժվարությունները»: Աստծո ներկայությունը, օգնությունն ու խաղաղությունը վայելելով՝ մենք ձգտում ենք հետեւել իրեն մեր կյանքի բոլոր օրերում: Եվ վստահ լինել, որովհետև «Միշտ Տիրոջով ուրա՛խ եղեք. դարձյալ ասում եմ՝ ուրա՛խ եղեք» (Հմ. 4):

**Աղոթք - Սիրելի Աստված, շնորհակալ եմ, որ միշտ մոտս ես: Քո սիրո ներկայության, օգնության ու խաղաղության շնորհիվ ես առիթ չունեմ անհանգստանալու: Ամեն:**

**Ասծոն խոսք վստահեցնում է, որ Տերը մեզ մոտ է, իեւսաբար արժե երախտաղար հոգով մեր անհանգստությունը վերածել խաղաղության:**

Արեգակը ծագեց Յակոբի վրա, երբ Փանուելից անցավ և կաղում էր իր ազդությունը: (Ծն. 32. 31):

## ՍՈՎՈՐԵԼ ՍՊԻՆԵՐԻՑ

Ֆեյը շոշափեց որովայնի սպիները: Նրան մեկ այլ վիրահատություն էլ արել էին ստամոքսի հատվածում: Հեռացրել էին ստամոքսի մի մասը՝ թողնելով ճյուղավորված մի սպի, որն իրենց աշխատանքի ծավալն էր ցույց տալիս: Ֆեյն ամուսնուն ասաց. «Սպիները ցույց են տալիս կամ քաղցկեղի ցավը, կամ բուժման սկիզբը: Ես նախընտրում եմ սպիները տեսնել որպես բուժման խորհրդանիշ»:

Հակոբն էլ նման ընտրություն կատարեց ամբողջ գիշեր Աստծո հետ գոտեմարտելուց հետո: Աստվածային հարձակվողը վնասեց Հակոբի ազգը, և նա ուժասպառ եղավ ու նկատելի կաղում էր: Ամիսներ անց, շփելով իր ազգը, տեսնես Հակոբը ի՞նչ էր մտածում: Արդյո՞ք ափսօսում էր տարիներ առաջվա իր խաբեռթյան համար, որն ստիպեց դիմել այս ճակատագրական մենամարտին: Աստվածային պատգամաբերը նրա միջից հանել էր ճշմարտությունը՝ հրաժարվելով օրհնել նրան, քանի որ Հակոբը գեռ չէր ճանաչել ինքն իրեն: Նա խոստովանեց, որ ինքը Հակոբն է՝ «գարշապար բռնողը» (տե՛ս Ծն. 25.26): Նա խաբել էր իր եղբայր Եսավին և Լաբանին՝ սայթաքեցնելով նրանց, որպես կամ ազգի առավելություն չունենան: Աստվածային ըմբիշն ասաց. «Քո անունն այլևս թող Հակոբ չասվի, այլ իսրայել, որովհետև դու մարտնչեցիր Աստծու հետ ու մարդկանց հետ և հաղթեցիր» (Հմ.28):

Հակոբի կաղությունը ներկայացնում է իր հին խաբեռթյան ավարտը և նոր կյանքի սկիզբը Աստծո հետ: Հակոբի վերջը և իսրայելի սկիզբը: Իր կաղությունը ստիպեց ապավինել Աստծուն, որն այժմ զորությամբ շարժվում է իր մեջ և իր միջոցով:

**Աղոթք - Յայր, կաղությունս քո սիրո նշանն է: Ամեն:**

**Մեր ունեցած հոգևոր սղիները խորհրդանշում են վաս բանի ավարտն ու լավի սկիզբը:**

Ես, Ե՞ս Եմ նա, որ ջնջում է քո հանցանքները հանուն ինձ, և չեմ հիշելու քո մեղքերը: (Ես. 43. 25)

## ՆԵՐՈՒՄ ՈՒ ՄՈՌԱՅՑՈՒՄ

**Ճ**իլ Պրայսը արտասովոր հատկություն ուներ. ամենայն մանրամասնությամբ հիշում էր անցյալում կատարված դեպքերն ու նորից վերապրում դրանք:

«Անմոռանալի» կոչվող հեռուստատեսային նախագծում պատմվում էր այդպիսի կարողություն ունեցող կին ոստիկանի մասին, որի համար դա ակնհայտ առավելություն էր հատկապես հանցագործությունները բացահայտելու համատեքստում: Ժիլ Պրայսի համար, սակայն, իր կարողությունը այնքան էլ հաճելի չէր: Նա չէր մոռանում կյանքի այն պահերը, երբ իրեն քննադատել են, երբ կորուստ է ունեցել կամ այնպիսի մի բան է արել, որի համար զղջում է: Նա իր մտքում նորից ու նորից կրկնում է այդ տեսարանները:

Մեր Աստվածն ամենագետ է: Աստվածաշունչն ասում է, որ Հասկանալու Նրա կարողությունն անսահման է: Եսայու գրքում Հայտնաբերում ենք ամենահուսադրող բանը. «Ես, Ե՞ս Եմ նա, որ ջնջում է քո հանցանքները հանուն ինձ, և չեմ հիշելու քո մեղքերը» (Ես. 43. 25): Եբբայեցիներին ուղղված նամակն ամրապնդում է այս միտքը. «Նրանց մեղքերն ու նրանց անօրենություններն այլևս չեմ հիշելու» (Եր. 10.17):

Երբ խոստվանենք մեր մեղքերը Աստծուն, կկարողանանք այլևս մեր մտքում չհիշել ու կմոռանանք: «Նախկին բաները մի՛ հիշեք և հին բաները մի՛ մտածեք» (Ես. 43. 18): Իր մեծ սիրով Աստված ընտրում է մեր մեղքերը չհիշելը: Եկե՛ք հիշենք սա:

**Աղոթք - Սիրելի՝ Աստված, շնորհակալ Եմ, որ ներեցիր ու մոռացար իմ մեղքերը: Ամեն:**

**Երբեմն ափսոսում ենք մեր գործած սխալների համար՝ հիշելով դրանք: Սակայն Աստծո ընորհիվ ներկած ենք, ուստի կարելի է դրանց մասին մոռանալ:**

Յույսդ դի՞ր Աստծու Վրա, որովհետև էլի պիտի գոհանամ նրանից, որովհետև նա ին երեսի փրկությունն է և ին Աստվածը: (Սաղմ. 42. 11)

## ՅՈՒՅՍԻ ԼՈՒՅՍԸ

**Ք**աղցկեղով հիվանդների խնամքի կենտրոնում մորս մահճակալի վերեռում փայլուն կարմիր խաչ էր կախված: Բուժումների միջակայքում ընկած ժամանակահատվածում ես ուզում էի նրա համար տոն կազմակերպել և Սուրբ Ծննդյան օրը խաչը կախել էի մեր տան տոնածառին:

Երբ որդիս միացրեց լույսերը, ես շշնջացի՝ շնորհակալություն: Նա պատասխանեց, բայց չգիտեր, որ ես շնորհակալություն էի հայտնում ոչ թե իրեն, այլ Աստծուն՝ փայլուն լամպեր օգտագործելու համար, որպեսզի աչքերս հառենք դեպի հավիտենական հույսի լույսը՝ Հիսուսը: 42-րդ սաղմոսի հեղինակը, նախքան ընթերցողներին քաջալերելը, իր զգացումներն է արտահայտում Աստծո հանդեպ (Հմ. 1-4), որն ընդունել է իր «վհատված» ու խոռված հոգին. «Հույսդ դի՞ր Աստծու վրա, որովհետև էլի պիտի գոհանամ նրանից, որ իմ երեսի փրկությունն է» (Հմ. 5): Թեև վիշտն ու տառապանքները հաղթում են նրան, բայց Սաղմոսերգուի հույսը երևում է Աստծո՝ անցյալ հավատարմության հիշողությամբ (Հմ. 6-10): Նա ավարտում է՝ հարցականի տակ դնելով իր կասկածները և հաստատելով իր զտված հավատքի տոկունությունը. «Ինչո՞ւ ես տրտում, ով անձ, ինչո՞ւ ես խռովված ինձանում: Հույսդ դի՞ր Աստծու վրա, որովհետև էլի պիտի գոհանամ նրանից, որովհետև նա իմ երեսի փրկությունն է և իմ Աստվածը» (Հմ. 11):

Մեզանից շատերի համար Սուրբ Ծնունդն առաջնում է թե՛ ուրախ, և թե՛ տիսուր ապրումներ: Բարեբախտաբար, նույնիսկ այդ խառն զգացումները կարող են հաշտվել ու փրկվել հույսի ճշմարիտ լույսի՝ Հիսուսի շնորհիվ:

**Աղոթք - Սիրելի Յիսուս, շնորհակալ եմ, որ ամբողջ տարին ինձ հետ ես՝ թե՛ ուրախության, և թե՛ վշտի մեջ: Ամեն:**

**Ինչողես որ Յիսուսն է, մեզ հետ լինելով, աջակցում մեզ մեր վեցի մեջ, այնողես էլ մենի աջակցենի ուրիշներին:**

Նա է մեր խաղաղությունը, որ երկուսին մեկ դարձրեց ու միջնորմ պատը՝ թշնամությունը, վերացրեց իր մարմնով: (Եփ. 2.14)

## ՊԱՏԵՐԸ ՔՎՆԴՎԱԾ, ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ

**1** 961-ից ի վեր գերմանական ընտանիքներն ու բարեկամները բաժանված էին Բեռլինի պատով: Արևելյան Գերմանիայի կառավարության կողմից այդ տարի կառուցված պատնեշը քաղաքացիներին արգելում էր անցնել Արևելյան Գերմանիա, այն դեպքում, եթե 1949-ից մինչև պատի կառուցումը ավելի քան 2,5 միլիոն արևելագերմանացիներ անցել էին երկրի արևմտյան կողմը: 1987-ին ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանը կանգնեց պատի մոտ ու հանդիսավորությամբ հայտարարեց, որ պետք է քանդել այն: Նրա խոսքերը ցույց էին տալիս, որ եկել է փոփոխությունների ժամանակը, որն իր տրամաբանական ավարտին հասավ 1989-ին՝ Բեռլինի պատի քանդումով և Գերմանիայի վերամիավորմամբ: Պողոսը գրել է Հիսուսի կողմից քանդված «թշնամության պատի» մասին (Եփ. 2.17): Այն գոյություն ուներ հրեաների՝ Աստծո ընտրյալ ժողովրդի և հեթանոսների՝ մյուս բոլոր մարդկանց միջև: Այդ բաժանումը խորհրդանշվում էր երուսաղեմում Հերովդես Մեծի կառուցած հնագույն տաճարի պատով՝ Սորեկով, որն արգելում էր հեթանոսներին մտնել տաճարի արտաքին գավիթից այն կողմ: Բայց Հիսուսը «խաղաղություն» և «հաշտություն» բերեց հրեաների ու հեթանոսների, Աստծո բոլոր մարդկանց միջև: Նա այդ արեց՝ «քանդելով միջնորմ պատը և իր խաչով սպանելով թշնամությունը» (Հմ.14,16): «Խաղաղության բարի լուրը» հնարավորություն տվեց բոլորին՝ միավորելու Հիսուսի հանդեպ եղած հավատով (Հմ.17-18): Այսօր մեզ շատ բաներ կարող են բաժանել իրարից: Քանի որ Աստված տալիս է այն, ինչ անհրաժեշտ է, եկե՛ք ձգտենք ապրել Հիսուսի մեջ եղած խաղաղությամբ, ներդաշնակությամբ ու միասնությամբ (Հմ. 19-22):

**Աղոթք - Տե՛ր Յիսուս, խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ քանդելու քո ճշնարտությունն ու սերը մերժող պատերը: Ամեն:**

**Այսօր նկատում ենք մեզ միմյանցից բաժանող դատեր: Աշխատենք Տե՛ր Յիսուսի օգնությամբ վերացնել դրանի, որտեսզի միասնությունը թագավորի:**

Դրա համար միմյանց քաջալերեք և ամրապնդեք, ինչպես որ արդեն անում եք: (Ա.Թես. 5.11)

## ՅԱՌՈՐԴԱԿՑՎԵԼ ՀԻՍՈՒԽՈՎ

**Ե**ս չգիտեմ՝ ով է կիրակնօրյա պաշտամունքից հետո լույսերն անջատելու և եկեղեցին փակելու պատասխանատուն, բայց գիտեմ, որ նա արժանի է, որ իր կիրակնօրյա ընթրիքն ուշանա: Որովհետեւ շատերը սիրում են պաշտամունքից հետո դեռ երկար ժամանակ շրջել տարածքում, խոսել տարբեր թեմաներից: Եվ ուրախալի է, որ պաշտամունքից քսան բոպե հետո էլ մարդիկ դեռ վայելում են միմյանց ընկերակցությունը:

Հաղորդակցությունը քրիստոսանման կյանքի հիմնական բաղադրիչն է: Առանց այդ կապի, որն արտահայտվում է հավատացյալների հետ ժամանակ անցկացնելով, մենք կկորցնենք շատ առավելություններ:

Օրինակ Պողոսը գրում է, որ մենք կարող ենք միմյանց «քաջալերել և ամրապնդել» (Ա.Թես. 5.11): Եթրայեցիներին ուղղված նամակում նա հորդորում է «հավաքվելը զանց չառնել, այլ միմյանց քաջալերել» (10.25), որովհետեւ երբ մենք միասին ենք, «սիրո ու բարի գործերի կմղենք միմյանց» (Հմ.24):

Որպես Հիսուսին հավատացողներ՝ մենք մեզ պատրաստում ենք հավատարմության ու ծառայության, քանի որ «քաջալերում ենք երկչուններին և համբերատար լինում բոլորի հանդեպ» (Ա.Թես. 5.14): Այդպես ապրելը, բացի մեզ օգնելուց, նաև թույլ կտա վայելելու ճշմարիտ հաղորդակցություն և հետամուտ լինելու «իրար հետ և բոլորի հանդեպ ամեն ժամ բարին գործելուն» (Հմ. 15):

**Աղոթք - Սիրելի՝ Յայր, խնդրում եմ՝ օգնի՛ ինձ լինել ընկերակից՝ քաջալերել ուրիշներին սիրով ու կարեկցությամբ:**

**Յավատացյալների հետ լինելով՝ մենք բարիներ ենք վայելում: Ուրեմն մենք էլ սիրով ու կարեկցությամբ բաջալերենք ուրիշներին:**

Երբ այն աստղը տեսան, շատ ուրախացան: (Մատթ. 2.10)

## ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԱՍԴՐԸ

Հայրս պատերազմի ժամանակ ծառայել էր բանակում և հաճախ էր անհրաժեշտություն ունեցել գիշերը միայն երկնքի լույսով քայլելու: Նա գիտեր բոլոր համաստեղությունների դիրքն ու տեղը, որոնք սովորեցնում էր ինձ ու ասում «Եթե գտնես թեեռային աստղը, միշտ կկարողանաս գտնել տուն տանող ճանապարհը»:

Սուրբ Գիրքը սովորեցնում է կենսական կարևորության մեկ այլ աստղի մասին: «Արևելքի (ներկայիս իրանի ու իրաքի տարածքի) մոգերը» իմաստուններ էին, որոնք հետևում էին երկնքի նշաններին, Նրան, որ պիտի ծնվեր ու դառնար Աստծո թագավորը իր ժողովրդի համար: Նրանք եկան երուսաղեմ և հարցրին. «Որտե՞ղ է հրեաների նոր ծնված թագավորը, որովհետեւ նրա աստղը տեսանք արևելքում ու եկանք նրան երկրպագելու» (Մատթ. 2.2):

Աստղագետները չգիտեն, թե ինչն է եղել Բեթղեհեմի աստղի երևալու պատճառը, բայց Աստվածաշունչը ցույց է տալիս, որ Աստված այն ստեղծեց, որպեսզի աշխարհն ուղղի դեպի Հիսուսը՝ «Առավոտյան փայլող աստղը» (Հայտն. 22.16): Քրիստոսն եկավ փրկելու մեզ մեր մեղքերից և առաջնորդելու դեպի Աստված: Հետեւի՛ր Նրան և կդանես դեպի տուն գնալու ճանապարհը:

**Աղոթք - Տե՛ր Յիսուս, շնորհակալ եմ, որ Դու ես իմ ճանապարհը դեպի հավիտենական տունս՝ դրախտ: Խնդրում եմ՝ օգնի՛ր ինձ այսօր առաջնորդվելու քո լույսով: Ամեն:**

**Գործնականում հետևեն Յիսուսին և անենի ամեն ինչ Նրա սերը ուրիշներին բաժանելու համար:**

Ո՞վ Բեթեհեմ Եփրաթա,.... քեզանից պիտի դուրս գա ինձ համար նա, որ իշխանավոր պիտի լինի Խրայելին: (Միք. 5.2)

## ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ ԽՈՍՏՈՒՄԸ

**1** 962-ի նոյեմբերին բնագետ Զոն Մառուլին ասաց. «Զկա որևէ պատճառ ենթադրելու, թե սովորական տղան կամ աղջիկը չեն կարող դառնալ անհատական համակարգչի վարպետ»: Ժամանակին անսովոր թվացող կանխատեսումն այսօր արդեն ոչ միայն իրականություն է, այլև համակարգչի կամ դրա փոքր տարբերակների օգտագործումը մատչելի է նաև երեխաներին:

Սուրբ գրություններում ավելի կարևոր կանխատեսումներ կան Քրիստոսի գալստյան մասին: Օրինակ Միք. 5.2-ում ասվում է. «Ո՞վ Բեթեհեմ Եփրաթա, փոքր ես Հուդայի տոհմերի մեջ, սակայն քեզանից պիտի դուրս գա ինձ համար նա, որ իշխանավոր պիտի լինի Խրայելին: Եվ նրա ծագումը շատ հին է, հասնում է մինչև հնագույն օրերը»: Աստված Հիսուսին ուղարկեց, որը հասավ Բեթղեհեմ՝ ասելով, թե ինքը Դավիթի թագավորական տոհմից է (տե՛ս Ղուկ. 2. 4-7):

Աստվածաշունչը, որ ճշգրտորեն կանխատեսել էր Հիսուսի առաջին գալուստը, խոստանում է նաև Նրա վերադարձը (Գործք. 1.11): Հիսուսն իր առաջին հետեւորդներին խոստացավ, որ պիտի վերադառնա նրանց համար (Հովհ. 14. 1-4):

Այս Սուրբ Ծնունդին, երբ խորհում ենք Հիսուսի ծննդյան հետ կապված կանխատեսումների ճշմարտացիության մասին, նաև հաշվի առնենք Նրա խոստացած վերադարձը և թույլ տանք, որ նա մեզ պատրաստի այդ փառավոր պահին, երբ պիտի տեսնենք Նրան դեմ առ դեմ:

**Աղոթք -** Յայր, այնքան երախտապարտ եմ Յիսուսի ծննդյան և փրկության առաքելության համար: Շնորհակալ եմ Նրա Վերադարձի խոստման համար: Անեն:

**Ինչու Յիսուսի ծննդյան մասին մարգարեություններն են իրականացել, այնու էլ Նրա վերադառնալու խոստումը կիրականանա:**

Իսկ Մարիամն այդ ամենը պահում էր իր սրտում և մտորում: (Ղուկ. 2.19)

## ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱԶՈՐԻ ՕՐԸ

**Ս**ուրբ Ծննդյան տոնի ուրախության հաջորդ օրը սովորաբար մարգիկ տարբեր պատճառներով հուսախաք են լինում. գիշերը ընկերների հետ անցկացնելուց հետո հոգնած են լինում, մեքենան է խափանված լինում, ստիպված են լինում տաքսիով հասնել տուն, որին խանգարում է ձյունը և այլն: Եվ կարծես այդպես պատահում է բոլորի հետ: Որովհետեւ ծննդյան երգերը շուտով անհետանում են էկրաններից, անցյալ շաբաթ մեր գնած նվերներն այժմ կես գնով են վաճառվում...: Մի խոսքով, Սուրբ Ծննդյան կախարդանքը կարող է շատ արագ ցրվել:

Հիսուսի ծննդյան հաջորդ օրվա մասին ես կարելի է պատկերացնել. թե ինչպես դեպի Բեթղեհեմ քայլելուց, մնալու տեղ փնտրելուց ու չգտնելուց, Մարիամի ծննդաբերությունից ու Հովհաններին առանց նախազգուշացնելու այցելելուց հետո (Ղուկ. 2. 4-18) Մարիամն ու Հովհեփը ուժասպառ էին եղել: Բայց Մարիամն օրորում էր իր նորածին մանկանը: Հավանաբար նա մտածում էր հրեշտակի այցելության (1. 30-33), եղիսաբեթի օրհնության (Հմ. 42-45), իր մանկան համար սահմանված ճակատագրի (Հմ. 46-55) մասին: Մարիամն «այդ ամենը պահում էր իր սրտում և մտորում» (2.19), որ դրանք պետք է թեթևացնեն այդ օրվա հոգնությունն ու Փիզիկական ցավերը:

Բոլորս էլ ունենում ենք «անհանգիստ օրեր», գուցե նաև Սուրբ Ծննդյան հաջորդ օրը: Մարիամի նման եկե՛ք մենք էլ դիմակայենք՝ մտածելով նրա մասին, ով եկավ մեր աշխարհ՝ ընդմիշտ լուսավորելու իր ներկայությամբ:

**Աղոթք - Սիրելի Յիսուս, փառաբանում եմ Ձեզ, որ մտար մեր խավար աշխարհը՝ քո ներկայությամբ հավիտյան լուսավորելու մեր օրերը: Ամեն:**

**Երբ լավ ժամանակ անցկացնելուց հետո անհանգստություն ունենամ, մտածենք այն բաների մասին, որ Յիսուսը բերեց մեր աշխարհ:**

Արդարի պտուղը կյանքի ծառ է, և հոգիներ վաստակողն իմաստուն է: (Առ. 11. 30)

## ԱՍԾՈՒ ԻՍՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԵՐ Է ՓՐԿՈՒՄ

**Փ**ոստատարը, տեսնելով, որ իր շահառուներից մեկի նամակները մնում են փոստարկում, անհանգստացավ: Նա գիտեր, որ տարեց կինը մենակ էր ապրում և սովորաբար ամեն օր վերցնում էր նամակները: Նա իր մտավախությունների մասին հայտնեց կնոջ դրացուն, որն ուներ այդ տան բանալին: Նրանք, մտնելով տուն, կնոջը գտան հատակին ընկած: Չորս օր առաջ նա ընկել էր ու չէր կարողացել օգնություն կանչել: Փոստատարի աշալը ջության ու իմաստուն որոշում կայացնելու չնորհիվ կնոջ կյանքը փրկվեց:

Առակների գիրքն ասում է. «Հոգիներ վաստակողն իմաստուն է» (11. 30): Ճիշտ քայլեր անելուց և Աստծո իմաստության համաձայն ապրելուց բխող խորատեսությունը կարող է օրհնել ոչ միայն մեզ, այլև մեզ հանդիպողներին: Նրա և իր ուղիները պատվելու պառուղը կարող է բարի ու թարմացնող կյանք պարգևել: Իսկ այդ պառուղը նաև հիշեցնում է ուրիշներին բարօրություն անելու կարևորության մասին:

Ինչպես ամբողջ գրքում պնդում է Առակների հեղինակը, իմաստնությունը Աստծուն ապավինելու մեջ է: «Իմաստությունը գոհարներից լավ է, և բոլոր ցանկալի բաները չեն կարող հավասարվել նրան» (8.11):

Աստծո տված իմաստնությունը առաջնորդում է մեզ մեր ողջ կյանքի ընթացքում: Այն կարող է ուղղակի կյանք փրկել հավիտենության համար:

**Աղոթք - Երկնավոր Յայր, խնդրում եմ՝ տուր ինձ իմաստություն՝ հետևելու քո ճամփաներին: Օգնի՛ր ինձ ուշադիր լինել ուրիշների հանդեպ: Անեն:**

**Ասծո ՏՎԱԾ ԻՄԱՍՏՆՈՒԹՅՈՒՆՆ ՕԳՏԱԳՈՐԾԵՆ ՄԵՐ ԿՅԱՆՔԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ և ՈՒՐԻԾՆԵՐԻ ԲԱՐԻՒՄԻ համար:**

Եթե գրավ վերցնես քո հարևանի հագուստը, մինչև արևի մայր մտնելը այն վերադարձո՞ւ նրան: (Ել. 22.26)

## ՅԱՍՆԵԼ ՈՒՐԻՇՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ

**Պ**իկապի հայրը տառապում էր ծանր հոգեկան հիվանդությամբ և տնից հեռացել ու փողոցում էր ապրում: Մինդին ու Ֆիլիպը մի ամբողջ օր փնտրեցին նրան: Իրենց հոր մասին մտածելով՝ նրանք ձեռնարկեցին վերմակներ և ցուրտ եղանակին անհրաժեշտ այլ ծածկոցներ հավաքելու և անտուն մարդկանց բաշխելու գործը: Տասը տարուց ավելի նրանք անում են այդ ծառայությունը և համարում են իրենց կյանքի գործը՝ որպես Աստծո հանդեպ ունեցած խոր հավատի արտահայտություն:

Աստվածածառնչը վաղուց է սովորեցրել կարեկցություն ցուցաբերել թշվառների հանդեպ: Ելք-ում Մովսեսն արձանագրում է մի շարք սկզբունքներ, որոնցով ձեւավորվում են մեր փոխհարաբերությունները կարիքավոր մարդկանց հետ: Եթե մղում ենք ունենում ուրիշների կարիքները հոգալու, պետք չէ «վաշխառութի նման» դրանից շահ կամ օգուտ քաղել (Ել. 22.25): Եթե գրավ վերցնես որևէ մեկի հագուստը, մինչև արևի մայր մտնելը հարկավոր է այն վերադարձնել, որովհետեւ «դա է նրա միակ ծածկոցը և իր մարմնի հանդերձն է դա. ինչո՞վ պիտի պառկի» (Հմ.27):

Խնդրենք Աստծուն, որ բանա մեր աչքերն ու սիրտը, որպեսզի տեսնենք, թե ինչպես կարող ենք մեղմել տառապողների ցավը: Անկախ նրանից՝ ուզում ենք բավարարել մեկ, թե բազում մարդկանց կարիքները:

**Աղոթք - Երկնավոր Յայր, խնդրում եմ՝ բաց աչքերս՝ ուրիշների կարիքները տեսնելու համար: Ամեն:**

**Եթե գիտակցում ենք, որ Աստված հոգում է մեր բոլոր կարիքները, ուրեմն մենք էլ ուստաս լինենք ուրիշների կարիքները հոգալու:**

Երանելի է այն մարդը, որ համբերում է փորձության, որովհետև փորձվելով կստանա կյանքի պատկը: (Հակ. 1.12)

## ԿՅԱՆՔԻ ՊՍԱԿԸ

**S**ամներկու տարեկան Լիաղիանեղ Ռողրիգես-էսպադան մտավախություն ուներ, որ կուշանա 3 կմ վազքի մրցույթից: Այդ պատճառով իր մրցավազքն սկսելուց 15 րոպե շուտ տեղում էր և սկսեց վազել 13 կմ վազքուղու մասնակիցների հետ: Իր սիսալ տեղում հայտնվելը նա զգաց, երբ արդեն 4-րդ կիլոմետրն էր անցնում: Բայց նա չկանգնեց, այլ շարունակեց վազել և իր կիսամարաթոնյան վազքն ավարտեց՝ 2111 մասնակիցների մեջ զբաղեցնելով 1885-րդ տեղը:

Առաջին դարում Հիսուսին հավատացողներից շատերն ուղում էին գուրս գալ Քրիստոսի համար իրենց մզած պայքարից, բայց Հակոբոսը քաջալերեց շարունակել, որովհետև փորձությունները համբերությամբ տանողներին Աստված պարգև էր խոստանում (Հակ. 1.4,12): Նախ «Համբերությունը թող լիովին գործուն լինի, որպեսզի կատարյալ ու լիարժեք լինեք և ոչ մի բանի պակասություն չունենաք» (Հմ.4): Երկրորդ, Աստված նրանց կտա «Կյանքի պսակը» (Հմ.12):՝ Հիսուսով կյանք երկրի վրա և իր ներկայության խոստումը գալիք կյանքում:

Քրիստոնաեական մրցարշավի որոշ օրեր ավելի երկար են թվում, քան մեր սպասածը: Բայց քանի որ Աստված տալիս է այն, ինչ մեզ պետք է, մենք կարող ենք համբերել ու շարունակել ընթացքը:

**Աղոթք -Սիրելի՝ Հայր, ոտքերս հոգնած են, ուզում են հանձնվել:**  
**Խնդրում են՝ զորացրո՛ւ ինձ: Ամեն:**

**Դժվարություններ և անսղասելի նեղություններ կլինեն կյանքում, բայց անհրաժեշտ է տոկալ և հաստատակամ բայլերով շարունակել ընթացքը՝ կտահ լինելով, որ մեզ սղասում է կյանքի դժակը:**

Յայր, փառավորին քո անունը: (Հովհ. 12. 28)

## ԱՆԴԱՆԳԻՍ ՀՈԳԻՆԵՐ, ԱՆԿԵՂԾ ՎՐՈԹՔՆԵՐ

**1** 957թ. հունվարին իր տանը տեղադրված ոռոմբի պայթյունից երեք օր առաջ Մարտին Լութեր Քինդ Կրտսերը մի հանդիպում ունեցավ, որը նշանավորեց նրա ողջ կյանքը: Քաղաքացիական իրավունքների համար պայքարից դուրս գալու մասին սպառնալից հեռախոսազանգ ստանալուց հետո նա մտատանջությունների մեջ ընկավ: Բայց չուտով սկսեց աղոթել. «Ես հանդես եմ գալիս այն բանի համար, ինչը ճիշտ եմ համարում: Հիմա վախենում եմ, որ չեմ կարողանալու միայնակ դիմակայել»: Աղոթքից հետո եկավ լուռ հավաստիացումը. «Միանգամից վախերս անհետացան, անորոշությունը վերացավ: Ես պատրաստ էի դիմակայել ամեն ինչի»:

Հովհաննու 12-ում Հիսուսն ասում է. «Այժմ հոգիս խռովված է» (Հմ.27): Նրա ներքին տրամադրվածությունն անկեղծ էր, բայց նա աստվածակենտրոն էր իր աղոթքում. «Յայր, փառավորին քո անունը» (Հմ. 28):

Որքա՞ն մարդկային է վախի ու անհանգստության զգացումը, երբ մենք Աստծուն պատվելու կամ չպատվելու ընտրության առջև ենք: Կամ երբ իմաստնությունը պահանջում է դժվարին որոշումներ կայացնել հարաբերությունների, սովորությունների կամ կարծրատիպերի վերաբերյալ: Անկախ նրանից, թե ինչ դժվարություն ենք հաղթահարում, երբ համարձակ աղոթքում ենք, նա մեզ տալիս է մեր վախն ու անհանգստությունը թոթափելու և Աստծուն փառք բերող արարք գործելու ուժ:

**Աղոթք** - Յայր, օգնիր ինձ, որ ազնվորեն ու աղոթքով դիմագրավեմ դժվարությունները, որոնք իմ բարիքի և քեզ փառաբանելու համար են: Ամեն:

**Կյանքում մեր դիմագրաված մարտահրավերներն ընդունելով՝ ծգտում ենք աղոթելու: Նոյնը դիմի անեն նման իրավիճակում հայտնվողները:**

Խաղաղության Աստվածը...թող ձեզ ամեն բարի գործի մեջ հաստատ պահի՝ իր կամքը կատարելու, և ձեր մեջ թող կատարի, ինչ որ հաճելի է իր առաջ: (Եբր. 13. 20-21)

## ԱՐԴԱՐ ՔԱՂԱՔԸ

**2** 000 թ. Ամանորի գիշերը Դեմքոյտի պաշտոնյաները բացեցին հարյուր տարեկան պղնձե տուփը, որում պահված էին քաղաքի որոշ ղեկավարների տարբեր հուսադրական կանխատեսումներ, բարգավաճման տեսլականներ: Քաղաքապետի ուղերձը, սակայն այլ մոտեցում էր առաջարկում: Նա գրել էր. «Թող մեզ թույլ տրվի արտահայտել մեկ հույս, որ ամենաբարձրն է. որպես ազգ, ժողովուրդ և քաղաք՝ արդարությամբ աճենք: Որովհետեւ սա է, որ բարձրացնում է ազգը»:

Հաջողությունից, երջանկությունից կամ խաղաղությունից ավելի քաղաքապետը մաղթել էր, որ ապագա քաղաքացիները մեծանան այն հավատամքով, թե ինչ է նշանակում լինել արդար և ուղղամիտ: Եվ օրինակը վերցնելով Հիսուսից՝ նա օրհնել էր նրանց, ովքեր երազում էին իր արդարությունը (Մատթ.5.6):

Փառք Աստծո, որ աճելու համար միայն մեր ուժին ու ջանքերին չենք ապավինելու: Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակն ասում է. «Խաղաղության Աստվածը...թող ձեզ ամեն բարի գործի մեջ հաստատ պահի՝ իր կամքը կատարելու, և ձեր մեջ թող կատարի, ինչ որ հաճելի է իր առաջ» (Եբր. 13. 20-21): Մենք, որ Քրիստոսի մեջ ենք, հավատալով նրան՝ սրբանում ենք նրա արյունով (Հմ.12), բայց նա մեր ողջ կյանքի ընթացքում գործնականում մեր սրտերում աճեցնում է արդարության պտուղը: Մենք հաճախ սայթաքում ենք, բայց անհամբեր սպասում ենք այն «գալիք քաղաքին», ուր թագավորում է Աստծո արդարությունը (Հմ.14):

**Աղոթք - Սիրելի՛ Յայր, աշխատի՛ իմ մեջ, ինչպես որ հաճելի է քեզ: Ամեն:**

**Մեր մեջ եղած Իիսոնեական հատկանիւներով ոիսի  
կարողանանք բազալերել ուրիշներին, որ վնասեն Աստծո  
արդարությունը:**



## ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

Ազդել ուրիշների վրա.....	Հոկ. 12
Աղոթք.....	Հոկ. 19, Հոյ. 10, 13, դեկ. 30
Անձկություն.....	Հոկ. 10
Աշակերտել.....	Նոյ. 1, 8, 15, 22
Առաջնորդություն.....	Հոկ. 27
Աստված ամենագետ է.....	դեկ. 20
Աստծու ընտանիքը.....	Հոկ. 12, 31, դեկ. 23
Աստծու խոստումները.....	դեկ. 18
Աստծու հավատարմությունը.....	դեկ. 18
Աստծու մեծարումը.....	Նոյ. 11
Աստծու նկարագիրը.....	Հոկ. 30, 31, Նոյ. 14, դեկ. 5, 12, 20
Աստծու սերը.....	Հոկ. 26, Նոյ. 4, 5, 14, 21, 24, դեկ. 5, 10, 11, 13
Աստծուն սպասել.....	դեկ. 13
Աստծուն վստահել.....	Հոկ. 13, 19, 20, 29, Նոյ. 31, դեկ. 4, 5, 12, 18
Արդարություն.....	Հոկ. 30
Ավետարանչություն.....	Հոկ. 14, Նոյ. 20
Բազմամշակութային ազգ.....	Հոկ. 25, դեկ. 1, 8, 15, 22
Բախում.....	Նոյ. 18
Գութ.....	Հոկ. 30
Եկեղեցու մասնակցություն.....	դեկ. 2, 9, 16, 23
Եկեղեցական միություն.....	դեկ. 1
Ընկճածություն.....	Հոկ. 10, 24
Ընտանեկան հարաբերություններ.....	դեկ. 21
Խմաստություն.....	Հոկ. 1, 8, 15, 22, դեկ. 17, 27
Խորհրդատվություն.....	Հոկ. 6
Ծառայել.....	Հոկ. 6, 18, 24, Նոյ. 6, 27, դեկ. 28
Կռապաշտություն.....	Նոյ. 11
Համայնք.....	դեկ. 23



Հավատք	նոյ. 12
Հոգեսոր աճ	նոյ. 17, 18, 25, դեկ. 2, 14, 29, 31
Հույս	հոկ. 5, 7, 17, նոյ. 3, 20, 29, դեկ. 5, 21
Մատակարարություն	հոկ. 18, նոյ. 26, դեկ. 7
Մարդու մահը	դեկ. 4
Մեղք	նոյ. 7
Մեղքերի թողություն	դեկ. 19, 20
Մենակություն	դեկ. 17
Մտահոգություն	դեկ. 18
Մտային հիվանդություն	հոկ. 10
Ներել ուրիշներին	նոյ. 10
Շնորհակալություն	նոյ. 23, 26
Որոշում կայացնել	հոկ. 7
Պաշտամունք	հոկ. 11, նոյ. 2, 9, 16, 24
Սեր ուրիշների հանդեպ	հոկ. 12, 18, 30, նոյ. 3, 10, 18, 28, դեկ. 2, 21, 23, 28
Վախճանաբանություն	հոկ. 3, դեկ. 25
Վիշտ	դեկ. 4
Տառապանք	հոկ. 7, 20, 26, նոյ. 29, դեկ. 4, 5, 21
Քաղաքացիություն	դեկ. 22
Քաջալերություն	հոկ. 11, 19, դեկ. 2, 23, 26
Քրիստոս՝ ամձ/գութ	հոկ. 21, դեկ. 26
Քրիստոսի ծնունդը	դեկ. 24, 25, 26
Քրիստոսի կյանքն ու ուսուցումը	հոկ. 19, 28
Քրիստոսի մարգարեղությունների վերաբերյալ	դեկ. 25
Քրիստոսը՝ Փրկիչ	դեկ. 6, 11
Քրիստոսի հետ միություն	նոյ. 25, դեկ. 22, 29
Քրիստոսի համար ապրել	նոյ. 12, 20
Քրիստոսի նման ապրել	հոկ. 24, 27, նոյ. 3, 23
Քրիստոսի հետ նույնանալ	հոկ. 2, 9, 16, 23
Փրկություն	հոկ. 4, 14, 25, 28, նոյ. 7, 17, դեկ. 3



## Կարևոր ազդ

Հարգելի՝ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս  
գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները  
գրել ներքեսի կտրոնի վրա և ուղարկել հետեւյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռախոս՝ +374 10 54 3 576, +374 10 54 35 78

Էլֆոստ՝ amaa.armenia@amaa.am

Կայքէջ՝ [www.amaa.am](http://www.amaa.am)

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7<sup>ա</sup>

Հեռ. +374 47 945 275

---

Անուն, ազգանուն .....

Հասցե.....

Հեռախոս.....

---